ՏԱՐԵԳՐՔ
2016

ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ ԵՐԿՐՈՐԴԻ
ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀՐԱՄԱՆԱՒ ԱՐԱՐԱՏԵԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԱԿԱՆ
ՓԱԽԱՆՈՐԴ Տ. ՆԱՒԱՍԱՐԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՃՈՅԵԱՆԻ

ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄ

Արարատյան Հայրապետական թեմը կազմավորվել է 4-րդ դարի սկզբին՝ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակվելուց հետո, երբ Ս. Գրիգոր Լուսավորիչը ձևավորեց Հայ Առաքելական Եկեղեցու նվիրապետական կառույցները: 449թ. տեղի ունեցած Արտաշատի հայտնի ժողովում կաթողիկոս Հովսեփ Հողոցմեցին (441-451թթ.) Եղիշեի կողմից անվանվում է «Եպիսկոպոս Այրարատի»: Այս կարգը պահպանվել է դարերի ընթացքում: Արարատյան թեմն այսօր էլ կրում է «Հայրապետական» անվանումը և, կաթողիկոսական թեմ լինելով, անմիջականորեն կառավարվում է առաջնորդական փոխանորդի կողմից, ում նշանակում է Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

1999թ. դեկտեմբերի 1-ից թեմի առաջնորդական փոխանորդն է Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը:
Ներկայումս Արարատյան Հայրապետական թեմն ընդգրկում է Երևան քաղաքը և Արարատի մարզը: 2016 թվականի դրությամբ թեմի տարածքում գործում է 33 եկեղեցի, 10 մատուռ, 35 ծուխ: Երևանում գործում է 16 եկեղեցի, 8 մատուռ: Հոգևոր ծառայություն է մատուցում 30 քահանա: Արարատի մարզում գործում է 17 եկեղեցի, 2 մատուռ: Մարզում հոգևոր ծառայություն է մատուցում 19 քահանա:
Ընդհանուր առմամբ թեմում հոգևոր ծառայություն է մատուցում 48 հոգևորական՝ ներառյալ առաջնորդական փոխանորդը :
2016թ.-ին Արարատյան Հայրապետական թեմում կատարվել է

- 2802 պսակ
- 9844 մկրտություն

Լինելով ազգային՝ Հայ Եկեղեցին և ի մասնավորի՝ Արարատյան Հայրապետական թեմը կարևորում է ազգային գիտակցության և ավանդույթների զարթոնքն ու նորովի մատուցումը: Հովվական խնամքի, հոգևոր քարոզչության, սոցիալական ու կրթական առաքելությունն արդյունավետ և համակարգված իրականացնելու համար թեմում ձևավորվել են մի շարք կառույցներ՝

1. Քրիստոնեական դաստիարակության կենտրոն
2. Ցերեկային կենտրոն
3. Հայ Եկեղեցասեր Երիտասարդաց միություն կրթադաստիարակչական կենտրոն
4. Խուլերի համայնք
5. Միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների հետ կապի գրասենյակ
6. Օնողազուրկ երեխաների բարեգործական գրասենյակ
7. Տեղեկատվական բաժին՝էլեկտրոնային քարոզչության գրասենյակով, qahana.am կայքով ու սոցիալական ցանցերում գործող էջերով, «Շողակն Արարատյան» և «Մանանա» ռադիոհաղորդումներով
8. «Շողակն Արարատյան» երկշաբաթաթերթ
9. Գրադարան
10. Երիտասարդաց միություններ
11. Տիկնանց միություններ
12. Կիրակնօրյա դպրոցներ
13. «Շողակաթ» հոգևոր գրախանութ:

ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻ

Տ.Պետրոս ավագ քհն. Մալյան

Տ.Շահե քհն. Հայրապետյան

Տ.Անուշավան քհն. Կոշեցյան

Տ.Եսայի քհն. Արքենյան

ՍՈՒՐԲ ՁՈՐԱՎՈՐ ԵԿԵՂԵՑԻ

Տ.Գրիգոր քհն. Գրիգորյան

Տ.Հայկազուն քհն. Մկրտչյան

Տ.Վահան քհն. Առաքելյան

ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑԻ

Տ.Տիրայր ավագ քհն. Սահրադյան

Տ.Ավետիս ավագ քհն. Դանիելյան

Տ.Դանիել քհն. Բաղումյան

ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻ
/Նորագավիթ/

Տ.Վարդան քհն. Գափոյան

Տ.Մյուռոն ավագ քհն. Ադամյան

ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ
/Մալաթիա/

Տ.Տիրան ավագ քհն. Առուշանյան

Տ.Գաբրիել քհն. Պետրոսյան

ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ
/Նորք-Մարաշ/

Տ.Զաքարիա քհն. Ավետիսյան

Տ.Զգոն քհն. Աբրահամյան

Տ.Թովմա քհն. Անդրեասյան

ՍՈՒՐԲ ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑԻ

Տ.Զենոն քհն. Բարսեղյան

Տ.Արսեն քհն. Սարոյան

ՍՈՒՐԲ ՀԱԿՈԲ ԵԿԵՂԵՑԻ
/Քանաքեռ/

Տ.Բարսեղ ավագ քհն. Ղազարյան

ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻ
/Նոր Նորք/

Տ.Նորայր ավագ քհն. Բաղդասարյան

Տ.Վարդան ավագ քհն. Մկրտչյան

Տ.Կարապետ քհն. Կարապետյան

ՍՐԲՈՑ ՆԱՀԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑԻ
/Դավթաշեն/

Տ.Խորեն քհն. Մարուքյան

ՍՈՒՐԲ ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻ /Ներքին Չարբախ/

Տ.Մկրտիչ ավագ քհն. Թովմասյան

ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑԻ /ՀԱԹ/

Տ.Պարթև քհն. Մուրադյան

Տ.Կորյուն ավագ քհն. Մարտիրոսյան

ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ /Ավան/

Տ.Հարություն քհն. Ավագյան

ԱՐԱԲԿԻՐ ՀԱՄԱՅՆՔ

Տ.Բաբկեն քհն. Հայրապետյան

ԷՐԵԲՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ

Տ.Զգոն քհն. Աբրահամյան

ՍՐԲՈՑ ՆԱՀԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑԻ /Նուբարաշեն/

Տ.Շմավոն քհն. Ղևոնդյան

ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՆԱՀԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑԻ
/Եռաբլուր/

Տ.Բաբկեն քհն. Հայրապետյան

ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ
/Նոր Նորքի 1-ին զ./

Տ.Նշան քհն. Ալավերդյան

ՍՈՒՐԲ ՀԱԿՈԲ ԵԿԵՂԵՑԻ
/Մրգավան/

Տ.Պարգև քհն. Պալգէորգեան

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻ
/Բյուրավան/

Տ.Ղազար քհն. Պետրոսյան

ՍՈՒՐԲ ՀԱԿՈԲ ԵԿԵՂԵՑԻ
/Արարատ/

Տ.Դավիթ քհն. Սահակյան

Տ.Եզնիկ քհն. Մալխասյան

ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻ
/Արգավանդ/

Տ.Գրիգոր քհն. Հովհաննիսյան

ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ
/Վերին Արտաշատ/

Տ.Մխիթար քհն. Ալոյան

ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԵԿԵՂԵՑԻ
/Ներքին Դվին/

Տ. Եղիշե քհն. Նուրիջանյան

Տ.Թադեոս քհն. Թադևոսյան

ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ
/Վեդի/

Տ.Հովակիմ քհն. Հարությունյան

ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻ
/Մարմարաշեն/

Տ.Թաքուլ քհն. Գասպարյան

Տ.Ղուկաս քհն. Բալայան

ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ
/Դալար/

Տ.Եփրեմ քհն. Հարությունյան

ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ
/Արևշատ/

Տ.Հովսեփ քհն. Սարգսյան

ՍՈՒՐԲ ԹԱԴԵՈՍ ԵԿԵՂԵՑԻ
/Մասիս/

Տ.Արարատ քհն. Օրդոյան

ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻ
/Կանաչուտ/

Տ.Դավիթ քհն. Կյուրեղյան

ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ
/Շահումյան/

Տ.Դերենիկ քհն. Միքայելյան

ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑԻ
/Մասիս/

Տ.Աշոտ քհն. Սաֆարյան

ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑԻ
/Մխչյան/

Տ.Միքայել քհն. Նուրիջանյան

ԱՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ
/Նորաբաց/

Տ.Մարտիրոս ավագ քհն. Ավետիսյան

ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑԻ
/Արտաշատ/

Տ.Թաքուլ քհն. Գասպարյան

Տ. Երվանդ քհն. Բաբայան

Արարատյան Հայրապետական թեմում հաշվետու ժամանակահատվածում օծվել է՝

1. Արարատյան Հայրապետական թեմի Մրգավան համայնքի եկեղեցու հիմքերը՝ ձեռամբ Արմավիրի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Սիոն եպիսկոպոս Ադամյանի:
2. Արարատյան Հայրապետական թեմի Մասիսի Ս. Թադեոս եկեղեցու բակում տեղադրված խաչքարը՝ առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարադ արքեպիսկոպոս Կճոյանի ձեռամբ:
3. Արարատյան Հայրապետական թեմի Նուբարաշենի Ս. Նահատակաց եկեղեցու բակում տեղադրված երկու խաչքարերը՝ առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի ձեռամբ :
4. Արարատյան Հայրապետական թեմի Շաղափ համայնքի Ս. Ամենափրկիչ մատուռը՝ Արմավիրի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Սիոն եպիսկոպոս Ադամյանի ձեռամբ:

Թեմական կյանք

Արարատյան Հայրապետական թեմի բոլոր եկեղեցիներն առաջնորդվում են ծխական համայնքի ձևավորման հստակ առաքելությամբ, որը հովվական գործունեության հիմնական նպատակներից է: Որևէ քաղաքում, գյուղում կամ վարչական շրջանում գործող եկեղեցու համայնքը տվյալ բնակավայրի բնակիչներն են, ովքեր, անկախ իրենց կրոնական ընկալումներից, ավանդաբար համարվում են տվյալ եկեղեցու համայնքի անդամ: Համայնքի անդամներից հավաքագրվում է եկեղեցու ծուխը: Ծխական համայնքի կազմակերպումը հոգևոր հովվի առաջնորդությամբ՝ տվյալ եկեղեցու հավատացյալների հոգևոր միությունն է, որը հաստատվում է սիրով և ծառայելու պատրաստակամությամբ:
Ծխական համայնքներից զատ Արարատյան Հայրապետական թեմում գործում են մի շարք կառույցներ, որոնք համակարգում և նպաստում են սոցիալական, համայնքային, կրթական, հովվական ու քարոզչական գործունեությանը:

Արարատյան Հայրապետական թեմում գործող կառույցներ

- **Բարեգործական ծրագրերի բաժինը** համակարգում է թեմական ու համայնքային բարեգործական ծրագրերը, կազմակերպում է սոցիալական բազմաթիվ միջոցառումներ, համագործակցում է տեղի ու միջազգային կառույցների հետ:

- **Ծնողազուրկ երեխաների օգնության գրասենյակը** նյութական օգնություն է տրամադրում թեմի տարածքում (Երևան և շրջակայք) մշտապես ապրող մինչև 18 տարեկան միակողմանի կամ երկկողմանի ծնողազուրկ շուրջ 13.000 երեխաների:

- **Տեղեկատվան բաժինն** իրականացնում է տեղեկատվական գործառույթներ՝ հասարակության զանազան շրջանակներին հոգևոր արժեքների, եկեղեցական գործունեության մասին իրազեկելու նպատակով: Տեղեկատվական ու քարոզչական աշխատանքն ամբողջովին արտացոլվում է թեմի պաշտոնական կայքում՝ www.qahana.am, և սոցիալական ցանցերում՝ Ֆեյսբուքյան՝ Qahana.am, Instagram՝ ԱՀԹ տեղեկատվական բաժին; Twitter՝ Արարատյան թեմ : Հաշվետու տարում www.qahana.am կայքում գրանցվել է 572,030 այցելություն, 1.484.212 էջի դիտում: Ընդհանուր առմամբ կայք են այցելել 268,266 օգտատերեր, որոնցից 45,4%-ը առաջին անգամ: Տեղեկատվական բաժնում գործում են երկու **ռադիոծրագրեր**՝ «Շողակն Արարատյան» և «Մանանա» մանկական հաղորդումները, որոնք հեռարձակվում են Հայաստանի Հանրային ռադիոյով: Արարատյան Հայրապետական թեմն ունի **նաև «Շողակն Արարատյան» պաշտոնական երկշաբաթաթերթը**:Հաշվետու տարում լույս է տեսել «Շաղակն Արարատյան» երկշաբաթաթերթի 22 համար, յուրաքանչյուրը 1000 հատ տպաքանակով: Յուրաքանչյուր համարի համար միջինում վճարվել է 100,000 դրամ հոնորար:

- **ԱՀԹ կրթադաստիարակչական կենտրոնում** կազմակերպվում են համակարգչային, սրբանկարչության, մանրանկարչության և բատիկի դասընթացներ:

- **Քրիստոնեական դաստիարակության կենտրոնը** համակարգում է թեմի կիրակնօրյա դպրոցների գործունեությունը՝ վերահսկելով հիշյալ կրթօջախների ուսումնական պրոցեսը:

- **Գրադարանը** հոգևոր գրականությունից բացի ունի պատմական, աշխարհագրական, գրական-գեղարվեստական, ինչպես նաև՝ արվեստագիտական, ճարտարապետական, մատենագիտական- տեղեկատվական գրականություն:

Հաշվետու տարում ԱՀԹ գրադարանը համալրվել է 530 միավոր գրքով և մամուլով, որից՝

  - 190 միավոր հայալեզու
  - 51 միավոր ռուսերեն
  - 44 միավոր անգլերեն

- 245 միավոր Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի ֆոնդ:

Ընթերցողների թիվը 2016-ին ավելացել է 24-ով, ընդհանուր՝ 532:

- **Թեմի երիտասարդական կառույցը երիտասարդական հոգևոր խորհուրդի** միջոցով համակարգում է համայնքներում գործող երիտասարդաց միությունների աշխատանքը, իրականացնում է սոցիալական ու քարոզչական ծրագրեր:
- **Ցերեկային կենտրոնի** նպատակն է նվազեցնել Երևանում և մերձակա շրջաններում բնակվող ՄԻԱՎ-ով ապրող և ներարկային թմրամիջոցներ օգտագործող մարդկանց և նրանց ընտանիքների անդամների սոցիալական մեկուսացումը և նպաստել նրանց ինտեգրմանը, սոցիալական վիճակի բարելավմանը, հոգևոր արժեքների ձեռքբերմանը:Հաշվետու տարում ցերեկային կենտրոնում գրանցված շահառուների թիվը դարձել է 360: Կենտրոնում իրականացվել է 43 քարոզ, տնայցեր, անհատական խորհրդատվություններ: Կենտրոնում գործել է խեցեգործության խմբակ:
- **Խուլերի համայնքն** ունի հիսուն անդամ, երկու թարգմանիչ: Խուլերի համար ամեն շաբաթ կազմակերպվում են Աստվածաշնչի սերտողության և երկլեզու ուսուցման դասընթացներ: Գործում է մնջախաղի «Մենք» թատրոն–ստուդիան: Առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցում բոլոր Ս. Պատարագները թարգմանվում են ժեստերի լեզվով:
- **Սիրիահայ համայնք:** 2012թ.-ից Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի օրհնությամբ Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցում ակտիվ գործունեություն է ծավալում սիրիահայերի համայնքը: Ամեն շաբաթ կազմակերպվում է քարոզխոսություն նաև արևմտահայերենով:
- **«Կանա» քրիստոնեական կրթական կենտրոնը** տարիքային տարբեր խմբերի համար կազմակերպում է հոգևոր, կրթական դասընթացներ: Դրանք վարում են հոգևորականներ ու տարբեր բնագավառների մասնագետներ:

Արարատյան Հայրապետական թեմի ծխական համայնքներում գործող կառույցները

- **Ծխական խորհուրդը,** որը համայնքի գործադիր վարչական մարմինն է՝ հոգևոր հովվի նախագահությամբ, որի նպատակն է աջակցել եկեղեցու հոգևորականներին հովվական գործունեության մեջ և օժանդակել եկեղեցու համայնքի ձևավորմանն ու ծխի կայացմանը: Ծխական խորհուրդն ընտրվում է ծխի անդամներից:
- **Տիկնանց միությունը,** որն իր անփոխարինելի տեղն ունի եկեղեցական-համայնքային կյանքում: Մայրական հոգատարությամբ տիկնանց միության ներկայացուցիչները մասնակցում են եկեղեցու սոցիալական ծրագրերին, կազմակերպում բարեգործական միջոցառումներ, այցելություններ ծերանոց, մանկատուն, համայնքի միայնակ ծերերին: Եկեղեցին մեծ ընտանիք է, որտեղ մոր առաքելությունը վստահված է Տիկնանց միության անդամներին
- **Երիտասարդաց միությունը,** որի առաքելությունն է կրթել երիտասարդներին՝ համախմբելով նրանց ազգային ու հոգևոր արժեքների շուրջ: Այն հատուկ կարևորվում է նաև երիտասարդների շնորհների բացահայտումն ու ինքնահաստատումը հասարակական կյանքում
- **Կիրակնօրյա դպրոցը,** որի առաքելությունն է դաստիարակել քրիստոնեական բարձր նկարագիր ունեցող սերունդ: Քանի որ երեխաների ազգային-եկեղեցական կրթությունը մեր ինքնության, ազգային ու հոգևոր արժեքների զորացման գրավականն է:

Հոգևոր-քարոզչական ծրագրեր

- **Հսկման կարգ և քարոզխոսություն**

  ԱՀԹ բոլոր եկեղեցիներում 2016 թվականին, ամեն երեքշաբթի, չորեքշաբթի կամ ուրբաթ կազմակերպվել է Հսկման կարգ և քարոզխոսություն.

- **Հոգևոր զրույցներ և քարոզներ**

  ԱՀԹ բոլոր եկեղեցիներում, 2016 թվականին, կազմակերպվել են հոգևոր զրույց ներ և դասընթացներ, որոնց մասնակցել են մոտ 41950 հավատացյալ:

- **Հոգևոր երգերի ուսուցում,** որին մասնակցել է 1819 հավատացյալ.

- **«ԿԱՆԱ» քրիստոնեական կրթական կենտրոն -** կազմակերպել է մանկական քրիստոնեական, Ս. Մկրտության, Ս. Պսակին պատրաստվող անձանց համար դասընթացներներ: Մասնակիցների ընդհանուր թիվը՝ 300:

- **Բանախոսություններ**

  1. **«Առաջնորդարան» երիտասարդական դպրոց (ծրագիր) -** երկամսյա դասընթաց, կազմակերպվել են դասախոսություններ, քննարկումներ, հայտնի գործիչների հետ հանդիպումներ ու խմբային ծրագրեր:

  2. **«Հայ եկեղեցին և լրատվամիջոցները» խորագրով սեմինար** - Եռամսյա սեմինարն իրականացվում է ԵՊՀ Ժուռնալիստիկայի ֆակուլտետի հետ համագործակցության շրջանակներում և նպատակ ունի օգնել ապագա լրագրողներին ծանոթանալ Հայ Եկեղեցու առանձնահատկություններին, հոգևոր-եկեղեցական եզրերին, որոնք շատ հաճախ լրատվության մեջ սխալ են մեկնաբանվում:

- **Ուխտագնացություններ**

  Արարատյան Հայրապետական թեմում հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է՝

  ա. Դեպի Հայաստանի սրբավայրերը՝ թվով 231 ուխտագնացություն, որոնց մասնակցել է 8824 հավատացյալ.

  բ. Դեպի Երուսաղեմ՝ 5 ուխտագնացություն.

  գ. Դեպի Արևմտյան Հայաստան՝ 1 ուխտագնացություն:

- **Հովվական այցելություններ**

  Հաշվետու ժամանակահատվածում Արարատյան Հայարապետական թեմի հոգևոր-քարոզչական գործունեության շրջանակներում ԱՀԹ քահանաները այցելել են ավելի քան 95 դպրոց, տասնյակ մանկապարտեզներ, ուսումնական և մշակութային կենտրոններ:

  Թեմի համայնքներում հովվական գործունեության ամենակարևոր հանգրվաններից են դպրոցները: Հոգևոր և ազգային տոների առթիվ թեմի քահանա հայրերը ոչ

միայն մասնակցել են կազմակերպված միջոցառումներին, այլև իրենք են նախաձեռնել բազմաթիվ միջոցառումներ գրեթե բոլոր համայնքներում:

Դպրոցներում կազմակերպվել են

1. Ցուցահանդեսներ

2. Գրաբարի օլիմպիադա

3. Հոգևոր զրույցներ

4. Տնօրինեքներ

5. Ազգային և եկեղեցական տոներին նվիրված միջոցառումներ

Սոցիալական ծրագրեր

2016թ. Արարատյան Հայարապետական թեմի կողմից իրականացված բարեգործական ծրագրերի արդյունքում օգնություն են ստացել (հագուստ, հիգիենայի պարագաներ, կոշիկ, դպրոցական պարագաներ, ծածկոցներ, պամպերսներ, խաչեր, սնունդ, խաղալիքներ, կոշիկ, հոգևոր գրականություն) բազմազավակ, միայնակ, հաշնադամ, ծնողազուրկ և կարիքավոր մոտ 2500 շահառու:

ա. Սոցիալական ծրագրերի իրականացման ընթացքում թեմը համագործակցել է միջազգային և տեղական հասարակական կառույցների ու անհատ բարերարների հետ.

1. World Vision Armenia
2. Armenian Round Table of WCC
3. ARCS
4. «ՍԿԻԶԲ» խոցելի խմբերի աջակցության ՀԿ
5. «Յուրա Գևորգյան» բարեգործական հիմնադրամ

բ. Բազմակողմանի աջակցություն է ցուցաբերվել հետևյալ կազմակերպություններին

1. Երևանի տեսողական խանգարումներ ունեցող երեխաների Ն. Տիգրանյանի անվան թիվ 14 հատուկ դպրոց
2. «Խարբերդի հատուկ մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ
3. Հաշմանդամ երեխաների Ավանի ցերեկային կենտրոն
4. Երևանի խնամքի և պաշտպանության թիվ 2 գիշերօթիկ հաստատություն
5. Երևանի «Մանկան տուն» ՊՈԱԿ
6. Նորքի թիվ 17 հատուկ դպրոց
7. «Առաքելություն Հայաստան» բարեգործական ճաշարան
8. Երևանի թիվ 117 մանկապարտեզ
9. Երևանի թիվ 141 գիշերօթիկ մանկապարտեզ
10. Նոր Նորքի հատուկ գիշերօթիկ դպրոց
11. Ս.Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն
12. «Առաքելություն Հայաստան» Մասիսի ցերեկային կենտրոն
13. ՀՕՖ «Երեխաների աջակցության կենտրոն»
14. Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն
15. «Զեյթուն» հաշմանդամ երեխաների ծնողների ՀԿ
16. «Լույսի Աստղ» հաշմանդամ երեխաների ծնողների ՀԿ

17. «Զոհված ազատամարտիկների մայրերի խորհուրդ»ՀԿ
18. «Նոր Նորքի հաշմանդամների ընկերություն»
19. «Էրեբունու համայնքի զոհված ազատամարտիկների ընտանիքներ» ընկերություն
20. «Մարիամ» հաշմանդամ երեխաների ծնողների ՀԿ
21. «Տաթև» հաշմանդամ երեխաների ծնողների ՀԿ
22. «Լուսաշող» հաշմանդամ երեխաների ծնողների ՀԿ
23. «Հուսաստղ» հաշմանդամ երեխաների ծնողների ՀԿ
24. «ԱԳՆԱ» հաշմանդամների բարեգործական կազմակերպություն
25. Արաբկիր համայնքի հաշմանդամների ընկերություն
26. «Ալեքս» ՀԿ
27. «Հավատ և սեր» ԲՀԿ
28. «Աջափնյակի կանանց տարածաշրջանային ասոցիացիա»ՀԿ
29. «Աստղաթև» ՀԿ

գ. «Մենք մեր զինվորի կողքին ենք» ծրագիր

Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի նախաձեռնությամբ Ս. Սարգիս զորավարի տոնի առթիվ 2016թ. կազմակերպվել է դրամահավաք, որի ընթացքում հանգանակվել է 50.000.000 (հիսուն միլիոն) ՀՀ դրամ: Հանգանակված գումարը փոխանցվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի սոցիալական բաժնի հաշվեհամարին, այնուհետև, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությամբ այն ուղղվել է ԱՀԹ 2016թ. «Մենք մեր զինվորի կողքին ենք» բարեգործական ծրագրի իրականացմանը: Ծրագրի շրջանակներում դրամական օգնությունը բաշխվել է ՀՀ-ում և Արցախում հաշվառված

1. 2015թ. հունիսի 1-ից մինչև 2016թ. ապրիլի 1-ը մարտական հերթապահության ժամանակ զոհված պարտադիր ժամկետային և պայմանագրային զինծառայողների ընտանիքներին՝ թվով 30 (24-ը՝ ՀՀ-ից, 6-ը՝ ԼՂՀ-ից):

2. ԼՂՀ պաշտպանության գոտում 2016թ. ապրիլ ամսին մարտական գործողությունների ժամանակ, ինչպես նաև հրադադարի խախտման հետևանքով զոհված պարտադիր ժամկետային և պայմանագրային զինծառայողների ընտանիքներին՝ թվով 70 (54-ը ՀՀ-ից, 16-ը՝ԼՂՀ-ից):

Ընդհանուր թվով ցուցակներում ընդգրկված 100 զոհված զինծառայողի ընտանիքներից յուրաքանչյուրին տրամադրվել է 500.000-ական (հինգ հարյուր հազարական) ՀՀ դրամ:

դ. Աջակցություն Արցախին

Ապրիլյան պատերազմի օրերին կազմակերպվել և Արցախի առաջնագիծ է կատարվել 11 այցելություն: Սահման է տարվել մոտ 33 տոննա օգնություն (45 մլն. դրամի սահմաններում)՝ սննդի, հիգիենայի պարագաների, հագուստի, դեղորայքի և բժշկական պարագաների, անվադողերի, հեռադիտակների, գիշերային դիտման սարքերի, առաջին անհրաժեշտության տարբեր իրերի տեսքով:

ե. Տնայցեր

Մարդասիրական ծրագրերի կարևոր մասն են կազմել տնայցերը: 82 այցելություն է իրականացվել բազմազավակ և անապահով ընտանիքների, հաշմանդամների, միայնակ ծերերի բնակարաններ:

զ. Ծնողազուրկ երեխաների օգնության գրասենյակ

2016թ. «Ծնողազուրկ երեխաների օգնության հիմնադրամին» կատարված նվիրատվությունները կազմում են 177023 ԱՄՆ դոլար:

2016թ. ծնողազուրկ երեխաների նպաստների հատկացման ընդհանուր գումարը կազմել է 141790.00, որը բաշխվել է 551 ընտանիքների պատկանող 835 ծնողազուրկ երեխաների, այդ թվում՝

- Երկկողմանի որբ (հայրն ու մայրը մահացած) – 41 երեխա:
- Բազմազավակ (ընտանիքում 4 եւ ավելի երեխաներ) - 62 երեխա:

Թեմապատկան կառույցների տեղեկագիր

Տիկնանց միություն

Թեմում գործում է 5 տիկնանց միություն՝ թվով 60 անդամ (Ս. Երրորդություն, Ս. Զորավոր, Մալաքիայի Ս. Աստվածածին , Վեդիի Ս. Աստվածածին, Բյուրավանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիներում): Տիկնանց միությունները կազմակերպում են.

1. Ուխտագնացություններ
2. Հոգևոր զրույցներ
3. Այցելություններ ծերանոց, մանկատուն, միայնակ ծերեր:

Երիտասարդաց միություններ

Թեմի եկեղեցիներում գործում է 25 երիտասարդաց միություն՝ 320 անդամով: Երիտասարդաց միությունների հետ կազմակերպվում են.

1. Աստվածաշնչի սերտողություններ
2. Հոգևոր զրույցներ
3. Ազգային–եկեղեցական տոների առթիվ միջոցառումներ
4. Ուխտագնացություններ
5. Խաչերթեր
6. Սոցիլական ծրագրեր:

Կիրակնօրյա դպրոց

Թեմում գործում է 14 կիրակնօրյա դպրոց՝ 1073 աշակերտներով: Դպրոցներում դասավանդում է 17 ուսուցիչ: Կիրակնօրյա դպրոցներում գործում են նաև խմբակներ՝

- Նկարչության
- Պարի
- Սպորտի
- Ուլունքագործության

- Ասեղնագործության
- Ցելոֆանագործության
- Հայոց լեզվի
- Անգլերենի

ԱՀԹ կրթադաստիարակչական կենտրոն

- Համակարգչի դասընթացներ
- Սրբանկարչության և մանրանկարչության դասընթացներ
- Բատիկի դասընթացներ
- Ցուցահանդեսներ

  ա. 21.05.16 - Սրբապատկերի և մանրանկարի ցուցահանդես Չարենցի անվան տուն-թանգարանում:

  բ. 12.17.16 - Սրբապատկերի, մանրանկարի և բատիկի ցուցահանդես առաջնորդարանում:

Արարատյան Հայրապետական թեմում 2016 թվականին հրատարակվել են.

1. **«Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու յոթ խորհուրդները» և «Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու տաղավար տոները»:**

Կազմեց Տ. Զենոն քահանա Բարսեղյանը

2. **«Զորավոր Ավետարանը»**

Կազմեցին Արսեն Հարությունյանը, Արփինե Սիմոնյանը

3. **«Ապաքինման այբուբեն»: Թմրամոլների և ալկոհոլամոլների մայրերին և կանանց**

Եկատերինա Սավինա

4. **«Հայոց Եկեղեցին»**

Մաղաքիա Արքեպիսկոպոս Օրմանյան

Քրիստոս Ծնաւ եւ Յայտնեցաւ

«Ահա կոյս յղասցի եւ ծնցի որդի, եւ կոչեսցեն զանուն նորա Էմմանուէլ, որ թարգմանի՝ Ընդ մեզ Աստուած» (Մատթեոս 1:23):

Սիրելի՛ հավատավոր զավակներ,

Կամոքն Բարեգութ Աստծո՝ օրեր առաջ տարեմուտով ուղենշվեց համայն մարդկության նոր կենսընթացը: Իսկ այսօր վերստին պանծացվում է 2015 տարի առաջ Բեթղեհեմում կատարված սքանչելի և խորհրդավոր եղելությունը. Աստված Երկնքից խոնարհվեց և մարդացավ: Աստվածային մարմինը հագավ մարդկային բնություն՝ ի սեր ամենքիս, հանուն աստվածադրոշմ պատկերի վերանկանգնումի ու նորոգության:

Մեր աղոթքն է, որ Էմմանուելի զորությունն առավել ներգործուն և ուժեղ դարձնի մեր հավատքը: Եվ թող մարդացյալ Փրկիչն Իր Աստվածհայտնությամբ զորացնի առաքելահաստատ Հայ Եկեղեցին, անվտանգ, ամբողջ ու անխռով պահի Հայրենին մեր՝ բարեբերություն և խաղաղություն պարգևելով մեր ժողովրդին:

Քրիստոս Ծնաւ եւ Յայտնեցաւ,

Օրհնեալ է Յայտնութիւնը Քրիստոսի:

Օրհնությամբ՝

ՆԱՎԱՍԱՐԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՃՈՅԱՆ

Ամանորը և Սուրբ Ծնունդը Արարատյան Հայրապետական թեմում

Մատուցվեց Ս. Ծննդյան ճրագալույցի Ս. Պատարագ

Հունվարի 5-ին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդանիս Ս. Սարգիս եկեղեցում Ս. Ծննդյան ճրագալույցի Ս. Պատարագը մատուցվեց առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի հանդիսապետությամբ: Ս. Պատարագին ներկա էին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանը, Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը, բարձրաստիճան պաշտոնյաներ:

Պատարագիչը Տ. Շահե քահանա Հայրապետյանն էր: Հավարտ Ս. Պատարագի Սրբազան հայրը Ս. Ծննդյան և Հայտնության Ավետիսը փոխանցեց հավատավոր ժողովրդին՝ ողջունելով. «Քրիստոս Ծնաւ և Յայտնեցաւ: Օրհնեալ է Յայտնութիւնն Քրիստոսի»:

Ճրագալույցի Ս. Պատարագից հետո ԱՀԹ առաջնորդարանում Տ. Նավասարդ Սրբազանի նախագահությամբ կատարվեց Տնօրհնեքի կարգ: Առաջնորդարանի հանդիսասրահում հավատացյալները առիթ ունեցան շնորհավորել ՀՀ Նախագահին ու թեմի առաջնորդական փոխանորդին:

Սուրբ Ծննդյան տոնական Ս. Պատարագ առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցում

Հունվարի 6-ին Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին նշում է Քրիստոսի Սուրբ Ծննդյան և Աստվածհայտնության տոնը: Այդ առթիվ Ս. Պատարագ է մատուցվում բոլոր եկեղեցիներում: ԱՀԹ առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցում Սուրբ Ծննդյան հանդիսավոր Ս. Պատարագը մատուցեց թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը:

Ս. Պատարագի ընթացքում Սրբազան հայրն ընթերցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի շնորհավորական ուղերձը:

Ս. Պատարագի ավարտին Տ. Նավասարդ Սրբազանը կատարեց Ջրօրհնեքի կարգ, որը խորհրդանշում է Հորդանան գետում Քրիստոսի մկրտությունը: Ս. Խաչով և Սրբալույս Մյուռոնով օրհնված հրաշագործ ջուրը բաժանվեց ժողովրդին՝ ի բժշկություն հոգևոր և մարմնավոր ախտերի: Այս տարի ԱՀԹ առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցու ջրօրհնեքի խաչքավորն Արմեն Բաղալյանն է:

Կախվածությունը դատավճիռ չէ. «Ելք կա: Ինչպես այն գտնել»

Հունվարի 8-ին ԱՀԹ առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի օրհնությամբ ԱՀԹ առաջնորդարանում տեղի ունեցավ «Ելք կա: Ինչպես այն գտնել» խորագրով սեմինարը: Այն վարեց միջազգային հեղինակություն վայելող՝ Քրիստոնեական հասարակական բարեգործական «Հին աշխարհ» («Старый Свет») հիմնադրամի վարչության նախագահ, վերականգնողական ծրագրերի տնօրեն, հոգեբան Եվգենի Պրոցենկոն: Նա Հայաստանում է ԱՀԹ Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցու հոգևոր հովիվ, ԱՀԹ «Ցերեկային կենտրոնի» տնօրեն՝ Տ. Գրիգոր քահանա Գրիգորյանի հրավերով: Սեմինարն անցկացվեց հոգևորականների, ծխական համայնքի սոց. աշխատողների և այն կամավորների համար, ովքեր ցանկանում են աշխատել, կամ աշխատում են կախվածություն ունեցողների հետ:

Հանդիպումը Տ. Գրիգորի գլխավորությամբ սկսվեց Տերունական աղոթքով:

Ե. Պրոցենկոյի դասախասությունը երկու ուղղվածություն ուներ՝ «Կախվածության խնդիրն ու այն լուծելու ուղիները» և «Մենք ինչ կարող ենք անել. սկիզբը և հաջորդող քայլերը»: Նա խոսեց այս հիվանդության, դրա հոգևոր ու համալիր բնույթի, թմրամոլության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի համաճարակաբանության, կախվածության խնդրի նկատմամբ տարբեր մոտեցումների ու դրանց արդյունավետության գործոնների մասին: Հատուկ անդրադարձ կատարվեց թմրամոլության բուժման թերապևտիկ մեթոդին, դրա տեսակներին և քրիստոնեության ու եկեղեցու հետ կապին:

Միջազգային երգի մրցույթների դափնեկիրների համերգ Մարինյան թատրոնում

Հունվարի 12-ին Հովհաննես սարկավագ Ներսիսյանը մասնակցեց Ռուսաստանի Դաշնության Սանկտ Պետերբուրգ քաղաքի Մարինյան թատրոնում կայացած «Միջազգային երգի մրցույթների դափնեկիրներ» համերգին: Համերգը տեղի ունեցավ Մ. Պ. Մուսորսկու անվան դահլիճում, որին մասնակցեց 3 երգիչ: Հայաստանը ներկայացնող Հովհաննես սարկավագը կատարեց 6 ստեղծագործություն՝ 2 ռոմանս և 4 օպերային արիա: Այդ թվում նաև Արմեն Տիգրանյանի «Դավիթ Բեկ» օպերայից Դավիթ Բեկի արիան:

Սրբապատկերի օծում և տնօրհնեք ՁԻԱՀ-ի ԿՀԿ-ում

Հունվարի 12-ին ԱՀԹ առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանն օծեց ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի Ս. Աստվածածին նորակառույց մատուռի սրբապատկերը: Սրբազանն հորն ուղեկցում էին ԱՀԹ Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցու հոգևոր հովիվ, ԱՀԹ «Ցերեկային կենտրոնի» տնօրեն Տ. Գրիգոր քահանա Գրիգորյանը և առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցու խորհրդակատար Տ. Շահե քահանա Հայրապետյանը: ՁԻԱՀ-ի ԿՀԿ տնօրեն Սամվել Գրիգորյանը Սրբազան հորը ներկայացրեց կենտրոնի գործունեությունը, ծրագրերը:

Սրբապատկերի օծման արարողությունից հետո Սրբազան հայրը կենտրոնում Տնօրհնեքի կարգ կատարեց:

ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնում հաճախակի են կազմակերպվում հոգևորականների հետ հանդիպումներ ու զրույցներ:

Հին Նոր տարին սիրիահայերի հետ

Հունվարի 14-ին ԱՀԹ առաջնորդարանում սիրիահայերի համայնքը նշեց Ամանորը և Ս. Ծնունդը: ԱՀԹ առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի գլխավորությամբ միջոցառումը սկսվեց Տերունական աղոթքով: Սրբազան հայրը ողջունեց սիրիահայերին՝ նշելով, որ ուրախությամբ է փաստում նրանց՝ թեմի հոգևոր ու համայնքային կյանքում ներգրավվածությունը:

Տոնախմբությունը կազմակերպել էր ԱՀԹ Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցու «Հույսի միավոր» սիրիահայ տիկնանց օժանդակ միությունը: Միջոցառումն անցավ սիրիահայ համայնքի ավանդույթներով ու հյուրասիրությամբ համեմված: Միջոցառումն իրական տոնի վերածվեց, երբ Կաղանդ պապը և ծաղրածուն շնորհավորեցին երեխաների Ամանորը և թեմի կողմից նվերներ փոխանցեցին շուրջ 40 սիրիահայ երեխաների:

Արդեն մի քանի տարի է, որ Հայաստան վերադարձած սիրիահայերը Տ. Նավասարդ արքեպիսկոպոսի օրհնությամբ իրենց նոր համայքն են ձևավորել Արարատյան Հայրապետական թեմի Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցում՝ հոգևոր հովիվ Տ. Գրիգոր քահանա Գրիգորյանի զորակցությամբ: Նրանք իրենց համայնքային սովորությունները պահպանում են՝ նշելով բոլոր տոները, մասնակցելով ուխտագնացությունների և հատուկ իրենց համար կազմակերպվող արևմտահայերեն քարոզների:

Ս. Հովհաննես Մկրտչի մասունքակիր աջը բերվեց ԱՀԹ

Հունվարի 14-ին Ս. Հովհաննես Մկրտչի ծննդյան տոնի առթիվ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի արտոնմամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ԱՀԹ Երևանի Ս. Հովհաննես եկեղեցի բերվեց սրբի մասունքակիր աջը: Նույն եկեղեցում ԱՀԹ առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ աքրեպիսկոպոս Կճոյանի հանդիսապետությամբ մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչը Տ. Անուշավան քահանա Կոշեցյանն էր:

Հավարտ Ս. Պատարագի Տ. Նավասարդ Սրբազանը սուրբ մասունքով օրհնեց հավատավոր ժողովրդին: Շնորհավորելով բոլոր ներկաներին և ի մասնավորի՝ Հովհաննեսներին, Մկրտիչներին ու Կարապետներին սրբի տոնի ու իրենց անվանակոչության առթիվ՝ Սրբազան հայրն ասաց.

«Այսօր մեր համախմբման հիմնական նպատակը հաղորդակից լինելն է Ս. Հովհաննես Մկրտչի մասունքին: Հովհաննես, Մկրտիչ, Կարապետ… Այս անունները ցույց են տալիս սրբի առաքելությունն, ով ընթացավ Տիրոջ առջևից և ապաշխարության խորհրդով պատրաստեց մարդկանց սրտերը՝ ընդունելու Փրկչին:

Ինչպիսի՞ն էր նա. կոշտացած մաշկով, կիզիչ արևից վառված դեմքով, ում խոսքերը, սակայն, նետի պես խոցում էին մարդկանց սրտերը: Անողոք էր, անկաշառ, ճշմարտության զինվոր: Ինչպես այսօր, այնպես էլ այն ժամանակ մարդիկ մշտապես խոսում էին ճշմարտության մասին, սակայն մարդկային հոգին վերածվել էր անապատի: Հովհաննես Մկրտիչն անապատում լսեց Աստծո ձայնը և մարդկանց բազմության մեջ հնչեցրեց ճշմարտությունը:

Լավ է, երբ մարդը սուտ չի խոսում, առավել լավ է, երբ ճշմարտությունն է հայտարարում, բայց երանելի է նա, ով ճշմարտության կրողն ու իրագործողն է, որովհետև այդ կերպ կատարում է Տիրոջ պատգամը. նրան կխաչեն, կգլխատեն, բայց նա կհաղթի, քանի որ կյանքով փաստված և իրագործված ճշմարտությունը կեղծել հնարավոր չէ, այն կհաղթահարի բոլոր դժվարությունները, որովհետև այդպիսի ճշմարտությունն աստվածային ներգործությամբ է իրականացվում:

Այսպիսի մի մարգարե էր Ս. Հովհաննես Մկրտիչը, ով անողոք էր չարի ու կեղծիքի հանդեպ՝ մարդկանց հորդորելով կրողը լինել աստվածային ճշմարտության: Խոսքի և գործի ներդաշնակությամբ Ս. Հովհաննես Մկրտիչը մարդկանց սրտերում վառեց աստվածային ճշմարտության լույսը:

Թող այդ լույսն անշեջ մնա ձեր հոգիներում, որպեսզի կարողանանք Ս. Հովհաննես Մկրտչի պատգամին և ապաշխարության կոչին ականջալուր լինել՝ արժանանալով Սրբի բարեխոսությանը: Շնորհը, սերը, խաղաղությունը թող լինեն ձեզ հետ. Ամեն»:

Արարողության ավարտին Սրբազան հայրը Պապհանիչ աղոթքով արձակեց հավատավոր ժողովրդին:

Սրբի մասունքը եկեղեցում մնաց մինչև երեկոյան ժամերգությունը. հարյուրավոր հայորդիներ հնարավորություն ունեցան հաղոդակից լինել սրբությանը՝ իրենց խոնարհումը բերելով Ս. Հովհաննեսին և նրա բարեխոսությունը խնդրելով:

Սուրբ Սարգսի տոնը Արարատյան Հայրապետական թեմում

Ս. Սարգսի տոնը ԱՀԹ Նոր Նորքի և Արգավանդի Ս. Սարգիս եկեղեցիներում

Ս. Սարգիս զորավարի տոնն Արարատյան Հայրապետական թեմում նշվում է առանձնահատուկ կերպով: Թեմում գործող՝ սրբի անունը կրող երեք եկեղեցիներում ԱՀԹ առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի օրհնությամբ կազմակերպվում են բազմաթիվ միջոցումներ:

- Հունվարի 22-ին՝ Ս. Սարգսի տոնի նախատոնակին, Արգավանդի Ս. Սարգիս եկեղեցու համայնքը, երիտասարդաց միությունը և եկեղեցուն կից կիրակնօրյա դպրոցի սաները հոգևոր հովիվ Տ. Գրիգոր քահանա Հովհաննիսյանի գլխավորությամբ խաչապտույտ իրականացրեցին Արգավանդի Ս. Սարգիս եկեղեցուց դեպի Ս. Երրորդություն եկեղեցի: Խաչերթից հետո Արգավանդի Ս. Սարգիս եկեղեցում համայնքի անդամներն ու երիտասարդները մասնակցեցին խոկման արարողությանը:

- Հունվարի 23-ին, հավարտ Ս. Պատարագի, Արգավանդի Ս. Սարգիս եկեղեցում տեղի ունեցավ երիտասարդների օրհնության կարգ:

- Հունվարի 23-ին Արգավանդի Ս. Սարգիս եկեղեցու բակում իրականացվեց ավանդույթ դարձած «Իմ սիրո Բարեխոս» խորագրով բացիկների մրցույթը: Հաղթողներն արժանացան մրցանակների, խրախուսական նվերների:

- Նոր Նորքի Ս. Սարգիս եկեղեցում հունվարի 22-ին երեկոյան ժամերգությունից հետո եկեղեցի այցելած երիտասարդներին բաժանվեցին աղի բլիթներ, որոնք պատրաստել էին երիտասարդաց միության անդամները:

- Հունվարի 23-ին Նոր Նորքի Ս. Սարգիս եկեղեցու համայնքը կազմակերպեց խաչապտույտ, ապա երիտասարդների օրհնության կարգ:

- Հունվարի 23-ին Նոր Նորքի Ս. Սարգիս եկեղեցու բակում ելույթ ունեցան Հայորդաց տան «Նարեկ» պարային համույթի սաները: Նոր Նորք վարչական շրջանի դեկորատիվ կիրառական արվեստի դպրոցների սաները ցուցադրեցին իրենց աշխատանքները:

Տոնական Ս. Պատարագ և զինվորների օրհնություն Ս. Սարգսի տոնի առթիվ

Հունվարի 23-ին՝ Ս. Սարգիս զորավարի տոնին, առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցում Ս. Պատարագը մատուցվեց Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի հանդիսապետությամբ: Ներկա էին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը, Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը, բարձրաստիճան զինվորականներ ու սահմանային գծում առավել աչքի ընկած զինվորներ: Պատարագիչը Տ. Շահե քահանա Հայրապետյանն էր:

Մինչ Ս. Պատարագը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն

Հայոց Հայրապետի արտոնմամբ եկեղեցի էին բերվել Ս. Սարգսի մասունքակիր աջը և 17-րդ դարում այս եկեղեցում ընդօրինակված Ավետարանը, որն այժմ պահվում է Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի Մատենադարանում:

Հավարտ Ս. Պատարագի Նավասարդ Սրբազանը Ս. Սարգսի աջով օրհնեց զինվորներին ու հավատավոր մյուս հայորդիներին:

Զինվորների պարգևատրում Ս. Սարգսի տոնի առթիվ

Հունվարի 23-ին՝ հավարտ Ս. Պատարագի, ԱՀԹ առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի հանդիսապետությամբ տեղի ունեցավ սահմանային գծում ծառայության ընթացքում առավել աչքի ընկած զինվորների պարգևատրման արարողություն: Միջոցառմանը մասնակցում էին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը, Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը, բարձրաստիճան զինվորականներ և շարքային զինվորներ՝ իրենց ծնողների հետ:

Նավասարդ Սրբազանի նախաձեռնությամբ այս տարի առաջին անգամ սահմանային գոտում մարտական հերթապահություն իրականացնող լավագույն ժամկետային զինծառայողները Ս. Սարգսի տոնի շրջանակում Արարատյան Հայրապետական թեմի կողմից պարգևատրվեցին Ս. Սարգիս զորավարի խորհրդանշական զարդապատկերով ու տոնը խորհրդանշող հուշանվերներով: Ի դեպ, հարկ է նշել, որ այդ զարդապակերները բացառիկ են, քանի որ հատուկ պատրաստվել են միայն այսօր պարգևատրվող զինվորների համար՝ սահմանափակ թվաքանակով:

Շնորհավորելով երիտասարդներին ու մասնավորապես պարգևատրվող զինվորներին՝ Սրբազան հայրն ի մասնավորի ասաց.

«Մեծարգո՛ նախագահ և Զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատար, Վեհափառ Հայրապետի անունից ջերմորեն ողջունում ենք Ձեր մասնակցությունը տոնական Սուրբ Պատարագին և ներկայությունն՝ այս աննախադեպ միջոցառմանը:

Հարգարժա՛ն ներկաներ, այսօր ամենքիս համար սիրելի դարձած արագահաս Սուրբ Սարգ-

սի տոնն է, ով իր վարքով և նահատակությամբ դարձավ քրիստոսանվիրումի անմար ջահն ու անկոտրուն հավատքի վկան: Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի բարձր տնօրինությամբ այս օրը հռչակված է երիտասարդների օրհնության օր:

Շուրջ տասը տարի Արարատյան Հայրապետական թեմը «Սիրո ուժն է անհաղթ» կարգախոսով կյանքի է կոչում բազում ծրագրեր և տոնական միջոցառումներ: 2007թ. մինչև այսօր Սուրբ Սարգսի տոնակատարություններն իրականանում են Սերժ Սարգսյանի բարձր հովանու ներքո: Շնորհավորում ենք մեր սիրելի նախագահին, Սարգիսներին և Սարգսյաններին, Մարտիրոսներին ու Մարտիրոսյաններին՝ անվանակոչության առթիվ: Հայցում ենք Սուրբ Զորավարի բարեխոսությունը, որպեսզի մեր պատվարժան նախագահը՝ հայրենիքի անկախացման և ազատագրական պայքարի քուրայով անցած իր փորձառությամբ այսուհետև երիտասարդական ավյունով շարունակի ծառայել պատասխանատու պաշտոնում և մերձավորությամբ ու հոգեհարազատությամբ աջակից լինի մեր երիտասարդներին:

Սուրբ Սարգիսը զորավար էր և Քրիստոսի վկան: «Եվ եթե մեկը կամենում է հետևել ինձ, թող ուրանա իր անձը, վերցնի իր խաչը և գա իմ ետևից…» (Մատթեոս ԺԶ 24): Անսալով Տիրոջ ձայնին՝ սուրբը նահատակությամբ հաստատեց, որ Քրիստոսի սերն ու հավատքը առավել են երկրային կյանքից: Սիրո ուժականությամբ պիտի գործենք ամենքս, քանզի «սիրո ուժն է անհաղթ»: Սիրով արված գործերը հզոր են և անբեկանելի: Սիրո զորեղությամբ արարվածն անառիկ է և անխոցելի:

Օրեր անց պիտի նշենք հայոց բանակի 24-ամյա տարեդարձը: Տարիներ առաջ, լինելով պաշտպանության նախարարի պաշտոնում, Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը այսպես է բնութագրել բանակի անցած ճանապարհը. «Մեր բանակը կարճ պատմական ժամանակահատվածում՝ անցնելով ծանր փորձություններ՝ պատերազմներով և բանակի խաղաղ կառուցմամբ, թրծվել է և դարձել մեր անկախության գլխավոր երաշխիքը և այսուհետ հպարտության և ներշնչման աղբյուր է»: Այսօր մեզ հետ են հայոց բանակի առաջնագծում կռված և կռվող քսանհինգ անվախ հայորդիներ:

Սիրելի՛ք, սուրբ է և սրբացված հողը մեր հայրենի: Այն իր մեջ շերտ առ շերտ պահպանում է հայոց հազարամյա պատմությունը: Հայոց հողը հայի ինքնությունն է, ազգի ոգին է ու հիշողությունը: Որպես ուխտավոր՝ սուրբ զորավարի մասունքին այսօր բերեցիք ձեր խոնարհումը, հոգևոր նորոգությամբ զորանալով՝ արդ կոչվեցիք ուխտապահ մարտիկներ. հավատարմությամբ ծառայել Աստծուն և ժողովրդին, ամուր կենալ, քաջ մնալ, անհողդողդ կանգնել թշնամու առաջ և քաջաբար հասնել հաղթության: Այս նվիրական պահին մեր խոնարհումն ու երախտիքն ենք բերում հայոց մայրերին՝ քաջազուն զավակներ ծնելու և հայոց բանակում անկախության ոգին կերտելու համար: Թող Տիրոջ քաջ վկա Սուրբ Սարգիսը զորակից ու մարտակից լինի ձեզ՝ սիրո, հավատքի ու հայրենասիրության հաղթական ուխտը անխախտ պահելու օրհնաբեր գործում: Ամեն»:

Ս. Սարգսի տոնի ու պարգևատրման առթիվ ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը շնորհավորեց զինվորներին՝ ի մասնավորի ասելով.

«Հարգելի՛ ծնողներ, Սիրելի՛ զինվորներ,

Ես մեծ հաճույքով շնորհավորում եմ ձեզ այսօրվա տոնի՝ Սուրբ Սարգսի տոնի կապակցությամբ: Զորավար Սարգիսը զինվորականության, երիտասարդության, սիրո ու հավատարմության, այսինքն՝ անդավաճան լինելու սուրբն էր: Ուստի, հատկապես այսօր ես ուզում եմ շնորհավորել այստեղ ներկա մեր զինվորներին, ովքեր զորակոչվելով հայկական բանակ, պարզ զինվորից վերածվել են Հայրենիքի զինվորի: Հայրենիքի զինվոր կարող է լինել նա, ով գիտակցում է, ով համոզված է, որ մեր Հայրենիքի անվտանգությունը, մեր Հայրենիքի պաշտպանությունը կախված է մեզնից յուրաքանչյուրից: Եվ այդ մեծ, բազմամարդ կոլեկտիվում եթե մեկն իր պարտականությունները կատարում է թերի, ապա մնացածի վրա է բարդվում հավելյալ դժվարությունը: Հայրենիքի զինվոր կարող է դառնալ նա, ով գիտակցում է, որ լիարժեք կատարելով իր պարտականությունը, իր պարտքը՝ նա առաջին հերթին պաշտպանում է իր ծնողներին, պաշտպանում է իր քույրերին, եղբայրներին, իր ապագա երեխաների մորը, իր հայրենի օջախը և այս հավաքականության մեջ՝ մեր Հայրենիքը:

Սիրելի՛ զինվորներ,

Ուզում եմ շնորհակալություն հայտնել ձեր ծնողներին, ձեր ուսուցիչներին, բոլոր նրանց, ովքեր,

անկախ սոցիալական վիճակից, շատ մեծ դժվարությամբ, տառապանքով ձեզ ծնել, դաստիարակել ու կրթել են, և դուք դարձել եք մեր Հայրենիքի լիարժեք քաղաքացիներ: Իմ խորին շնորհակալությունը ձեզ, սիրելի՛ ծնողներ:

Ուզում եմ, սիրելի՛ զինվորներ, ձեզ մաղթել բարի ծառայություն, անփորձանք ծառայություն: Ուզում եմ վստահ լինեք, որ ես, որպես Գերագույն գլխավոր հրամանատար, Պաշտպանության նախարար, որպես մարդ, ով քսանչորս ժամ զբաղված է մեր Զինված ուժերի բոլոր գործերով ու խնդիրներով, ամեն ինչ անում ենք, որպեսզի դուք ունենաք ժամանակակից սպառազինություն, որպեսզի այն հատվածում, որտեղ դուք պատասխանատվություն եք կրում՝ լարվածություն չլինի: Ուզում եմ բոլորիդ հավաստիացնել, որ մենք մեր Հայրենիքի պաշտպանությունը, անվտանգությունը երբեք առուծախի առարկա չենք դարձրել ու չենք դարձնի: Վստահ եղեք, որ ձեզնից առաջ ծառայողների, նաև, անշուշտ, մեր նահատակված զինվորականների վաստակը լինելու է այն հիմքը, որի վրա Հայաստանի Հանրապետությունը դառնալու է անխոցելի, ուժեղ պետություն: Եվ որպես փոքրիկ ուշադրություն ձեր լավ ծառայության, ես խնդրել եմ Պաշտպանության նախարարին, որպեսզի ձեզնից այսօր ծառայության մեջ գտնվող զինվորներին հատկացնի 10-օրյա արձակուրդ, որպեսզի կարողանաք ձեր ծնողների, մերձավորների հետ անցկացնել այս մի քանի օրը:

Մեկ անգամ ևս սրտանց շնորհավորում եմ բոլորիդ և շնորհակալություն եմ հայտնում ձեզ՝ Հայաստանի Հանրապետության արժանի քաղաքացի լինելու համար»:

Միջոցառման մասնակիցներին շնորհավորեց նաև ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը:

Պարգևատրվող զինվորներից ավագ սերժանտ Լևոն Մովսիսյանը երախտիքի խոսք ասաց՝ իրենց ծառայությունը բարձր գնահատելու համար: Բոլոր զինվորների ծնողների անունից շնորհակալության խոսք ասաց նաև Շուշանիկ Հայրապետյանը:

Այսօր պարգևատրված զինվորների մի մասը ծառայությունն ավարտել է, մյուսները դեռ ծառայում են: Այս ծրագիրը երախտիքի դրսևորում է մեր սահմաններն անառիկ պահող զինվորներին: Նրանց ցուցակը տրամադրել էր ՀՀ պաշտպանության նախարարությունը: Ցուցակում ընդգրկված էին զինվորներ ամբողջ Հայաստանից:

Սուրբ Սարգսին նվիրված քայլերթ

Հունվարի 23-ին՝ հավարտ Ս. Պատարագի, ԱՀԹ առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցուց մեկնարկեց ավանդական բազմահազարանոց խաչերթը՝ «Սիրո ուժն է անհաղթ» կարգախոսով: Խաչերթի սկզբում թեմի քահանայից դասը և երիտասարդաց միության անդամները խաչվառներով ու խաչով թափոր էին կազմել, որն առաջնորդում էր ԱՀԹ առաջնորդական փոխանոդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը: Երթին մասնակցում էին զինվորներ, Ոստիկանական

ակադեմիայի ու տարբեր բուհերի ուսանողներ, հասարակական ու քաղաքական կազմակերպություններ, եկեղեցիների համայնքների անդամներ, «Փոքր Մհեր» կրթահամալիրի սաներ, Երևանի

վարչական շրջանների ներկայացուցիչներ և այլն:

Քայլերթի մասնակիցներն անցան Մ. Մաշտոց և Բաղրամյան պողոտաներով մինչև Սիրահարների պուրակ: Տոնական ոգի էին ներշնչում զինվորական փողային նվագախումբը և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ու ՀԲԸՄ Հայորդաց տան թմբկահարների խումբը:

Սիրահարների այգում Խաչերթի մասնակիցները միացան տոնական համերգային ծրագրին, որը համեմված էր ազգային երգուպարով: Համերգին մասնակցում էին ԱՀԹ «Ծաղկազարդ» համախումբը, «Արարատ» երգչախումբը, «Վարք հայոց» ազգային երգի-պարի խումբը, սիրված ու սպասված երգիչներ Աննա Խաչատրյանը, Արսեն Գրիգորյանը՝ Մրո, Ռուբեն Սասունցին, Էրիկը, Սոնա Ռուբենյանը, Սարո Թովմասյանը:

Ս. Սարգսի տոնին նվիրված ցուցահանդեսներ

Ս. Սարգսի տոնակատարությունների շրջանակում կազմակերպվում են ստեղծագործական բուհերի ուսանողների աշխատանքների ցուցահանդես-մրցույթներ: Ծրագրի շրջանակներում մի քանի տասնյակ ուսանողներ սիրո թեմայի շուրջ ստեղծված իրենց գործերով ներկայանում են՝աստվածային սիրո տարբեր դրսևորումները մատուցելով ազգային երանգներով:

- Փետրվարի 3-ին Փ. Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջում բացվեց Ս. Սարգսի տոնին նվիրված առաջին ցուցահանդես-մրցույթը:
- Փետրվարի 5-ին ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում բացվեց Ս. Սարգսի տոնին նվիրված երկրորդ ցուցահանդեսը:

- Փետրվարի 11-ին Խ. Աբովյանի անվան Հայաստանի պետական մանկավարժական համալսարանում բացվեց Ս. Սարգսի տոնին նվիրված ուսանողական աշխատանքների երրորդ ցուցահանդեսը:

- Փետրվարի 17-ին Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայում բացվեց ուսանողական աշխատանքների ցուցահանդես՝ նվիրված Ս. Սարգսի տոնին:

- Փետրվարի 22-ին Հ. Իգիթյանի անվան Գեղագիտության ազգային կենտրոնում բացվեց կենտրոնի սաների աշխատանքների ցուցահանդես:

Մայիսի 26-ին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդարանում տեղի ունեցավ շնորհաբաշխում: Դրամական մրցանակներ ստացան Երևանի այն բուհերի սաներն, ովքեր հաղթող են ճանաչվել Ս. Սարգսի տոնի առթիվ կազմակերպված ցուցահանդես-մրցույթներում: Գեղանկարչություն, կերպարվեստ, գրաֆիկա, կիրառական արվեստ, քանդակ անվանակարգերում լավագույնը ճանաչված 18 աշխատանքներն Արարատյան Հայրապետական թեմի կողմից արժանացան մրցանակների:

Սրբազանի շնորհավորական ուղերձը հայոց հաղթական բանակի տոնի առիթով

Սիրելի՝ հայորդիներ, շնորհավորում ենք հայոց հաղթական բանակի տոնը:

Մեր ազգային բանակն իր վաստակով ու հերոսական էջերով դարձել է շարունակողը Հայկյան ոգու, Վարդանանց արիության ու Սարդարապատի սխրագործության: Հատկապես այսօր դժվար է պատկերացնել մեր ժողովրդի և պետության խաղաղ արարումն առաց Հայոց բանակի:

Աղոթում ենք, որ Աստված իր հոգատար ձեռքերում պահի մեր բոլոր զինվորներին: Թող հայ մայրերի աչքերը չոր մնան, հայ մանուկներն ապրեն երջանկության ու բարօրության մեջ: Ուստի մաղթում ենք, որ մեր բանակը գործի ու զորանա խաղաղ պայմաններում՝ խաղաղության մեջ պահելով մեր Երկիրը, մեր ժողովրդին ու ամուր պատվար լինի մեր պետականությանն ու մեր հավատքին:

Ջերմագին սիրով և օրհնությամբ՝

ՆԱՎԱՍԱՐԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՆՈՅԱՆ

Բանակի տոնը զորամասում

- Հունվարի 28-ին՝ Հայոց բանակի տոնի առթիվ, Արտաշատի Ս. Հովհաննես Ավետարանիչ եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Թաթուլ քահանա Գասպարյանի և երիտասարդաց միության հոգևոր հովիվ Տ. Երվանդ քահանա Բաբայանի գլխավորությամբ երիտասարդաց միության ու համայնքի անդամները մի խումբ երաժիշտների հետ այցելեցին Արարատի N զորամաս: Քահանաներն այստեղ կատարեցին Տնօրհնեքի արարողություն: Զորամասի ակումբում հյուրերը զինվորներին ներկայացրեցին համերգային ծրագիր՝ հայրենասիրական երգերով ու ազգային պարերով:

- Հունվարի 29-ին Արարատի Ս. Հակոբ եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Դավիթ քահանա Սահակյանը, Դալարի Սուրբ Աստվածածին եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Եփրեմ քահանա Հարությունյանը և երիտասարդաց միության անդամներն այցելեցին Իջևանի N զորամաս՝ շնորհավորելու զինվորներին Հայոց բանակի տոնի առթիվ: Խմբին միացել էր նաև հայկական ազգագրական պարեր քարոզող «Շավիղ» խումբը:

- Հունվարի 31-ին Մասիսի Ս. Թադեոս եկեղեցում տեղի ունեցավ միջոցառում «Ավարայրից Արցախ. տոնդ շնորհավոր, հայ զինվոր» խորագրով: Տոնախմբությունը նախաձեռնել էր եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Արարատ քահանա Օրդոյանը: Միջոցառումը նվիրված էր Հայոց բանակի տոնին և Ս. Վարդանանց նահատակների հիշատակության օրվան: Ներկա էին Մասիսի քաղաքային իշխանության և զինկոմիսարիատի աշխատակիցները:

ԱՀԹ հինգ քահանաներ արժանացան պարգևների

Փետրվարի 2-ին Ղևորնդյանց քահանաների տոնի առթիվ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի սրբատառ կոնդակով և Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի միջնորդությամբ թեմի երկու քահանայի՝ Կաթողիկե Ս.Աստվածածին և Ս. Աննա եկեղեցիների հոգևոր հովիվ Տ. Ավետիս ավագ քահանա Դանիելյանին և Մալաթիայի Ս. Աստվածածին եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Տիրան ավագ քահանա Առուշանյանին շնորհվեց ավագ քահանայության պատիվ:

Ս. Երրորդություն եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Զենոն քահանա Բարսեղյանին, Արտաշատի Ս. Հովհաննես Ավետարանիչ եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Թաթուլ քահանա Գասպարյանին շնորհվեց ծաղկյա փիլոն կրելու պատիվ: Վեդու Ս. Աստվածածին եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Հովակիմ քահանա Հարությունյանն արժանացավ լանջախաչ կրելու պատվին:

Մխչյանի Ս. Հովհաննես եկեղեցին զարդարվեց նորաօծ սրբապատկերներով

Փետրվարի 8-ին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի ձեռամբ օծվեցին Մխչյանի Ս. Հովհաննես եկեղեցու՝ Ս. Թադեոս և Ս. Բարդուղիմեոս առաքյալների երկու նոր սրբապատկերները:

Սրբապատկերները նվիրաբերել է եկեղեցու ջրօրհնեքի խաչքավոր Խորեն Միերյանը: Հեղինակը նկարիչ Միեր Պողոսյանն է:

Շնորհավորելով համայնքի անդամներին՝ Սրբազան հայրը բարձր գնահատեց բարերարի և հոգևոր հովվի ներդրած ջանքերը և մաղթեց, որ Ս. Թադեոս և Ս. Բարդուղիմեոս առաքյալների բարեխոսությամբ համայնքի հավատավոր հայորդիները հաստատուն մնան փրկության ճանապարհին և աղոթական կյանքում:

Բուն Բարեկենդանի տոնն Արարատյան Հայրապետական թեմում

Արարատյան Հայրապետական թեմը և ՀՀ Սպորտի ու երիտասարդության հարցերի նախարարությունը Բուն Բարեկենդանի տոնին ընդառաջ համատեղ կազմակերպեցին մարզական միջոցառումներ մի շարք սպորտաձևերում՝ սուսերամարտ, հայկական կոխ՝ ըմբշամարտ, աթլետիկա, հունահռոմեական ըմբշամարտ:

- Փետրվարի 2-ին՝ Երևանի սուսերամարտի մարզադպրոցում տեղի ունեցավ առաջին բարեկենդանյան մրցաշարը դպրոցի սաների միջև:

- Փետրվարի 3-ին Սամբոյի և ձյուդոյի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցում տեղի ունեցան հայկական կոխի՝ ըմբշամարտի մրցաշար և ցուցադրական ելույթներ:

- Փետրվարի 4-ին Աթլետիկայի փակ մարզահամալիրում տեղի ունեցավ աթլետիկայի մրցաշար:

- Փետրվարի 5-ին Նորայր Մուշեղյանի անվան ըմբշամարտի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցում տեղի ունեցավ հունահռոմեական ըմբշամարտի մրցաշար:

- Փետրվարի 6-ին Արգավանդի Ս. Սարգիս եկեղեցում տեղի ունեցավ միջոցառում՝ նվիրված Ս. Սարգսի, Ս. Վարդանանց, Ս. Ղևոնդյանց և Բուն Բարեկենդանի տոներին: Եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Գրիգոր քահանա Հովհաննիսյանը խոսեց տոների խորհրդի մասին, շնորհավորեց սրբերի անունները կրողներին, նվերներ հանձնեց և հորդորեց նախապատրաստվել Մեծ Պահքին: Միջոցառմանը մասնակցում էին եկեղեցու համայնքը, երիտասարդաց միությունը և կիրակնօրյա դպրոցի սաները:

- Փետրվարի 7-ին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցուց մեկնարկեց բարեկենդանյան դիմակներով շքերթը Մաշտոց պողոտայով դեպի Ազատության հրապարակ: Բազմահազարանոց շքերթին մասնակցում էին թեմի հոգևորականներ, երիտասարդներ, պարի և դիոլահարների խմբեր, ազգագրական երգուպարի խմբեր, հեքիաթների հերոսներ, բուհերի ուսանողներ և այլք:

- Փետրվարի 7-ին Հայաստանի ազգային պատկերասրահի Հակոբ Կոջոյան և Արա Սարգսյանի տուն-թանգարան մասնաճյուղում Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցու «Զորավոր մանկունք» երգչախումբը հանդես եկավ գրական-երաժշտական կոմպոզիցիայով: Երգչախումբը գեղ. ղեկ. Գոհար Հարությունյանի գլխավորությամբ իր յուրահատուկ մեկնաբանությունն էր տվել Բուն Բարեկենդանի խորհրդին: Փոքրիկ երգիչները կատարեցին հատվածներ Ս. Պատարագից, շարականներ ու ժողովրդական երգեր: Երգչախմբի գրական-երաժշտական երեկոյի ընթացքում նախասրահում ցուցադրվեցին Հայաստանի ժողովրդական վարպետ, միջազգային փառատոնների դափնեկիր Անահիտ Կարապետյանի ձեռքի աշխատանքները:

- Փետրվարի 4-7-ը Երևանում մշակույթի տների, գեղագիտական կենտրոնների, դպրոցների և մանկապարտեզների սաներն ազգային երգուպարով, խաղերով ու ներկայացումներով, ազգային կերակրատեսակներով ու ձեռքի աշխատանքների ցուցադրությամբ նշեցին Բուն Բարեկենդանի տոնը:

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց. մահւամբ զմահ կոխեաց, եւ յարութեամբն իւրով մեզ զկեանս պարգեւեաց. Նմա փառք յաւիտեանս. ամէն»:

Սիրելի՛ հայորդիք,

Առաքելահաստատ մեր Սուրբ եկեղեցին տոնախմբում է մեր Տեր և Փրկիչ Հիսուս Քրիստոսի Հարությունը:

«Յարեա՜ւ Տէրն ի գերեզմանէն»: Փրկչի թափուր գերեզմանից ճառագող անստվեր լույսով մեր երկրավոր կյանքը վերստին նոր իմաստ ստացավ: «Ես իսկ եմ յարութիւն եւ կեանք. ով հավատում է ինձ, թէպէտ եւ մեռնի, կապրի. եւ ով կենդանի է ու ինձ հաւատում է, յաւիտեանս չի մեռնի» (Հովհաննես ԺԱ 25-26): Տերն ամենքիս սովորեցրեց, որ Հարությունը երկրի վրա Իրենո՛վ իմաստավորված և ներշնչված կյանքն է: Նա, ով հավատում է Քրիստոսին, իրեն հավերժացնում է բարի գործերով և հավիտենություն տանող արժեքներով: Քրիստոսի Հարությունը հավիտենապես ապրեցնող զորություն է, մեր հավատքի սնուցիչն ու առաջ մղող ուժը:

Մեր աղոթական ցանկությունն է, որ Ձատկական կենսատու ավետիսն առավել զորեղացնի հայոց քրիստոնեական սուրբ հավատքը: Թող հարության հավատքի շնչով և ուժականությամբ վերակերտվեն մեր Ազգն ու Հայրենին՝ վասն փառաց Աստծո և վասն հայոց ազգի հավերժության: Ամեն:

Ձատկական բերկրությամբ և հարուցյալ Տիրոջ օրհնությամբ՝

ՆԱՎԱՍԱՐԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՃՈՅԱՆ

«Ամենախելացին» նախագծի մասնակիցներից մեկն ուխտի կգնա Երուսաղեմ

Մարտի 2-ին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանն ընդունեց Արմենիա ՀԸ «Ամենախելացին» նախագծի մասնակից Էդվարդ Քեշիշյանին: Էդվարդն «Ամենախելացին» հեռուստախաղի երկրորդ եթերաշրջանի այն մասնակիցն է, ով եզրափակիչ խաղում արժանացավ Արարատյան Հայրապետական թեմի կողմից սահմանված մրցանակին՝ «Կրոն» թեմայում լավագույն մասնակցության համար: Սահմանված մրցանակը տասնօրյա ուխտագնացությունն դեպի Երուսաղեմ:

Հանդիպման ընթացքում Սրբազան հայրը շնորհավորեց Էդվարդին՝ թեմի սահմանած մրցանակին արժանանալու համար և տեղեկացրեց, որ ուխտավորների՝ Երուսաղեմ մեկնող առաջիկա խմբի հետ Էդվարդը կմեկնի Երուսաղեմ:

Նավասարդ Սրբազանը կարևորեց այն հանգամանքը, որ պատանին իր երազանքին հասել է սեփական գիտելիքի ու կրթության նկատմամբ ունեցած առանձնահատուկ վերաբերմունքի շնորհիվ:

Նավասարդ Սրբազանն օրհնեց Արարատյան Հայրապետական թեմի մանուկներին

Մարտի 20-ին Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին նշեց Քրիստոսի հրաշափառ մուտքը Երուսաղեմ՝ Ծաղկազարդի տոնը: Այդ առթիվ բոլոր եկեղեցիներում մատուցվեց Ս. Պատարագ:

Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցում Ս. Պատարագը մատուցվեց առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի հանդիսապետությամբ:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ Ծաղկազարդը հռչակված է մանուկների օրհնության օր, քանի որ մանուկներն էին, որ տաճարում Հիսուսին ողջունեցին՝ աղաղակելով. «Օվսաննա, օրհնություն Դավթի որդուն»:

Ս. Պատարագի ընթացքում Նավասարդ Սրբազանի գլխավորությամբ հավատացյալներն ընդհանրական աղոթք առաքեցին առ Բարձրյալն Աստված, ապա Սրբազան հայրն օրհնեց մանուկներին: Դիմելով ներկաներին՝ Սրբազան հայրը մասնավորապես ասաց.

«Սիրելի հայորդիներ, այսօր տոնում ենք Մեր Տեր Հիսուս

Քրիստոսի մուտքը Երուսաղեմ, որտեղ ցնծացողները Նրան դիմավորեցին իբրև Մեսիա, Ով պետք է իրենց ազատեր բռնազավթողներից: Բայց Քրիստոս եկել էր թագավորելու ոչ թե նրանց ակնկալիքների աշխարհում, այլ՝ նրանց սրտերի վրա:

Հիշենք երանիների պատգամը. «Երանի նրանց, ովքեր սրտով մաքուր են, որովհետև նրանք պիտի Աստծուն տեսնեն»: Այս երանին գործում է մանուկների կյանքում և իբրև օրինակ առաջնորդում է մեզ՝ կառուցելու մեր կյանքը՝ Տիրոջ մեկ այլ պատգամով ևս. «Եթե չլինեք այս երեխաների նման, երկնքի արքայություն չենք մտնի»:

Երուսաղեմում ակնկալում էին աշխարհիկ առաջնորդի, սակայն հանդիպեցին Արքային, ով իշխում է սրտերի վրա: Չստանալով իրենց ակնակալած քաղաքական առաջնորդությունը՝ մի քանի օր անց այդ նույն ոգևորությամբ պահանջեցին խաչել Քրիստոսին:

Այսօրվա տոնի խորհուրդը Հիսուսի խոնարհությունն է, Ով ավանակի վրա նստած՝ մտավ Երուսաղեմ: Նույն խոնարհությամբ Աստված կարող է տիրել մեր սրտերին, եթե մանուկների նման մաքուր ու ջինջ սրտով ընդունենք Քրիստոսին: Եվ Տիրոջ անունը մեր հոգիներում կբաբախի ուժգնությամբ՝ զորացնելով Հիսուս Քրիստոսի երկրորդ գալստյան մեր սպասումը»:

Հավարտ Ս. Պատարագի Սրբազան հայրն օրհնեց «Մանկունք» և «Հրեշտակներ» մանկական երգչախմբերի անդամներին: Թեմի բարեգործական ծրագրերի համակարգող Շուշան Պետրոսյանը թեմի կողմից խորհրդանշական նվերներ հանձնեց նրանց:

Ս. Հարության տոնը Արարատյան Հայրապետական թեմում

Սուրբ Հարության ճրագալույցի Ս. Պատարագ

Մարտի 26-ին, բոլոր եկեղեցիներում մատուցվեց Սուրբ Հարության ճրագալույցի Ս. Պատարագ: Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցում Ս. Պատարագը մատուցվեց առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի հանդիսապետությամբ: Պատարագիչը Տ. Շահե քահանա Հայրապետյանն էր:

Ս. Պատարագին ներկա էին ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը, ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանը, Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը, պաշտոնատար այլ անձիք:

Ս. Պատարագի ավարտին Նավասարդ Սրբազանը հավատավոր հայորդիներին տվեց Սուրբ Հարության Ավետիսը. «Քրիստոս Յարեաւ ի մեռելոց: Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի» :

Այնուհետև Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդարանում Տ. Նավասարդ արքեպիսկոպոսի նախագահությամբ կատարվեց տնօրհնեքի արարողություն:

Ճրագալույցի Ս. Պատարագից հետո, ավանդույթի համաձայն, հավատացյալներն առաջնորդարանի դահլիճում շնորհավորեցին Հանրապետության Նախագահին ու Սրբազան հորը՝ Ս. Հարության տոնի առթիվ:

«Հարության Ավետիս» կանթեղներով երթ

Մարտի 26-ին՝ հավարտ Ս. Հարության ճրագալույցի Պատարագի, ԱՀԹ երիտասարդները, ավանդույթի համաձայն, իրականացրեցին «Հարության Ավետիս» խորագրով կանթեղներով երթ՝քաղաքի բնակիչներին փոխանցելով մեր Տեր Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության ավետիսը:

Առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի օրհնությունը ստանալով՝ թեմի երիտասարդները միությունների համակարգող Տ. Պետրոս ավագ քահանա Մալյանի գլխավորությամբ Մ. Մաշտոցի պողոտայով շարականների ուղեկցությամբ քայլեցին դեպի Հանրապետության հրապարակ և քարե գորգի վրա կանթեղներով խաչ կազմեցին:

Երթին մասնակցում էին ՀՀ ՊՆ Վազգեն Սարգսյանի ռազմական ակադեմիայի կուրսանտներ, ՀՀ

Ոստիկանության ակադեմիայի ուսանողներ տարբեր երիտասարդական հասարակական կազմակերպությունների անդամներ և այլք:

Նավասարդ Սրբազանը մատուցեց Զատկական Ս. Պատարագ

Մարտի 27-ին Քրիստոսի հրաշափառ Հարության տոնի առթիվ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցում հանդիսավոր Ս. Պատարագը մատուցեց թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը: Որպես առընթերականեր Սրբազան հորը սպասավորում էին Տ. Շահե քահանա Հայրապետյանն ու Տ. Եսայի քահանա Արթենյանը:

Ավանդույթի համաձայն հավարտ Ս. Պատարագի հավատացյալները առաջնորդարանի դահլիճում շնորհավորեցին միմյանց և Սրբազան Հորը:

Զատկական օրհնություն ՀՀ Ոստիկանական ակադեմիայում

Մարտի 29-ին առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցու հոգևոր հովիվ, ՀՀ Ոստիկանական Ակադեմիայի հոգևոր պատասխանատու Տ. Պետրոս ավագ քահանա Մալյանը թեմի «Արարատ» երգչախմբի հետ մասնակցեց Ակադեմիայում նախապատրաստված Ս. Զատկին նվիրված միջոցառմանը:

Տեր հայրն օրհնեց զատկական սեղանը, ներկաներին փոխանցեց Տ. Նավասարդ արքեպիսկոպոսի օրհնությունն ու շնորհավորանքը Ս. Հարության տոնի առթիվ, կատարեց տնօրհնեքի կարգ և մեկնեց տոնի խորհուրդը:

«Արժեքավոր է յուրաքանչյուր կյանք»

Մարտի 23-25-ը Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի օրհնությամբ Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցու և «Ցերեկային կենտրոնի» հոգևոր հովիվ Տ. Գրիգոր քահանա Գրիգորյանը Մոսկվայում մասնակցեց Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հարցերին նվիրված հինգերորդ միջազգային համաժողովին: Այն կազմակերպել էին Ռուսաստանի Դաշնությունը և ՄԱԿ-ը՝ միացյալ ծրագրի շրջանակում և կրում էր «Արժեքավոր է յուրաքանչյուր կյանք» խորագիրը:

Համաժողովին մասնակցում էին աշխարհի առաջատար գիտնականներ, քաղաքական և հասարակական գործիչներ, բուժաշխատողներ, կրոնական կազմակերպությունների ներկայացուցիչներ, միջազգային կազմակերպությունների ղեկավարներ, ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ, քաղաքացիական հասարակության և զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներ ԱՊՀ անդամ պետություններից, Արևելյան Եվրոպայի, Կենտրոնական Ասիայի և այլ տարածաշրջանի երկրներից: Ընդհանուր առմամբ՝ 2467 պատվիրակ՝ 79 երկրներից: Հայաստանից համաժողովի պատվիրակների թվում էին նաև ԵՀԽ հայաստանյան Կլոր Սեղան հիմնադրամի գործադիր տնօրեն Կարեն Նազարյանը, ԱՀԹ «Ցերեկային կենտրոն»-ի

ծրագրի համակարգող Էմիլիա Ապիցարյանը: Համաժողովին իրենց մասնակցությունն էին բերել Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների քրիստոնեական, մուսուլմանական և հրեական համայնքների պատգամավորությունները:

Համաժողովի բացմանը «Ազատություն» թեմայով ելույթ ունեցավ Նելսոն Մանդելայի թոռը՝ հարավաֆրիկյան քաղաքական գործիչ, «Աֆրիկայի ծաղկումը» հիմնադրամի ղեկավար Նդաբա Մանդելան: Նրա ելույթը մեծ արձագանք ունեցավ: Իր խոսքում նա անդրադարձավ ողջ աշխարհով մեկ ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց իրավունքների և ազատության խնդրին՝ մասնավորապես նշելով. «Համաժողովին դուք կքննարկեք միլիարդի հասնող այն ծախսերը, որ անհրաժեշտ կլինի ՄԻԱՎ-ի կանխարգելման և բուժման համար, այնինչ մարդու արժանապատվությանը հարգանքով մոտենալը ոչ մի գումար չարժե, այդ պատճառով էլ այն անգին է»:

Եռօրյա համաժողովի ընթացքում անցկացվեցին 60 զուգահեռ սեսիաներ, սեմինարներ և կլոր սեղաններ: Հանդես եկավ ավելի քան 350 բանախոս: Համաժողովի աշխատանքն ընթանում էր երեք ուղղվածությամբ՝ «Աջակցություն միջազգային զարգացվածությանը», «Գիտություն և բժշկություն» և «Քաղաքացիական հասարակություն»: Քննարկվող թեմաներն էին՝ ՄԻԱՎ վարակի հետ կապված պրոֆիլակտիկան և բուժումը, միգրացիան և ՄԻԱՎ-ի տարածման խնդիրը, համընդհանուր բուժման ընդգրկում, խարան-խտրականություն ՄԻԱՎ վարակակիրների հանդեպ, կանայք և ՄԻԱՎ-ը, դեռահասները և ՄԻԱՎ-ը, թմրադեղեր և ՄԻԱՎ, ՄԻԱՎ վարակի, տուբերկուլյոզի և այլ հիվանդությունների հետ զուգահեռ բուժումը:

Տեր Գրիգորը մասնակցեց խնդրի շուրջ կրոնական տեսանկյունից քննարկվող սեմինարներին՝ ծանոթանալով աշխատանքային այն փորձին, որ կիրառում են եկեղեցիները, կրոնական կազմակերպությունները և այլ կրոնի ներկայացուցիչները ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ:

Եռօրյա սեմինարների ընթացքում կարևորվեց տարբեր եկեղեցական համայնքների միջև փոխհամաձայնության զարգացումը, տարբեր դավանանք ունեցող կրոնական համայնքների միջև լուսաբանող և կրթական աշխատանքը ՄԻԱՎ-ի կանխարգելման հետ կապված հարցում՝ իջեցնելով խարան-խտրականությունը ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց հանդեպ:

Համաժողովի ավարտին ընդունվեց հանրագումարային հայտարարություն, որով մասնակիցները կոչով դիմեցին Արևելյան Եվրոպայի, Կենտրոնական Ասիայի ղեկավարներին, միջազգային և կրոնական կազմակերպություններին, հիմնադրամներին, քաղաքացիական-հասարակական և բիզնես-միությունների միավորումներին, որպեսզի հնարավորինս և մաքսիմալ կերպով՝ գործադրվեն բոլոր ջանքերն ու ռեսուրսները՝ մինչև 2030 թվականը ՄԻԱՎ վարակի աճը կանգնեցնելու նպատակով:

Քառօրյա պատերազմ

Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի ուղերձը՝ թեմի համայնքներին

Սիրելի՝ հայորդիներ,

Մեր Հայրենիքի առաջ ծառացած մարտահրավերները հաղթահարելու ճանապարհին բոլորս կոչված ենք համախմբվել և գործնականում զորավիգ լինել հայոց բանակին, զինվորագրվել հայրենի սահմանների ու խաղաղության հաստատման մեր արդար պայքարին:

Արարատյան Հայարպետական թեմի բոլոր հոգևոր հայրերին, ծխականներին, հավատացյալներին հորդորում ենք հնարավոր բոլոր միջոցները ներդնել՝ սահմանում ծառայող զինվորներին ու կամավորներին զորակցելու և անհարաժեշտ օգնությունը ցուցաբերելու գործում:

Սիրելի հոգևոր այրեր,

Ձեր հոգեխնամ առաքելությամբ զորակցեք վիրավոր զինվորներին և նրանց ընտանիքներին՝ համայնքներում կազմակերպելով հոգևոր, բարոյական և նյութական աջակցություն:

Ձեր մխիթարությունը բերեք որդեկորույս մեր մայրերին, նրանց ընտանիքները պարուրեք հոգատարությամբ: Հոգևոր մխիթարության հետ զուգահեռ՝ ջանացեք օգտակար լինել նրանց ամեն հարցում:

Աղոթում ենք առ Աստված՝ վիրավոր զինվորների շուտափույթ ապաքինման և իրենց անգին արյունով մայր հողը սրբացնող մեր նահատակ զինվորների հոգիների հանգստության համար:

Թող Բարձրյալն Աստված Իր փրկչական Խաչի զորությամբ մարտակից լինի հայ զինվորին:

Միասնական աղոթք Հայրենիքի և հայրենյաց պաշտպան զինվորների համար

Ապրիլի 4-ին, Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցում, նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի, Հայրենիքի և հայրենյաց պաշտպան զինվորների համար կատարվեց միասնական աղոթք:

Արարողությանը ներկա էր Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը: Աղոթքին մասնակցում էին նաև Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու թեմական առաջնորդներ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կառույցներում պաշտոնավարող եպիսկոպոսներ ու միաբաններ, հազարավոր հավատավոր հայորդիներ:

Նոր եկեղեցի՝ հնի հիմքերի վրա

Ապրիլի 3-ին Արարատյան Հայրապետական թեմի Մրգավան համայնքում ձեռամբ Արմավիրի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Սիոն եպիսկոպոս Ադամյանի օծվեցին եկեղեցու հիմքերը: Նոր կառուցվող այս եկեղեցին վեր կխոյանա խոնարհված ու քանդված Ս. Աստվածածին եկեղեցու տեղում:

Համայնքի անդամները Սրբազան հորն ընդունեցին աղուհացով:Նոր կառուցվող եկեղեցու տեղում եղել է Ս. Աստվածածին եկեղեցին, որը քանդվել էր խոր-հրդային վաղ շրջանում. չէր պահպանվել ոչինչ, բացի հիմքերից: Հին հիմքերի վրա նոր եկեղեցու կառուցումն իրականացվում է համանյքի ու դրա ղեկավարի միջոցներով և թեմի ճարտարապետ Հակոբ Բաբախանյանի նախագծով:

Աստվածամոր բարեխոսությունը խնդրենք մեր երկրի համար

Ապրիլի 10-ին Ս. Երրորդություն եկեղեցում բացվեց Կիրակնօրյա վարժարանի նկարչության խմբակի քառասունից ավելի սաների նկարների ցուցահանդես: Ցուցահանդեսին զուգահեռ՝ վարժարանի սաները ներկաների համար Տիրամոր Ավետման տոնի առթիվ պատրաստել էին «Աստվածամայր. մայր լուսո» խորագրով միջոցառում: Փոքրիկները ներկայացրեցին Աստվածաշնչյան բազմաթիվ դրվագներ՝ զարմացնելով իրենց բեմական կեցվածքով ու խաղով:

Քահանաները մասնակցեցին լռության երթին, որի ավարտին կատարվեց հոգեհանգստյան կարգ

Ապրիլի 10-ին Երևանում մի խումբ քաղաքացիների նախաձեռնությամբ կազմակերպվել էր լռության երթ՝ դեպի Եռաբլուր զինվորական պանթեոն: Նրանց նպատակն էր հարգանքի տուրք մատուցել պատերազմական գործողությունների ժամանակ զոհված զինվորների հիշատակին: Երթին մասնակցում էին հոգևորականներ՝ քահանաներ, սարկավագներ, դպիրներ:

Երթն ավարտվեց Եռաբլուրի հուշարձանի մոտ ծաղիկներ զետեղելով: Ապա Եռաբլուրի Ս. Նահատակաց եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Բաբկեն քահանա Հայրապետյանի գլխավորությամբ կատարվեց Հոգեհանգստյան կարգ՝ ի հիշատակ Հայոց բանակի նահատակված զինվորների:

Ազգային զարթոնքից ազգային գիտակցություն

Ապրիլի 10-ին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդարանում տեղի ունեցավ «Ազգային զարթոնքից ազգային գիտակցություն» խորագրով հանդիպում տեղեկատվական անվտանգության փորձագետ Սամվել Մարտիրոսյանի հետ:

Հանդիպման ընթացքում բանախոսը ներկայացրեց պատերազմական գործողությունների ընթացքում տեղեկատվական հոսքերի ու տեղեկատվական պատերազմների, դրանց ազդեցությունների ու հետևանքների մասին:

Պատերազմը կամ դրա սպառնալիքը կենցաղը մղում են երկրորդ, անգամ՝ երրորդ պլան: Նորմալ ու կենսունակ հասարակություններում պատերազմի սկզբում բավական ուժեղ է լինում համախմբումն էմոցիոնալ դաշտում: Ս. Մարտիրոսյանը խոսեց նաև տեղեկատվական դաշտում իրականացվող գործողությունների մասին, որոնք նախաձեռնում են հայ մասնագետները: Մեծ աշխատանք է տարվում հակահայկական կայքերը հայտնաբերելու, դրանց մասին հանրությանն իրազեկելու ուղղությամբ: Բանախոսը կարևորեց նաև հայ ընթերցողների զգոնությունը. ցանկացած տեղեկատվություն որպես ճշմարտություն ընդունելուց առաջ պետք է վերլուծել, թե ինչ և ինչպես է մատուցված: Թշնամին նպատակ ունի խուճապ առաջացնել և դա անում է ապատեղեկատվություն տարածելով՝ աշխատելով թե հայաստանյան, թե արտասահմանյան լսարանի վրա:

Հոգեհանգստյան կարգ՝ ի հիշատակ զոհված ոստիկանների

Ապրիլի 15-ին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցու հոգևոր հովիվ, ՀՀ Ոստիկանական ակադեմիայի հոգևոր պատասխանատու Տ. Պետրոս ավագ քահանա Մալյանը թեմի «Արարատ» երգչախմբի հետ մասնակցեց ՀՀ Ոստիկանության Ակադեմիայում կազմակերպված միջոցառմանը՝ նվիրված Ոստիկանության օրվան:

Կոտայքի թեմի առաջնորդ և ՀՀ Ոստիկանության հոգևոր պատասխանատու գերաշնորհ Տ. Առաքել եպիսկոպոս Քարամյանի նախագահությամբ արցախյան հերոսամարտի և ծառայության ընթացքում զոհված ոստիկանների հուշարձանի մոտ կատարվեց հոգեհանգստյան կարգ՝ ի հիշատակ զոհված ոստիկանների:

Արարողությանը ներկա էին ՀՀ փոխոստիկանապետ Հունան Պողոսյանը, ՀՀ Ոստիկանական ակադեմիայի պետ Հովհաննես Վարյանը, բարձրաստիճան պաշտոնյաներ, զոհված ոստիկանների հարազատներ, հյուրեր:

«Արարատ» երգչախումբը՝ «Վերածնունդ» միջազգային փառատոնում

Ապրիլի 10-30-ը Գյումրիում տեղի ունեցավ «Վերածնունդ» միջազգային ութերորդ փառատոնը, որի բացմանն իր հայրապետական օրհությունն

էր հղել Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի օրհնությամբ թեմից երկու երգչախումբ մասնակցեց փառատոնին:

Ապրիլի 16-ին Գյումրիում ելույթ ունեցավ Առաջնորդանիստ Սուրբ Սարգիս եկեղեցու երիտասարդաց միության «Արարատ» երգչախումբը (գեղ. ղեկավար և խմբավար՝ Գրիգոր Հարությունյան)՝ արժանանալով բարձր գնահատանքի:

Փառատոնին մասնակցեց նաև թեմի «Նշխարք» անսամբլը:

Փառատոնը կազմակերպվում է ՀՀ մշակույթի նախարարության, Մարդկային ռեսուրսների զարգացման «Փյունիկ» համահայկական հիմնադրամի և Երևանի պետական կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղի աջակցությամբ: 2016 թ. մրցույթ-փառատոնին մասնակցելու հայտ են ներկայացրել ավելի քան 3000 մասնակից՝ 36 երկրից:

Նավասարդ Սրբազանը մասնակցեց ՀՀ ԳԱԱ տարեկան ժողովին

Ապրիլի 20-ին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ, ՀՀ ԳԱԱ պատվավոր

դոկտոր Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը մասնակցեց ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի տարեկան ընդհանուր ժողովին:

Ժողովի աշխատանքը սկսելուց առաջ գիտնականները լռության րոպեով հարգեցին վերջին օրերին Արցախյան սահմանում նահատակված զինվորների և ի Տեր հանգչած հայ գիտնականների հիշատակը: Այնուհետև Նավասարդ Սրբազանը ողջունեց ներկաներին՝ փոխանցելով Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությունը:

Գիտնականներին ողջունեց նաև ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանը: ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը ներկայացրեց հաշվետու ժամանակաշրջանում ակադեմիայի գործունեությունը, հրատարակությունները, ուշադրություն հրավիրեց Ցեղասպանության թեմայի շուրջ կատարված ուսումնասիրությունների, գիտության տարբեր բնագավառներում ակադեմիայի ինստիտուտներում կատարված աշխատանքների վրա:

Ժողովի առաջին նիստի ավարտին գիտնականներն ընդունեցին հայտարարություն, որում դատապարտում են Արցախյան սահմանին հակառակորդի կողմից սանձազերծված պատերազմը:

Նոր ծնունդ առավ 23 երեխա

Ապրիլի 22-ին Արարատյան Հայրապետական թեմի Նորք Մարաշի Ս. Աստվածածին եկեղեցու հոգևորականները մկրտեցին մանկատան և Արցախից եկած 23 երեխաների: Նրանից 11-ը Երևանի «Մանկան տան» մինչև 5 տարեկան սաներն էին, 11-ը՝ զոհված

ազատամարտիկների արցախցի երեխաներ, ովքեր Ստեփանակերտից եկել էին Երևան Նորք-Մարաշ վարչական շրջանի հրավերով: Մկրտվեց նաև անապահով ընտանիքի մեկ երեխա: Արարողությունը նախաձեռնել էր Նորք-Մարաշ վարչական շրջանը՝ Ցեղասպանության 101-րդ տարելիցի առիթով:

Մկրտության արարողությունը կատարեցին Ս. Աստվածածին եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Զաքարիա քահանա Ավետիսյանը, նույն եկեղեցու խորհրդակատարներ Տ. Թովմա քահանա Անդրեասյանը, Տ. Զգոն քահանա Աբրահամյանը և ՀՀ ԶՈՒ հոգևոր սպասավոր Տ. Զաքարիա քահանա Անանյանը: Երեխաների կնքահայրերը վարչական շրջանի և Երևանի ավագանու անդամներն էին, քաղաքապետարանի աշխատակիցները, ովքեր ստանձնցին երեխաների հոգևոր դաստիարակության պատասխանատվությունը:

Նոր խաչքար Սրբադասված նահատակների հիշատակին

Ապրիլի 23-ին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարադ արքեպիսկոպոս Կճոյանի ձեռամբ օծվեց Մասիսի Ս. Թադեոս եկեղեցու բակում տեղադրված խաչքարը: Վարդանյան ընտանիքի բարերարությամբ պատրաստված այս խաչքարը նվիրված է Հայոց ցեղասպանության սրբադասված նահատակների հիշատակին:

Այնուհետև Սրբազան հայրը օծեց եկեղեցու հինգ նոր սրբապատկերները:

Ս. Թադեոս եկեղեցու բակում «Գեղարդ» երիտասարդաց միության անդամները առաջին անգամ երգեցին իրենց իսկ ստեղծած «Գեղարդ» երիտասարդաց միության հիմներգը՝ արժանանալով Սրբազան հոր օրհնությանը: Հոգևոր երգերի շարանով հանդես եկան կիրակնօրյա վարժարանի սաները:

Հոգեհանգստյան կարգ՝ Չեռնոբիլյան աղետի զոհերի երեսնամյա տարելիցին

Ապրիլի 26-ին ՀԱԹ Սուրբ Երրորդություն եկեղեցում ձեռամբ եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Զենոն քահանա Բարսեղյանի տեղի ունեցավ հոգեհանգստյան կարգ՝ նվիրված Չեռնոբիլի ատոմակայանի աղետի զոհերի երեսնամյա տարելիցին:

Հոգեհանգստյան կարգը տեղի ունեցավ Հայաստանի «Չեռնոբիլ» միության նախագահ Գևորգ Վարդանյանի նախաձեռնությամբ: Արարողությանը զոհերի հիշատակին իրենց հարգանքն ու խոնարհումը բերեցին Հայաստանում հավատարմագրված մի շարք երկրների լիազոր դեսպաններ, բարձրաստիճան պետական և զինվորական անձինք, հավատացյալ հայորդիներ:

Ծաղկահավաքը սկսվեց հոգևոր օրհնությամբ

Ապրիլի 27-ին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Պետրոս ավագ քահանա Մալյանը, Հայկ սարկավագ Պալոյանը, թեմի «Ծաղկազարդ» համախումբը և երիտասարդաց միությունների անդամները Ծիծեռնակաբերդում մասնակցեցին Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի (FPWC) կազմակերպած ծաղկահավաքին:

Միջոցառման սկզբում Տեր հոր գլխավորությամբ և երգչախմբի կատարմամբ հնչեց Տերունական աղոթքը: Ապա «Ծաղկազարդ» համախումբը (գեղ. ղեկավար՝ Լիլիթ Գրիգորյան) կատարեց հոգևոր երգերի շարք:

Միջոցառմանը ներկա էին Հայաստանում Ռուսաստանի արտակարգ և լիազոր դեսպան Իվան Վոլինկինը, «Վիվասել ՄՏՍ» ընկերության գործադիր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը, FPWC հիմնադրամի նախագահ Ռուբեն Խաչատրյանը, տարբեր հասարակական կառույցների անդամներ, երիտասարդներ, դպրոցականներ:

FPWC հիմնադրամի նախաձեռնությամբ 2010թ.-ից արդեն յոթերորդ անգամ ապրիլի 24-ին Հայոց Ցեղասպանության զոհերի հուշահամալիրում խոնարհված ծաղիկներն ամեն տարի հավաքվում են, դրանց ցողունն անջատվում է ծաղկաթերթերից. առաջինից պարարտախառնուրդ է ստացվում, իսկ ծաղկաթերթերն օգտագործվում են ձեռակերտ վերամշակված թուղթ պատրաստելու համար: Պարարտախառնուրդն օգտագործվում է Հիշողության պուրակում հողի մշակման համար, իսկ ձեռակերտ թղթից հուշագրեր, շնորհակալագրեր, բացիկներ են պատրաստվում:

Հոլանդական երգչախումբը կատարեց հայկական հոգևոր երգեր

Ապրիլի 30-ին Արարատյան Հայրապետական թեմի Մասիսի Ս. Թադեոս եկեղեցում Հոլանդիայից ժամանած «Կռունկ» երգչախումբը (գեղ. ղեկավար՝ Ինգրիդ Ֆան Ռոյ) կատարեց «Սուրբ-Սուրբ» շարականը: Ապա եկեղեցու բակում շարունակեց ելույթը՝

հայ ժողովրդական երգերի կատարումներով:

Հոլանդական այս խմբում ոչ մի հայ չկա. հոգևոր ու աշխարհիկ երգերի նկատմամբ հետաքրքրությունն առաջացել է՝ իրենց մոտ տարիներ առաջ ելույթ ունեցած մի հայ երգչի կատարումներն ունկնդրելով: Նրանք Հայաստանում են տուրիստական այցով, սակայն առիթն օգտագործել են՝ իրենց արվեստը հայերին ներկայացնելու համար: Նրանց ուղեկցում է հոլանդաբնակ Լուսինե Բունիաթովան: Վերջինս մասիսցի անապահով ընտանիքների երեխաների համար նվերների փաթեթներ էր պատրաստել, որոնք հանձնեց եկեղեցու բակում:

Նորոգված դասարան՝ հոգևոր դասերի համար

Մայիսի 3-ին Արարատյան Հայրապետական թեմի Նորք-Մարաշի Ս. Աստվածածին եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Զաքարիա քահանա Ավետիսյանն ու նույն եկեղեցու խորհրդակատար Տ. Զգոն քահանա Աբրահամյանը մասնակցեցին Նորք-Մարաշի թիվ 61 հիմնական դպրոցում Հայ եկեղեցու պատմության դասարանի բացմանը:

Դասասենյակը նորոգվեց Տեր Զաքարիայի նախաձեռնությամբ՝ Արարատյան Հայրապետական թեմի Նորք-Մարաշի Ս. Աստվածածին եկեղեցու հավատացյալների և Երուսաղեմ մեկնած մի խումբ ուխտավորների ջանքերով:

Արարողության ավարտին դպրոցի աշակերտները ներկայացրեցին Ս. Մեսրոպ Մաշտոցի ու գրերի գյուտի մասին պատմող ներկայացում՝ համեմված շարականներով ու ազգային պարերով: Պատանիները կարևորեցին հոգևորի և ազգայինի միասնությունը:

Համբարձման տոնն Արարատյան Հայրապետական թեմում

Մայիսի 5-ին Համբարձման տոնի առթիվ Արարատյան Հայրապետական թեմի երիտասարդաց միությունները կազմակերպեցին մեծ տոնախմբություն՝ համեմված ժողովրդական սովորույթներով:

Երևանի Թումանյանի այգում համախմբվել էին երիտասարդաց միությունների անդամներն, ազգագրական խմբեր, «Երիտասարդ պատմագետների ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը, քաղաքի բնակիչները: Միջոցառմանը մասնակցում էին նաև Արարատյան Հայրապետական թեմի «Վարք հայոց», «Վան» և «Տավրոս» ազգագրական երգուպարի խմբերը:

Ազգագրական երգուպարից բացի երեխաների մի խումբ ներկայացրեց Զանգյուլումի ազգային ավանդությունը: Ապա կազմակերպվեց վիճակահանություն, որին մասնակցելու հնարավորություն ունեցավ նաև հանդիսատեսը:

Երիտասարդները պատրաստել էին կաթնապուրի հյուրասիրություն: Այս ճաշատեսակը վերագրվում է տոնին, և ժողովրդական մի սովորությամբ մինչև Համբարձում շատ բնակավայրերում կաթնապուրի «պաս» էին պահում:

Խաչապտույտ Համբարձման տոնի առթիվ

Մալաթիայի Ս. Աստվածածին եկեղեցու երիտասարդաց միությունը մեծ շուքով նշեց Հիսուս Քրիստոսի Համբարձման տոնը: Երեկոյան ժամերգությունից առաջ եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Տիրան քահանա Առուշանյանի և խորհրդակատար Տ. Գաբրիել քահանա Պետրոսյանի գլխավորությամբ տեղի ունեցավ խաչերթ:

Խաչվառների ու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և ՀԲԸՄ Մալաթիայի Հայորդաց տան թմբկահարների խմբի ուղեկցությամբ եկեղեցու համայնքի անդամները խաչապտույտ կատարեցին թաղամասում: Մասնակիցները Մալաթիայի Ս. Աստվածածին եկեղեցու բակից թմբուկներով, զուռնա-դհոլով շարժվեցին դեպի մոտակա շենքերի բակեր՝ բնակիչներին մասնակից դարձնելով տոնին:

«Հաղթանակի աղոթք» առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցում

Մայիսի 9-ին՝ հավարտ երեկոյան ժամերգության, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի հանդիսապետությամբ առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցում կատարվեց «Հաղթանակի աղոթք»: Այն նախաձեռնել էին Արարատյան Հայրապետական թեմի երիտասարդական կառույցների անդամները:

Եկեղեցում հավախմբված երիտասարդներն ու զինվորները Սրբազան հոր առաջնորդությամբ աղոթք վերառաքեցին առ Աստված՝ հայցելով խաղաղություն մեր Հայրենիքի և գոհություն հայտնելով Ամենազոր Տիրոջը մեր ազգին պարգևած հաղթանակների համար, ինչպես նաև՝ ուխտեցին լինել արժանի ժառանգորդը Վարդանանց հերոսների:

Զորավոր Ավետարանը՝ Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցում

Մայիսի 14-ին Մ. Մաշտոցի անվան Մատենադարանից Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցի բերվեց Զորավոր Ավետարանը: Եկեղեցականների ու հավատացյալների թափորը Փարպեցի-Թումանյան փակուղուց դիմավորեց Ավետարանը՝ ուղեկցելով դեպի եկեղեցի:

Եկեղեցում Ս. Մովսես Տաթևացի կաթողիկոսի մահվան հիշատակի օրվա առթիվ մատուցվեց Ս. Պատարագ:

Զորավոր Ավետարանը թվագրվում է 13-14-րդ դարերին: Այն կիլիկյան մանրանկաչության գոհարներից է: Ավետարանի հետ կապված բազմաթիվ հրաշքների ու բժշկությունների հիշատակություններ կան: Եվ հենց այդ պատճառով ոչ միայն Ավետարանն, այլև եկեղեցին, որտեղ այն պահվել է երկար տարիներ, մարդիկ կոչել են Զորավոր: Այս եկեղեցու բակում են ամփոփված Քրիստոսի 72 առաքյալներից Ս. Անանիայի մասունքները:

Արաբկիր համայնքի 5 օծված զանգերի խորհուրդը

Մայիսի 15-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությամբ, Մայր Տաճարի Լուսարարապետ Գերաշնորհ Հովնան եպիսկոպոս Հակոբյանի ձեռամբ օծվեցին Արարատյան Հայրապետական թեմի Արաբկիր համայնքում կառուցվող եկեղեցու զանգերը:

Օծված հինգ զանգերից յուրաքանչյուրն ունի իր անունն ու խորհուրդը:

Առաջին զանգն (780 կգ) իր մեջ ամփոփում է հավատքի խորհուրդը: Այն իր ղողանջով մարդկանց հոգիներում հավատ ու սեր է տարածելու:

Զանգը կրում է 3 տաղավար տոների նկարագրությամբ զարդաքանդակներ՝ Ս. Հարություն, Ս. Ծնունդ և Ս. Խաչ:

Երկրորդ զանգի (400 կգ) խորհուրդը հայրենասիրությունն է: Իր ղողանջով այն համայն հայությանը լցնելու է հայրենիքի հանդեպ սիրով:

Այն կրում է Ս. Գրիգոր Նարեկացու սրբապատկերը:

Ծնողասիրության խորհուրդն իր մեջ ամփոփում է երրորդ զանգը (230 կգ): Այս զանգի ղողանջները ծնողի հանդեպ սեր են քարոզելու: Զանգի վրա պատկերված է Ս. Մարիամ Աստվածածնի սրբապատկերը:

Չորրորդ զանգը (150 կգ) վերաբերում է զավակասիրությանը: Իր ղողանջով այն ավետելու է Հիսուս Քրիստոսի ծնունդն ու հայտնությունը: Կրում է հայտնության նկարագրությամբ

զարդաքանդակ:

Եվ վերջապես, հինգերորդ զանգն (100 կգ) իր մեջ կրում է մկրտության խորհուրդը և իր ղողանջներով մարդկանց հորդորելու է մկրտվել և հնարավորություն ունենալ արժանանալ Աստծո արքայությանը:

Հոգեհանգստյան կարգ՝ ի հիշատակ ՁԻԱՀ-ից մահացածների

Մայիսի 15-ին՝ հավարտ Ս. Պատարագի, Արարատյան Հայրապետական թեմի Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցում Տեր Վահան քահանա Առաքելյանը հոգեհանգստյան կարգ կատարեց՝ ի հիշատակ ՁԻԱՀ-ից մահացածների: Արարողությանը ներկա էին Արարատյան Հայրապետական թեմի «Ցերեկային Կենտրոն»-ի աշխատակիցները, շահառուները և «Հայկական Կարմիր Խաչ» Ընկերության Երիտասարդական Կարմիր Խաչի (ԵԿԽ) աշխատակիցներն ու կամավորները:

Ամեն տարի մայիսի երրորդ կիրակին աշխարհի բազմաթիվ երկրներում, այդ թվում նաև Հայաստանում, ընդունված է հիշել այն մարդկանց, ովքեր մահացել են ՁԻԱՀ-ից: Այդ օրն իրականացվող յուրաքանչյուր միջոցառում նպատակ ունի ողջ աշխարհով մեկ հասարակության և կառավարության ուշադրությունը սևեռել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի խնդիրներին, ՄԻԱՎ վարակակիրներին և հիվանդության տարածման կանխարգելմանը:

«Ագռավ» պիեսը՝ քահանայի գրած երաժշտությամբ

Մայիսի 16-ին Ս. Սարգսյանի անվան Համազգային թատրոնում ցուցադրվեց Կառլո Գոցցիի «Ագռավ» պիեսը՝ Արարատյան Հայրապետական թեմի Նորք-Մարաշի Ս. Աստվածածին եկեղեցու խորհրդակատար Տ. Թովմա քահանա Անդրեասյանի հեղինակած երաժշտությամբ և որոշ երգերի տեքստերով: Ներկայացումը Երևանի թատերական ինստիտուտի դերասանական 3-րդ կուրսի կուրսային աշխատանք էր՝ կուրսղեկ Սամսոն Ստեփանյանի բեմադրությամբ:

ՀՀ ԳԱԱ-ում մեկնարկեց «Արշալույս քրիստոնեության հայոց» գիտաժողովը

Մայիսի 19-ին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի օրհնությամբ ՀՀ ԳԱԱ-ում մեկնարկեց «Արշալույս քրիստոնեության հայոց» գիտաժողովը: Գիտաժողովին հայ գործընկերների հետ մասնակցում էին նաև գիտնականներ Լեհաստանից ու Ռուսաստանից: Հյուրերի շարքում էր նաև Ռուս Ուղղափառ եկեղեցու հոգևորական, լեզվաբան, պատմաբան և աստվածաբան Հայր Հովհաննես Գուայտան:

Ողջունելով ներկաներին՝ Սրբազան հայրն ի մասնավորի ասաց.

«Ահեղ գոչմամբ ուռն ի ձեռին

Իջեալ յերկնից Միածին Որդին,

Տեսանելով արքուն անուն

Հայաստանեայց սուրբ Լուսաւորչին»:

(Պաղտասար Դպիր)

Հարգարժա՛ն ներկաներ, ոսկե ուռնակի քրիստոնեակոչ զարկն է այսօր միաբանել այստեղ ամենքիս՝ ոգեկոչելու և արժևորելու Առաքելահաստատ մեր Սուրբ եկեղեցին ու քրիստոնեական հավատքի փրկատու զորությունը:

Աստվածային նախախնամությամբ հայոց աշխարհ եկած Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալները դարձան մեր սուրբ նահատակների նախակարապետը: Ճշմարտության և Կենաց Խոսքի սերմնացանները բյուր անգամ պտղաբերեցին հոգու քաղցից տոգորված անդաստաններում: Աստված հավատաց հայի սիրուն, շնորհ արեց Արածանիում մկրտվելու և լուսավորչյան լույսն ու փրկչական ջահը հավերժ վառ պահելու սուրբ առաքելությունը: Անհավատության կռատները դարձան ծաղկած խաչեր ու խաչքարեր, Աստծուն փառաբանելու և մերձենալու զորեղ սրբավայրեր: «Ե՛վ թագավորի և՛ ամբողջ ժողովրդի հետ մեկտեղ Ս. Գրիգոր Լուսավորիչ գնաց իսկույն, հասավ այն տեղը, ուր իրեն ցույց էր տրված հրեղեն սյունը ոսկի խարիսխի վրա և իսկույն բարձր պարիսպով տեղը շրջափակեց ի պատիվ, դռներով ու փականքով ամրացրեց և կանգնեցրեց այնտեղ ևս փրկչական խաչի նշանը, որպեսզի առհասարակ ամեն ոք, որ այնտեղ հասնի, ամենազոր արարչին՝ Աստծուն երկրպագելով ծունկ դնի» (Ագաթանգեղոս): Ողջ քրիստոնյա աշխարհի համար աստվածասեր հայոց ազգը դարձավ որպես կենսատու հավատքի ռահվիրա:

Սիրելինե՛ր, թող այս գիտաժողովը, որ խոսուն վերտառություն ունի, ներկաներիս համար շնորհաբեր առիթ դառնա՝ լսելու երկնաշունչ և երկնաձիգ, վեհացնող ու գոտեպնդող ձայնն աղոթաթախ մեր գմբեթների, որոնք պատմում են մեր անպատմելի փառքը նախնյաց նահատակության, այդ գնով շահված մեր անմահության և չարի դեմ տարած մեր հաղթանակի: Թող Լուսավորչի՝ «Հայաստանյայց վերածնության հոր», սուրբ գավազանը մեզ միշտ ի փրկություն առաջնորդի՝ բարեխոսությամբ Ս. Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալների և հավատքի համար նահատակված սրբերի: Եվ թող հայոց հավատքի հոր դարերի խորքից եկող ձայնը, որպես մշտամնա պատգամ, դառնա հայի հոգու կանչ և ոգեկոչում. «Եկայք շինեսցուք սուրբ զԽորանն լուսոյ. քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի»: Ամեն»:

Գիտաժողովը նվիրված է հայոց պատմության առանցքային նշանակություն ունեցող հարցերից մեկին՝ Հայաստանում առաքելական քարոզչության ժամանակաշրջանին՝ մինչև քրիստոնեությունը պետական կրոն հռչակելը: Նպատակն է հայագիտության բնագավառում արձանագրված ձեռքբերումների, նոր բացահայտումների հիմնավոր քննությամբ անդրադառնալ պատմության և ավանդույթների ակունքներին, ճշտել առասպելաբանության ու պատմական շրջանակը, ներկայացնել Հայաստանի քրիստոնեացման նախադրյալները, պատմական նշանակությունը:

Գիտաժողովը կազմակերպել էին ՀՀ ԳԱԱ-ն, Երևանի պետական համալսարանը, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի Մատենադարանը՝ Երվանդ և Վերժին Մըսրլյանների հովանավորությամբ:

Սրբապատկերների ցուցահանդես

Մայիսի 21-ին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի օրհնությամբ Եղիշե Չարենցի տուն-թանգարանում տեղի ունեցավ թեմի ուսումնական կենտրոնի սաների աշխատանքների ցուցահանդեսը՝ ՀՀ մշակույթի նախարարության կողմից կազմակերպվող «Թանգարանային գիշեր» ամենամյա ծրագրի շրջանակում:

Ցուցահանդեսին ներկայացված էին կանոնիկ տասնյոթ սրբապատկեր և մանրանկար աշխատանքներ՝ արված ուսումնական կենտրոնի տասներկու աշակերտների կողմից. Հիսուս Քրիստոս, Տիրամայրը մանկան հետ, Ս. Գրիգոր Նարեկացի, Ս. Մեսրոպ Մաշտոց, Ս. Հովհաննես Ավետարանիչ, Քրիստոսի Անձեռակերտ պատկերը, Ավետում, Ս. Գևորգ, Ս. Աստվածածին:

Մկրտվեցին Խարբերդի մանկատան սաները

Մայիսի 26-ին Ս. Երրորդություն եկեղեցում տեղի ունեցավ Խարբերդի մանկատան 17 սաների մկրտությունը: Երեխաների կնքահայրերը եկեղեցու երիտասարդաց միության անդամներն էին: Արարողությանը ներկա էին մանկատան տնօրեն Հարություն Բալասանյանը, մանկավարժները, երեխաների հարազատներ ու եկեղեցու համայնքի անդամները:

Համայնքի անդամները երեխաների համար խաչերից բացի պատրաստել էին նաև նվերների փաթեթներ՝ աղոթագրքեր, խաչով թևնոցներ:

Օրհնվեց դպրոցի խաչքարը

Մայիսի 26-ին Արարատյան Հայրապետական թեմի Մալաթիայի Ս. Աստվածածին եկեղեցու խորհրդակատար Տ. Գաբրիել քահանա Պետրոսյանն օրհնեց Երևանի Պեյո Յավորովի անվան թիվ 131 դպրոցի բակում տեղադրված խաչքարը: Այն նվիրված է դպրոցի անվանափոխության 50-ամյակին: Խաչքարը կանգնեցվել է Երևանի ավագանու անդամ Գրիգորի Գրիգորյանի մեկենասությամբ:



Արարողությանը ներկա էին դպրոցի տնօրեն Գրիգոր Սաֆարյանը, ուսուցիչներ, Աջափնյակ համայնքի բնակիչներ:

Նավասարդ Սրբազանը մասնակցեց Նժդեհի արձանի բացմանը

Մայիսի 28-ին Հայաստանի առաջին Հանրապետության տոնի առթիվ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը մասնակցեց Գարեգին Նժդեհի արձանի բացմանը: Արարողությանը ներկա էին ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը, բարձրաստիճան պաշտոնյաներ, արվեստի, գիտության ու հասարակական գործիչներ:

Տոնի առթիվ շնորհավորելով ներկաներին՝ Նավասարդ Սրբազանն ի մասնավորի ասաց.

«ԻՄ ՀՈԳԻՆ ԵՐԿՈՒ ՀԵՆԱՐԱՆՆԵՐ ՈՒՆԻ՝ ԱՍՏՎԱԾ ԵՎ ՀԱՅՐԵՆԻՔ».Գարեգին Նժդեհ:

Նժդեհյան այս կարգախոսն Ավարայրի ոգու արտացոլումն է և շարունակականությունը, «Մահ իմացեալ անմահություն է» պատգամի լրումն է և ոգեկոչումը: Զարմանալիորեն ճիշտ և ճշմարիտ քրիստոնեական պատգամախոսությամբ հայոց «Երկրորդ Դավիթ Բեկ»-ն ու թշնամու բնորոշմամբ՝ «Աժդահա փաշա»-ն իր «Ինքնակենսագրական»-ում գրել է. «Եղել եմ խորը հաւատքի եւ էտիկայի մարդ...: Հավատքի և պաշտամունքի տաճարում միշտ էլ առաջին տեղերը յատկացուցած են եղել Աստծոյ եւ Հայրենիքին: Հայաստանն է եղել երկրաւոր սրբազնագոյնն ինձ համար»: Եվ այս ամենին հավուր պատշաճի կարելի է հավելել այն իրողությունը, որ նա բոլոր ճակատամարտերը սկսել է եկեղեցուց՝ աղոթքով: Նրա զենքերն ու սպարապետական գոտին օծվել են եկեղեցում: Զինվորներին հղած հրամաններն ավարտվել են այս կերպ. «Մեզ հետ Աստված և Դավիթ Բեկի վրիժակ հոգին», «Մեզ հետ Աստված և մեր մեծ հայորդիների անհանգիստ հոգիները», «Աստված և իմ սերը ձեզ հետ»... Մեծ զորահրամանատարն անսահման սիրով էր կապված իր քաջ մարտիկների հետ: «Զորեղ տպավորություն կձգե զինվորներու վերաբերումը դեպի իրենց հրամանատար Նժդեհը: Այդ հարաբերություն չէ դեպի իրենց պետը, այլ մասնավոր երկրպագություն գերագույն էակի մը հանդեպ: Զինվորը հանձին անոր կտեսնե մարմնացումը թագավորի մը, որը իմաստությամբ կկառավարե հայ ժողովուրդը» (գնդապետ Ֆիլիպով, բուլղարական բանակի սպա):

Նժդեհյան հայրենասիրությունն անգերազանցելի է: Առավելապես այս օրերի մեջ վերարժևորվում են նրա ինքնայրման հասնող նվիրումն ու սերը հայրենիքի և սեփական ժողովրդի հանդեպ: «Ցեղամարդ»-ը պաշտպանն էր ցեղի ամեն մի մասնիկի, պաշտպանը «Հայրենիք» կոչվող բնօրրանի:

«Ահա եւ իմ վերջին խոսքը. Կուզէի աչքերս փակել մի ահեղ ճակատամարտում, յաղթութեան թեւերի վրայ, զօրքերիս գոռ աղաղակների մէջ: Սակայն ուր էլ եւ ինչպես էլ մեռնեմ, թող սիւնեաց իմ նախկին ռազմիկները Խուստուփ լերան սրտի մէջ ամփոփեն իմ մի բուռ աճիւնը: ... Ուր էլ եւ երբ էլ մեռնեմ, հավատա, իմ ազիզ ժողովուրդ, որ արտաքին վտանգներիդ ժամանակ իմ անհանգիստ հոգին այցի եւ օգնութեան պիտի փութայ իր հայրենի աշխարհին և աներեւութաբար քո բանակները առաջնորդէ: Զինուոր զաւակդ՝ Նժդեհ, 1937թ., Սոֆիա»:

Արդ, «Նժդեհ» եզրը նախասահմանեց ազնվագույն հայորդու նվիրական ընթացքը, որը հանուն հայի և հայրենիքի նժդեհացավ և անմահացավ հավերժության մեջ: Նա այսօր հոգի է և երկնայիններում բարեխոս մեզ համար: Նաև պատգամախոս. «Նա, ով ընդունում է Աստծոյ գոյութիւնը, ընդունում է նաեւ իր պարտականութիւնը հանդէպ գերագոյն իրականութեանց՝ ԱԶԳ, ՀԱՅՐԵՆԻՔ, ՊԵՏՈՒԹԻՒՆ»: Ամեն»:

Միջազգային փառատոնում թեմի երգչախմբերն արժանացան գլխավոր պարգևների

Մայիսի 31-ին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանն ընդունեց թեմի «Արարատ» երգչախմբի և «Նշխարք» վոկալ անսամբլի անդամներին և շնորհավորեց՝ միջազգային փառատոնում լավագույնս ներկայանալու և բարձր պարգևների արժանանալու համար:

Արարատյան Հայրապետական թեմի «Արարատ» երիտասարդաց միության «Արարատ» երգչախումբը և «Նշխարք» վոկալ անսամբլն ապրիլին Գյումրիում մասնակցել էին Երիտասարդ կատարողների «Վերածնունդ» միջազգային 8-րդ փառատոնին, որը նվիրված էր Հայաստանի անկախության 25-ամյակին:

Փառատոնում թեմի երգչախմբերն աչքի են ընկել կատարողական բարձր որակներով՝ արժանանալով բարձր պարգևների: «Նշխարք» անսամբլը «Վոկալ անսամբլ» անվանակարգում արժանացել է «Գրան պրի» մրցանակի: «Արարատ» երգչախմբի խմբավար Գրիգոր Հարությունյանը ճանաչվել է փառատոնի լավագույն խմբավար, իսկ «Արարատ»-ը «Երգչախումբ» անվանակարգում արժանացել է երկրորդ կարգի դափնեկրի կոչմանը:

Փառատոնի շնորհակալագրերն ու պատվոգրերը նրանց հանձնեց Նավասարդ Սրբազանը՝ մաղթելով հաղթահարված նորանոր բարձունքներ ու մեծ բեմեր:

Բացվեց Մխիթար Գոշի դիմաքանդակը

Մայիսի 31-ին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը մասնակցեց Հայաստանի փաստաբանների պալատի մոտ տեղադրված՝ Մխիթար Գոշի դիմաքանդակի բացմանը:

Միջոցառումը Սրբազան հոր նախագահությամբ սկսվեց Տերունական աղոթքով: Գոշի դիմաքանդակը Փաստաբանների պալատին է նվիրաբերել Կառլեն և Սառա Եսայանների ընտանիքը:

Միջոցառմանը ներկա էին ՀՀ ԱԺ և կառավարության անդամներ:

Առաջին ուխտի Պատարագն Արտաշատի Ս. Հովհաննես Ավետարանիչ եկեղեցում

Մայիսի 31-ին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի հանդիսապետությամբ Արտաշատի Ս. Հովհաննես Ավետարանիչ եկեղեցում մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչը եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Թաքուլ քահանա Գասպարյանն էր:

Արարողությանը ներկա էին ՀՀ Վարչապետ Հովիկ Աբրահամյանը, Արարատի մարզպետ Ռուբեն Աբրահամյանը, թեմի բազմաթիվ համայնքներ՝ իրենց հովիվների գլխավորությամբ:

Ուղիղ մեկ տարի առաջ այս օրն օծվեց Արտաշատի Ս. Հովհաննես Ավետարանիչ եկեղեցին, և հենց այդ առթիվ էլ մայիսի 31-ը հռչակվել է եկեղեցու ուխտի օր:

Տոնի առթիվ համայնքը եկեղեցու բակում կազմակերպել էր համերգ՝ Արտաշատի արտադպրոցական ուսումնական հաստատության սաների և եկեղեցու երիտասարդաց միության անդամների մասնակցությամբ:

Օրհնվեց արցախյան քառօրյա պատերազմի նահատակների հիշատակին նվիրված խաչքարը

Մայիսի 31-ին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի հանդիսապետությամբ Երևանի Թաքուլ Կրպեյանի անվան այգում բացվեցին Արցախյան քառօրյա պատերազմում նահատակված հերոսների հիշատակին նվիրված խաչքարը և պուրակը: Օրհնության կարգը կատարեց Նոր Նորքի Ս. Աստվածածին եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Նշան քահանա Ալավերդյանը: Արարողությանը ներկա էր ՀՀ Վարչապետ Հովիկ Աբրահամյանը:

Խաչքարը տեղադրվել է Հայաստանի երիտասարդական հիմնադրամի և Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ուսանողական խորհրդի ջանքերով:

Հունիսմեկյան «Երազանքների քաղաք»

Հունիսի 1-ին Արարատյան Հայրապետական թեմի երիտասարդական միությունների անդամները Հյուսիսային պողոտայում մասնակցեցին «GMG մեդիա գրուպ»-ի կազմակերպած «Երազանքների քաղաք» ցուցահանդես-փառատոնին:

Միջոցառումը սկսվեց տերունական աղոթքով: Ապա Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի օրհնության խոսքը ներկաներին փոխանցեց թեմի երիտասարդական կառույցների համակարգող, առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Պետրոս ավագ քահանա Մալյանը: Նրան ուղեկցում էր Հայկ սարկավագ Պալոյանը: Միջոցառման բացմանը ներկա էր Երևանի փոխքաղաքապետ Արամ Սուքիասյանը:

Հյուսիսային պողոտայում տեղադրված տաղավարներից մեկը հատկացված էր Արարատյան Հայրապետական թեմին, որտեղ ներկայացված էին թեմի մի շարք համայնքների երիտասարդաց միությունների անդամների ձեռքի աշխատանքները:

Աղոթք ու խնկարկում նահատակ զինվորների հիշատակին

Հունիսի 5-ին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցում հավարտ Ս. Պատարագի կատարվեց հոգեհանգստյան կարգ՝ ի հիշատակ զոհված զինվորների և մասնավորաբար՝ ապրիլյան քառօրյայի ժամանակ նահատակվածների: Արարողությունը նախագահում էր օրվա պատարագիչ, եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Պետրոս ավագ քահանա Մալյանը:

Արարողության ավարտին առաջնորդարանի դահլիճում կազմակերպվեց հանդիպում զոհվածների ընտանիքների հետ: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությամբ հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի սոցիալական բաժնի տնօրեն Տ. Մարկոս քահանա Մանգասարյանը:

Տ. Շահե քահանա Հայրապետյանը ներկաներին փոխանցեց Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի մխիթարության խոսքն ու խոնարհումը, ապա ներկայացրեց Ամերիկայի Արևմտյան թեմի հայկական համայնքի ներկայացուցիչներին՝ Նունե Ավետիսյանին, Թոմիկ Ալեքսանյանին ու Գագիկ Թամրազյանին: Վերջիններս Հայաստան էին եկել ապրիլյան քառօրյայի ժամանակ զոհված ու վիրավոր զինվորների ընտանիքներին հանդիպելու և հեռուստամարաթոնի ընթացքում հավաքված գումարը նրանց փոխանցելու համար: Տիկին Նունե Ավետիսյանը համայնքի անունից իր խոնարհումն ու երախտիքի խոսքն ասաց:

Նրանք այցելել են Հայաստանի ու Արցախի զոհված զինվորների ու կամավորների ընտանիքներին: Դրամական աջակցություն են ցուցաբերել նաև վիրավորներին, ովքեր արտասահմանում բուժումը շարունակելու կարիք ունեն:

Ապրիլի սկզբին Լոս Անջելեսում հանգանակված շուրջ 380 000 հազար դոլարն ընտանիքներին կփոխանցվեց բացված հաշվեհամարների միջոցով:

«Հացը լեռներում» տոնածիսական ուտեստների փառատոն

Հունիսի 11-ին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Պետրոս ավագ քահանա Մալյանը և թեմի երիտասարդաց միությունների անդամները մասնակցեցին «Համով-հոտով Երևան» խորագիրը կրող «Հացը լեռներում» տոնածիսական ուտեստների փառատոնին:

Տեր Պետրոսի գլխավորությամբ միջոցառումը մեկնարկեց Տերունական աղոթքով: Երևանի փոխքաղաքապետ Արամ Սուքիասյանի և քաղաքապետի օգնական Մարիա Բարաղամյանի հետ Տեր հայրը շրջեց տաղավարներում:

Միջոցառումն անցկացվում է արդեն 8-րդ անգամ և արդեն 2-րդ անգամ՝ Երևանի քաղաքապետարանի աջակցությամբ և «Երևանյան ամառ» եռամսյա ծրագրի շրջանակում՝ Հայ խոհարարական ավանդույթների զարգացման և պահպանման հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ:

Փառատոնին մասնակցող 21 ընկերություններից 12-ը ներկայացնում էին ազգային-եկեղեցական՝ Ս. Ծննդյան, Ս. Ջատկի, Ս. Սարգսի, Տեառնընդառաջի, Համբարձման, Վարդավառի, Ս. Խաչվերաց տոներին, Բարեկենդանին, Մեծ Պահքին, Նավասարդի տոնին բնորոշ ավանդական ուտեստներ:

«Նշխարք»-ը ներկայացավ առաջին մենահամերգով

Հունիսի 15-ին Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի հանդիսապետությամբ տեղի ունեցավ «Նշխարք» վոկալ անսամբլի առաջին մենահամերգը (գեղ. ղեկավար՝ Հեղինե Օհանյան): Գեղեցիկ կատարումներով հնչեցին հայ և եվրոպական կոմպոզիտորների ստեղծագործություններ:

Համերգի ավարտին շնորհավորելով առաջին մենահամերգի առթիվ Նավասարդ Սրբազանն իր օրհնությունն ու գնահատանքը բերեց անսամբլին՝ կատարողական բարձր որակների և յուրահատուկ մեկնաբանության համար:

Նավասարդ Սրբազանի օրհնությամբ առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցու «Արարատ» երիտասարդաց միության «Նշխարք» վոկալ անսամբլը ստեղծվել է 2015թ. սեպտեմբերին:

Նավասարդ Սրբազան. «Թող Աստված լինի մեզ զորակից՝ հայի արդարության պատերազմը մինչև վերջ հասցնելու գործում...»

Հունիսի 18-ին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշների Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը մասնակցեց 1915 թ-ի հունիսի 15-ին Կ.Պոլսի Սուլթան Բայազիտ հրապարակում կախաղան բարձրացված 20 հնչակյաններին նվիրված հանդիսությանը: Տերունական աղոթքից հետո Սրբազան հայրը ողջունելով ներկաներին՝ ի մասնավորի ասաց.

«ԴՈՒՔ ԿԱՐՈՂ ԵՔ ԿԱԽԵԼ ՄԵՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ, ԻՍԿ ՄԵՐ ԳԱՂԱՓԱՐԸ՝ ՈՉ»
«…Բայց և ինչպես, ամենքդ ալ վերջին պահուն ձեր դիմաց երազային, շատ պայծառ, ուրիշ արև մը տեսաք, ու ճոճեցաք օդին մեջ՝ զայն խմելե վերջ ցըհազ…»: Վահան Թեքեյան

Նվիրական զգացումներով և միաբանության ոգով տոգորված՝ հավաքվել ենք ոգեկոչելու Հնչակյան կուսակցության 20 առաջնորդ-նահատակների հիշատակը: Հավաքվել ենք՝ որպես խոնարհումի արտահայտություն այն նվիրական գործին, որի համար զոհ գնացին մեր անվեհեր և աննկուն հայորդիները: 19-րդ դարի վերջերն ու 20-րդ դարի սկիզբը հայի պատմության արյունոտ էջերից են: Բարբարոս թուրքն իր հրեշավոր ծրագիրն էր իրականացնում՝ նպատակ ունենալով աշխարհի վրա թողնել «մեկ հայ և այն էլ՝ թանգարանում» (Պ. Սևակ): Ոճրագործ երիտթուրքերը, որ համարվում էին «հայոց դահիճներ», գազանական գործողություններն իրականացնում էին թե՛ պետականորեն և թե՛ ոհմակային: Ժամանակի հրամայականով ոտքի ելան հայ ազգային-ազատագրական շարժման նշանավոր և կարկառուն դեմքեր, ովքեր անմիջապես սկսեցին աշխատանք տանել թուրքական լծի տակ հեծող արևմտահայությանն ազատագրելու համար: Նրանցից առավել աչքի ընկան հնչակյաններ Փարամազը (Մատթեոս Սարգսյան), Վահան Բոյաջյանը, Արամ Աչըքբաշյանը, Պետրոս Թորոսյանը և այլք, ովքեր իրենց «աննենգ ժողովրդասերներ» էին անվանում՝ իրենց գործով վավերացնելով ասվածի ճշմարտությունը:

1914թ. մայիսին «Հնչակ» թերթում «Հայր Սիվա» կեղծանունով տպագրվում է Փարամազի վերջին հոդվածը՝ «Հայի պահանջը» վերնագրով, որի վերջաբանում հստակորեն ուղեղնշվում է հայի հայ մնալու ճանապարհը. «Հայը մեռնում է կաթիլ-կաթիլ: Փոխակաթիլ մեռնելու նակ կաթիլ-հայը մեկ անանէանալու, մեռնի, որ հայը գամ էլ պիտի դավադրությամբ ապրի»: Նենգ հիշխանությանը թուրքական է բանտարկել հաջողվում կուսակցության Հնչակյան ներին: Բանտում 20 ղեկավարտարկյալների գտնվող բանիրը լվանում էին հագուստներ: Փարամազը, օգտվելով առիթից, մեկին է հանձնում իր թաշկինակը՝ խնդրելով այն փոխանցել Հայոց պատրիարքին: Նա գիտեր իր մոտալուտ մահվան մասին, ուստի առանց վարանելու թաշկինակի վրա գրել էր հետևյալը. «Սթափվեցե՛ք: Դիմեցե՛ք ինքնապաշտպանության: Ձարդը ման է գալիս հայերի գլխին…»: Մեկ տարի անց, դատավարության ժամանակ, երբ կայացնում էին դատավճիռը, Հնչակյան կուսակցության արծիվները խրոխտ կեցվածքով և աներկյուղ հնչեցնում են թուրք ժողովրդի իրական դատավճիռը. «Կախաղա՛ն և շղթա՛, մա՛հ և տանջա՛նք… արհամարհում ենք մեր բոլոր էությամբ, մեր կարողությամբ: Ձեր կախաղանների սյուները ազատության աշտարակներ են և նրանց չվանների վրա կախված մարմինները հավիտենական նախատինք ներկա կարգերի և նրանցիեղինակների համար:

…Մեզ 20-իս կկախեք, բայց 20 հազարներ պիտի հետևին մեզի»: Քրիստոս Իր խոսքով և կյանքով փոխանցեց. «Եւ մի վախեցեք նրանցից, որ մարմինն են սպանում, բայց հոգին սպանել չեն կարող…» (Մատթեոս Ժ 28): Ոգին է կենդանարար, և մենք կոչված ենք այդ ոգին պահելու և դրանով միաբան ու հաստատ մնալու, իրավացիորեն պահանջելու վերստանալի և վերակենդանանալի մասը՝ Աստծուց մեզ բաժին տրված: Թող Աստված լինի մեզ զորակից՝ հայի արդարության պատերազմը մինչև վերջ հասցնելու, մեր ազգի եղեռնագործված զավակների հիշատակի սուրբ կտակն ապրեցնելու և արդար հատուցման մխիթարությունը գտնելու համար: «Վարձատրի՛ր նրանց, Տե՛ր, ըստ իրենց արարքների, իրենց անօրեն վարքի համեմատ հատուցի՛ր նրանց, նրանց ձեռքերի գործին նայելով՝ տու՛ր իրենց հատուցումը» (Սաղմոս 27:4): «Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»: Ամեն»:

Հանդիսություն ուղեկցվեց Հնչակյան ջոկատների ազատամարտիկների պարգևատրությամբ,

ազգային-հեղափոխական երգերի երեկոյով:

Միջոցառմանը ներկա էր նաև ՀՀ սփյուռքի նախարար տիկին Հրանուշ Հակոբյանը: Օրվա գլխավոր բանախոսներն էին ՍԴՀԿ Կենտրոնական վարչության անդամ Սեդրակ Աճեմյանը, շ ՍԴՀԿ Հայաստանի վարչության ատենապետ Նարեկ Գալստյանը:

Նավասարդ Սրբազանը մասնակցեց «Աշխատութիւններ» երկհատորյակի շնորհանդեսին

Հունիսի 20-ին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը մասնակցեց «Այբ» կրթական հիմնադրամի համահիմնադիր Տ. Մեսրոպ քահանա Արամյանի «Աշխատութիւններ» երկհատորյակի շնորհանդեսին: Ներկա էին Արցախի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, բանակի հոգևոր առաջնորդության առաջնորդ Գերաշնորհ Տ. Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանը, նախարարներ, բարձրաստիճան պաշտոնյաներ, մտավորականներ, գիտնականներ, մանկավարժներ: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի ջերմագին շնորհավորանքն ու հայրական օրհնությունը Նավասարդ Սրբազանը

փոխանցեց Տեր հորը, ապա գրքի լույսընծայման և ծննդյան հիսունամյա հոբելյանի առթիվ ի մասնավորի ավելացրեց.

«Անհատները կրնան ուծացուիլ, նժդեհության, սրածութեան մատնուիլ, բայց երբ հաստատուն պահուած է սրտերու մէջ՝ տառերուն բեւեռը, լեզուին անշիջելի ճառագայթը, կը բավէ այդ ճառագայթը իրարու բերելու, իրարու միացնելու համար անհատները՝ իբրեւ ժողովուրդ, ժողովուրդը՝ իբրեւ Ազգ, Ազգը՝ իբրեւ հայկականութիւն» (Դանիել Վարուժան):

Աստվածճանաչողության և հոգևոր փնտրտումների, ազգի և սեփական ինքնությունը վերագտնելու մղումի շնորհիվ այսօր մեր հոգևոր իրականության մեջ կա և գործում է մեր սիրելի Տեր Մեսրոպ քահանա Արամյանը: Որպես եկեղեցասեր և շնորհառատ անձնավորություն՝ նա իր ողջ էությամբ լծվել է երկնառաք ժառանգության վեհությունն ու խորհրդավորությունն ազգին վերադարձնելու օրհնյալ առաքելությանը: Երկու տասնամյակից ավելի, որպես բարու և բանի սերմնացան, մշտավառ աշխատասիրությամբ և նախանձախնդրությամբ, անմնացորդ նվիրումով և անվերջանալի ավյունով վերարթնության հունդերն է ցանում մեր հայրենի անդաստաններում՝ վերակոչելով հայի աստվածատուր հավատքն ու այդ հավատքով գրված հայի պատմությունը:

Այս երկհատորյակը Տ. Մեսրոպ քահանա Արամյանի տքնության և ջանքերի արգասիքն է, որոնց շնորհիվ վեր են հանվել և բացահայտվել հայոց աստվածաբանական ժառանգության գոհարներն ու դավանաբանական մտքի գանձերը: Նա հայաշունչ և հայաշեն ոգու կրողն է, Այբ, Բեն, Գիմ-ի բևեռների միաձուլող լծակիցը և սուրբ գործի շարունակողը: Նա իր կյանքով ու աշխատանքով վկայությունն է այդ առաքելության: Մեսրոպ քահանայի հոգու սրատեսությամբ վերհառնում են գրաբարյան ոսկեղենիկ կոթողները՝ կենդանություն և նոր շունչ հաղորդելով նրանց գոյությանը: Նա հայ հոգևոր գրքի խոնարհ ուխտավորն է, ով Աստծո և իր ինքնության հետ մեսրոպահյուս թելերով դաշինք կապեց՝ «Մեսրոպ» զորեղ անվամբ կնքվելու, մաշտոցյան սուրբ երթով ընթանալու և Գրքի միջոցով հայի հոգու պատմությունը հավերժացնելու համար:

Նվիրյալ հոգևորականն ազգային արժեքները, հայի տաղանդն ու ներուժն արթնացնելու հզոր տեսլականով կյանքի է կոչում նաև մեր սիրասուն մանուկներին հայեցի դաստիարակելու ազգանվեր առաքելությունը: Հոգևոր ժառանգության քուրայով անցկացնում է նրանց ինքնագիտակցությունը և հնարավորություն ընձեռում ընկալել և իրենց մեջ անթեղել տրված հոգևոր արժեքները. «Արժեքները տվյալ ժողովրդի կյանքում բյուրեղացած, ամրագրված և սրբադասված ճշմարտություններն են: Ազգային ինքնությունը խարսխված է այդ արժեք-սրբությունների վրա… Սեփական արժեքների շուրջ համախմբվածությունը հայտարարն է տվյալ ազգի հոգու զորության և ամրության» (Տ. Մեսրոպ քահանա Արամյան):

Սիրելի՛ք, այսօրվա բարեբաստիկ առիթով՝ մեր սիրելի Տեր հոր ծննդյան 50-ամյակի առթիվ, հղում ենք մեր շնորհավորանքները: Մաղթում ենք նրան և իր բազմանդամ ընտանիքին երկար ու արևշատ օրեր: Աղոթք ենք առաքում առ Տեր և հայցում Նրա բարեխնամությունը, առատ օրհնություններն ու շնորհները, նաև մշտատև առաջնորդությունը՝ տիրահաճ առաքելության անխախտ ընթացքի համար: Թող օրհնաբեր լինի նրա աստվածապարգև ծառայությունը՝ շաղախված հայոց լուսահոգի հայրապետերի և սուրբ հայրերի բարի ավանդություններով»:

Վարդավառն Արարատյան Հայրապետական թեմում

Հուլիսի 2-ին Արարատյան Հայրապետական թեմի երիտասարդաց միությունները «Վերականգնենք մեր ազգային տոները» խորագրի ներքո կազմակերպեցին Վարդավառի տոնախմբություն, որին մասնակցում էին «Ոստան», «Վարք հայոց», «Տավրոս» ազգագրական երգի-պարի խմբերը:

Մասնակիցներն ազգային երգուպարով, տոնական մեծ թափորով Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցուց քայլեցին դեպի Մանկական զբոսայգի: Թափորն առաջնորդում էր թեմի երիտասարդական կառույցների համակարգող Տ. Պետրոս ավագ քահանա Մալյանը: Տոնախմբությանը միացել էին նաև Երևանի քաղաքապետարանի մշակույթի վարչության պետ Ռուբեն Հովհաննիսյանը, վարչական շրջանների երգի-պարի խմբերը, բազմաթիվ երևանցիներ ու տուրիստներ:

Այգում տոնը լրացվեց ազգային երգուպարով: Ներկայացվեցին տոնի ժողովրդական սովորույթները: Բեմականացվեց Նոյ նահապետի ու նրա ընտանիքի իջնելը Մասիսից: Միջոցառումն ավարտվեց ջրախաղով և աղավնիներ երկինք բաց թողնելով:

Պայծառակերպության տոնն Արարատյան Հայրապետական թեմում

Հուլիսի 3-ին Հայ Առաքելական Եկեղեցին նշեց մեր Տեր Հիսուս Քրիստոսի Պայծառակերպության տոնը: Բոլոր եկեղեցիներում մատուցվեց տոնական Ս. Պատարագ:

Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցում Ս. Պատարագը մատուցվեց առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի հանդիսապետությամբ:

Սրբազան հոր օրհնությամբ թեմի համայնքներում հոգևոր արարողություններից բացի տոնը նշվեց նաև ժողովրդական սովորություններով՝ ջրախաղով ու ազգագրական համույթների ելույթներով: Կազմակերպվել էին նաև ուխտագնացություններ: Շատ հավատացյալներ տոնի առթիվ նաև մատաղ մատուցեցին կարիքավոր ընտանիքներին ու եկեղեցիներ այցելուներին:

Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցու այգում Վարդավառի ուրախությունն իրենց շուրջը տարածել էին կիրակնօրյա դպրոցի սաները մանկավարժ Սիրանուշ Գումրույանի գլխավորությամբ: Քրիստափոր Քուշնարյանի անվան արվեստի դպրոցի սաներն իրենց ելույթով եզրափակեցին տոնախմբությունը: Այն կազմակերպվել էր Երևանի Կենտրոն վարչական շրջանի կողմից: Հանդես եկան պարարվեստի բաժնի «Գարուն» մանկապատանեկան պարային համույթը (գեղարվեստական ղեկավար՝ Սուրեն Գյան-

ջումյան) և վոկալ բաժնի սաները:

Մալաթիայի Ս. Աստվածածին եկեղեցու համայնքի անդամները հոգևոր հովիվ Տ. Տիրան ավագ քահանա Առուշանյանի գլխավորությամբ մեկնեցին ուխտագնացության Գավառի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, որտեղ մասնակցեցին Ս. Պատարագի: Այնուհետև ուխտավորներն այցելեցին Ծաղկաշենի Ս. Աստվածածին, Գավառի Ս. Աստվածածին և Ս. Գևորգ եկեղեցիներ, Նորատուսի սրբավայրեր և Հայրիվանք:

Մասիսի Ս. Գևորգ եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Աշոտ քահանա Սաֆարյանի հետ Մասիսի «Սիրոն» պատանեկան թատերախումբը բեմադրող ռեժիսոր Արշակ Ղազարյանի գլխավորությամբ այցելեց ՀՕՖ-ի Երեխաների Աջակցության Կենտրոն: Թատերախումբը երեխաներին ներկայացրեց Հ. Թումանյանի հեքիաթները: Ներկայացումից հետո «Նարեկ» Երիտասարդաց միությունը երեխաների համար կազմակերպեց հյուրասիրություն:

Հաշմանդամություն ունեցող 12 երեխա մկրտվեց

Հուլիսի 9-ին Արարատյան Հայրապետական թեմի Արգավանդի Ս. Սարգիս եկեղեցում հոգևոր հովիվ Տ. Գրիգոր քահանա Հովհաննիսյանը մկրտեց Մարի Իզմիրլյանի անվան մանկատան 12 երեխաների:

Նախաձեռնողն ու երեխաների կնքահայրը կիպրահայ բարերար Բագրատ Վարդանյանն էր: Մկրտությանը ներկա էին մանկատան տնօրեն Հասմիկ Մկրտչյանը, եկեղեցու համանյքի անդամներ:

Հաշմանդամություն ունեցող այս երեխաների համար Հայ Եկեղեցին ու հոգևորականն իրենց կյանքի անբաժանելի մաս են դարձել: Արարատյան Հայրապետական թեմի մի շարք համայնքներ իրենց ուշադրության ու հոգածության տակ են պահում նրանց, հաճախ են այցելում, փորձում են հոգալ հոգևոր ու նյութական կարիքները:

Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի նախագահությամբ օրհնվեց ոսկե ծիրանը

Հուլիսի 10-ին Արարատյան Հայրապետական թեմի Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցում Ս. Պատարագը մատուցվեց թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի հանդիսապետությամբ: Պատարագիչը Տ. Հայկազուն քահանա Մկրտչյանն էր: Սրբազան հորը եկեղեցու բակում դիմավորեց հոգևորականների թափորը, որին միացել էին նաև թեմի երիտասարդական կառույցների անդամները:

Հավարտ Ս. Պատարագի Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը «Ոսկե ծիրան» կինոփառատոնի շրջանակում կատարեց ծիրանի օրհնության կարգ:

Նավասարդ Սրբազանն իր ողջույնի ու օրհնության խոսքն ուղղեց փառատոնի բացման առթիվ՝ ի մասնավորի նշելով. «Սիրելի հայորդիՔ, քիչ առաջ մասնակցելով Ս. Պատարագին՝ ստացաք

Ս. Հաղորդություն՝ ճաշակելով մեր Տեր Հիսուս Քրիստոսի Մարմինն ու Արյունը, և տեսաք, որ քաղցր է: Իսկ այս պահին օրհնեցինք հայոց ծիրանը, աստվածատուր այս պտուղը, որը դարձել է կինոփառատոնի խորհրդանիշը: Ինչպես ծիրանի գույնը, բույրը և քաղցր համն են կատարելապես ներդաշնակվում, այնպես էլ «Ոսկե ծիրան» կինոփառատոնի պտուղները՝ պատկերով, ձայնով ու բովանդակությամբ ներդաշնակ, պիտի իմաստնությամբ ու քաղցրությամբ ծառայեն մարդուն: Փառատոնի կենտրոնում մարդն է՝ ևԲ արարողը, ևԲ ստեղծագործողը, ևԲ ստացողը:

Փառատոնի ֆիլմերը մեր ուշադրությունը պետք է կենտրոնացնեն, լուսարձակի տակ բերեն կյանքի այն դրվագները, որոնք մենք չենք տեսնում, բայց կարևոր են: Եվ եթե այդ բացահայտումներն իրենց պատգամով անցնեն մեր միջով, կկերպարանափոխեն մեզ, կուղղորդեն մեր ընթացքն՝ արարածից դեպի Արարիչ:

Արվեստների խաչմերուկներում ծնվում է մարդը՝ անկախ սեռից, անկախ ռասայից, անկախ տարիքից: Եվ այն ստեղծագործություններում, որտեղ հեղինակն ու դիտողը հաղորդակցվում են, ներգործում է արվեստի ուժը, որը ծնվում է սիրով: Սիրո զգացումով արարված գործերը կարող են մարդուն կերպարանափոխել, վերարթնացնել մեր մեջ աստվածային իսկատիպից մի զգացում, մտածում… Եվ դիտողը նորովի կընկալի աշխարհը: Այսպիսի հուշարար ու դրական զորությամբ լեցուն դեր ունի արվեստը, հատկապես՝ կինոարվեստը մեր այսօրվա կյանքում:

Թող տարերային տարածում ունենա «Ոսկե ծիրան» փառատոնը, սակայն մասնավորաբար անհատների մեջ պտղավորվի, որպեսզի յուրաքանչյուր ոք փառատոնից բխող պատգամը զգա իրեն հասցեագրված:

Օրհնությունն էլ ընդհանուր է, սակայն ամեն մեկը յուրովի է զգում ու վերցնում իր բաժինը: Այդ ընկալման մեջ մենք ունենք հոգեմտավոր մեր շահը՝ դրականը զգալու, ապրելու ու փոխանցելու՝ վերագտնելով մարդ լինելու մեր կոչումը:

Մենք այս պտուղների օրհնությամբ շնորհավորում ենք բոլորիդ՝ «Ոսկե ծիրան» փառատոնի բացման առթիվ: Մաղթում ենք, որ հոգևոր ու մտային գիտակցությամբ այլակերպվելով՝ ճաշակեք նաև փառատոնի պտուղները: Թող դրանք լինեն քաղցր, իմաստալից և ոգևորող: Ներշնչանքներ

և առատ բերք ենք մաղթում բոլոր կազմակերպիչներն, հովանավորներին ու հանդիսատեսին:

Շնորհը, սերը և խաղաղությունը թող լինեն ձեզ հետ այսօր, վաղը և ընդմիշտ: Ամեն»:

Արարողության ավարտին օրհնված ծիրանը Սրբազան հայրն ու Հարություն Խաչատրյանը հյուրասիրեցին ներկաներին:

«Ոսկե ծիրան» փառատոնն ավանդաբար մեկնարկում է ծիրանի օրհնությամբ:

«Բամբակը» չիր է պատրաստում «Զանգակի» նվիրած չրանոցում

Արարատյան Հայրապետական թեմի Բյուրավան համայնքում ձևավորվել է հայկական ազգային կոլորիտն իր մեջ կրող ու ներկայացնող մի անկյուն՝ արևային չրանոց, որտեղ այս օրերին «հայ-

կական խնձորից»՝ ծիրանից, քաղցրահամ չիր են ստանում:

«Բամբակ» տիկնանց միության առաջարկին արագ արձագանքեցին տղամարդկանց «Զանգակ» միության անդամները: Չորանոց ունենալու միտքը կար նոյեմբերից, բայց աշխատանքները սկսվեցին գարնանը, երբ «զանգակները» կառուցեցին ջերմոցը: «Բամբակները» գործի անցան հունիսի 22-ից՝ բերքի հասունացմանը զուգահեռ:

Մաքուր ու բնական չրի առաջին արդյունքն արդեն կա: Չրի առաջին խմբաքանակները փաթեթավորվեցին և առաջարկվեցին սպառողներին:

Մեկնարկեց «Իմ Հայաստան» համահայկական երրորդ փառատոնը

Հուլիսի 22-ին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում մասնակցեց «Իմ Հայաստան» փառատոնի բացման հանդիսավոր արարողությանը: Փառատոնն անցկացվում է ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի բարձր հովանու ներքո: Համահայկական այս փառատոնը երրորդն է և այս տարի նվիրված է Հայաստանի Հանրապետության անկախության 25-ամյակին:

Միջոցառումը մեկնարկեց ազգային Օրհներգով և Տերունական աղոթքով:

Ապա Նավասարդ Սրբազանն ընթերցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի ուղերձը մասնակիցներին ու կազմակերպիչներին:

ՀՀ Նախագահի ողջույնի խոսքն ընթերցեց Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը:

Երեկոյի ընթացքում ելույթ ունեցան աշխարհի 25 երկրներից ժամանած 48 հայկական պարախմբեր: 25-ամյա 25 երիտասարդ մեկական նախադասությամբ ներկայացրեց 25 տարիների ընթացքում անկախ Հայաստանի՝ իր պատկերացմամբ հիմնական նվաճումները:

Փառատոնի նպատակն է աջակցել Հայաստան-սփյուռք, սփյուռք-սփյուռք կապերի ամրապնդմանը և համագործակցության հնարավորությունների ընդլայնմանը, սփյուռքում հայ մշակութային ինքնության պահպանմանն ու զարգացմանը, Հայրենիքի և սփյուռքի երիտասարդ ստեղծագործողների միջև մշակութային կապերի խորացմանը, նոր նախագծերի մշակմանը:

Նավասարդ Սրբազանն օծեց Խաղաղության և Բժշկության խաչքարերը

Օգոստոսի 1-ին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի ձեռամբ օծվեցին Նուբարաշենի Ս. Նահատակաց եկեղեցու բակում տեղադրված երկու խաչքարերը: Արարողությանը ներկա էին ՀՀ ԱԺ պատգամավոր Հակոբ Հակոբյանը, Նուբարաշեն վարչական շրջանի ղեկավար Արթուր Կիրակոսյանը, նուբարաշենցիներ, հյուրեր:

Սրբալույս Մյուռոնով օծելուց հետո Սրբազան հայրը երկու խաչքարներից մեկը կոչեց Բժշկության խաչքար: Քանդակագործը Գոռ Նադոյանն է: Այն քառաթև է, և բարերար Վարդան Վարդանյանն այն եկեղեցուն է նվիրաբերել ի նշան Աստծո կողմից ծանր հիվանդությունից իր բժշկվելու հանգամանքի: Խաչքարը Մուղնու Ս. Գևորգ եկեղեցու 16-17-րդ դարի խաչքարի կրկնօրինակն է: Վրան փորագրված է՝ «Փարատեա զցաւս եւ բժշկեա զհիվանդութիւնս ի ժողովրդենէ քումմէ»:

Մյուս խաչքարը Նավասարդ Սրբազանը կոչեց «Հաղթանակի ու խաղաղության խաչքար»: Քանդակագործն Արամ Համբարձումյան է: Այն եկեղեցուն է նվիրաբերել Նուբարաշենի բնակիչ, բարերար Հարություն Օհանյանը: Խաչքարն իր վրա ունի Քրիստոսի ու Ս. Տիրամոր պատկերները, ինչի շնորհիվ այն պատկանում է Ամենափրկիչ խաչքարերի տեսակին:

Սրբազան հայրը, շնորհավորելով նուբարաշենցիներին խաչքարերի օծման առթիվ, իր օրհնությունը բերեց նախաձեռնող բարերարներին ու քանդակագործներին: Նավասարդ Սրբազանը մաղթեց, որ քարակերտ այդ խաչերը՝ որպես Կենաց ծառի փրկագործության խորհուրդ, դառնան մեր աղոթքներն առ Աստված վերառաքողներ՝խաղաղության, հոգու և մարմնի առողջության շնորհաբաշխ վկաներ:

Օծվեց Շաղափ համայնքի Ս. Ամենափրկիչ մատուռը

Օգոստոսի 2-ին Արմավիրի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Սիոն եպիսկոպոս Ադամյանի ձեռամբ օծվեց Արարատյան Հայրապետական թեմի Շաղափ համայնքի Ս. Ամենափրկիչ մատուռը:

Շաղափում Սիոն Սրբազանին, Արարատի մարզպետ Ռուբեն Աբրահամյանին, համայնքների ղեկավարներին ու բարձրաստիճան զինվորականներին աղուհացով դիմավորեցին գյուղի բնակիչները՝ Վեդու Ս. Աստվածածին եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Հովակիմ քահանա Հարությունյանի գլխավորությամբ:

Օծվեցին նորակառույց մատուռի Սուրբ Սեղանն ու Մկրտության ավազանը:

Համայնքապետարանի և բարերարների նախաձեռնությամբ արարողության ավարտին կազմակերպվել էր հյուրասիրություն: Նորաօծ մատուռի բակում ազգային-ժողովրդական երգուպարով օրը վերածվեց տոնախմբության:

Ս. Ամենափրկիչ մատուռի շինարարությունը սկսվել էր 2009 թվականին: Այն կառուցվել է փոխգնդապետ Պարգև Մանուկյանի բարերարությամբ: Նախագծի հեղինակը ճարտարապետ Կարեն Հարությունյանն է:

Հոսանքին հակառակ՝ Խուլերի թատրոն-ստուդիան մասնակցեց մնջախաղի փառատոնին

Օգոստոսի 10-ից 15-ը Ծաղկաձորում անցկացվեց Լ. Ենգիբարյանի անվան մնջախաղի միջազգային 5-րդ փառատոնը: Արարատյան Հայրապետական թեմի «Մենք» խուլերի մնջախաղի թատրոն-ստուդիան նույնպես «Հոսանքին հակառակ» ներկայացմամբ մասնակցեց փառատոնին:

15 հոգուց բաղկացած խումբը ստեղծվել է 2012 թվականին, սակայն պրոֆեսիոնալ մնջախաղով սկսել են զբաղվել 2014 թվականից՝ համագործակցելով Հայաստանի Մնջախաղի պետական թատրոնի հետ:

«Մենք» խուլերի մնջախաղի թատրոն-ստուդիան ստացավ ոսկե մեդալ և սերտիֆիկատ՝ Լ. Ենգիբարյանի անվան միջազգային հինգերորդ փառատոնին մասնակցելու համար:

Աստվածածնի Վերափոխման տոնն Արարատյան Հայրապետական թեմում

Վերափոխման տոնի առթիվ Արարատյան Հայրապետական թեմի մի շարք համայնքներում առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի օրհնությամբ իրականացվեցին տոնական միջոցառումներ:

- Մալաթիայի Սուրբ Աստվածածին եկեղեցու համայնքը Ս. Պատարագի ավարտից հետո հոգևոր հովիվ Տ. Տիրան ավագ քհն. Առուշանյանի և Տ. Գաբրիել քհն. Պետրոսյանի գլխավորությամբ թափոր կազմեցին և քայլեցին դեպի Ս. Գրիգոր Նարեկացու արձանը, որտեղ կատարվեց խաղողօրհնեքի կարգ: Սակայն, մինչ արձանին հասնելը խաչերթի մասնակիցները շրջեցին բնակելի շենքերի բակերում և աղոթագրքեր բաժանեցին ժողովրդին:

- Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցում Ս. Պատարագի ավարտին ներկաները մասնակից եղան խաղողօրհնեքի արարողությանը՝ ստանալով օրհնված ողկույզներ: Տոնական օրն իր շարունակությունն ունեցավ երեկոյան ժամերգության ավարտին: Եկեղեցու բակում Կենտրոն վարչական շրջանի կողմից կազմակերպվել էր տոնախմբություն, որի ժամանակ հանդես եկավ «Վերադարձ» ավանդական երգ ու պարի համույթը: Ազգային երգուպարով համեմված երեկոյին ուրախությամբ միացան շատ անցորդներ և

հյուրեր: Միջոցառման ավարտին օրհնված ողկույզներ բաժանվեցին ներկաներին:

- Նոր Նորքի Ս. Աստվածածին եկեղեցու բակում Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Քրիստոնեական Դաստիարակության Կենտրոնի և Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի բաժնի համատեղ նախաձեռնությամբ կազմակերպվել էր ուշագրավ միջոցառում՝ Նոր Նորքի առաջին, երկրորդ և երրորդ զանգվածների մանկապարտեզների երեխաների, մանկավարժների և ծնողների մասնակցությամբ: Երաժշտական կատարումներով ներկաներին ողջունեցին Նոր Նորքի մշակույթի կենտրոնի շնորհալի սաները: Սուրբ Աստվածածին եկեղեցում Տեր Նշան քահանա Ալավերդյանը կատարեց երեխաների, ապա՝ խաղողի օրհնության կարգ, որին հաջորդեց թեմատիկ կավճանկարչությունը: Երեխաները ճաշակեցին օրհնված պտուղը, իսկ տոնի կապակցությամբ Արարատյան Հայրապետական թեմի կողմից երեխաներին բաժանվեցին խորհրդանշական նվերներ:

- Շահումյանի Ս. Աստվածածին եկեղեցում հավարտ Ս. Պատարագի կատարվեց խաղողօրհնեքի կարգ: Արարողությունից հետո եկեղեցու բակում տեղի ունեցավ տոնական միջոցառում: Միջոցառման ընթացքում ելույթ ունեցան Շահումյանի Արվեստի դպրոցի պարի և ժողովրդական գործիքների խմբերի սաները: Համերգային ծրագրից հետո կատարվեց մատաղի օրհնություն:

- Նորագավթի Ս. Գևորգ և Ներքին Չարբախի Ս. Խաչ եկեղեցիներում առավոտյան մատուցված Ս. Պատարագից հետո օրհնվեց խաղողը, խաղողի հետ նաև՝ տարվա բերքն ու բարիքը, և բաժանվեց ներկաներին: Այնուհետև եկեղեցիների բակերում կազմակերպվեց համերգային ծրագիր, օրհնված խաղողի հյուրասիրություն, տոնին նվիրված ցուցահանդես, խեցեգործության թեմատիկ բաց դաս:

- Դավթաշենի Ս. Նահատակաց եկեղեցու բակում տեղի ունեցավ համերգային ծրագիր Դավթաշենի «Նոր Դար» պարային համույթի մասնակցությամբ:

- Ավանի Ս. Աստվածածին եկեղեցու բակում Ավան վարչական շրջանի աջակցությամբ տեղի ունեցավ տոնական միջոցառում՝ երգի-պարի խմբերի մասնակցությամբ, որից հետո մասնակիցների և հյուրերի համար կազմակերպվեց հյուրասիրություն:

- Նորաբացի Ս. Աստվածածին եկեղեցում համայնքի երիտասարդների մասնակցությամբ կազմակերպվեց գեղեցիկ տոնական միջոցառում՝ ազգային երգուպարով և հյուրասիրությամբ:

- Արտաշատի Ս. Հովհաննես Ավետարանիչ եկեղեցում կրկնակի տոն էր: Վերափոխման տոնը համընկավ եկեղեցու առաջին բակային ճամբարի փակման արարողության հետ, որի ընթացքում ճամբարի փոքրիկ մասնակիցները մկրտվեցին:

- Արգավանդի Ս. Սարգիս եկեղեցու հավատացյալներն ինն օր շարունակ ուխտագացություն կազմակերպեցին Աստվածածնի անունը կրող եկեղեցիներ, որտեղ մատուցվեց Ս. Պատարագ:

Դպրոցականներն իրենց առաջին քայլերը սկսեցին Աստծո օրհնությամբ

2016 թվականի ուսումնական տարվա սկիզբը նույնպես ազդարարվեց Աստծո օրհնությամբ: Սեպտեմբերի 1-ին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի օրհնությամբ թեմի քահանաներն այցելեցին հանրակրթական դպրոցներ, եկեղեցիներում դիմավորեցին աշակերտներին, նրանց ծնողներին ու ուսուցչական կազմին՝ փոխանցելով իրենց հայրական օրհնությունն ու շնորհավորանքը գիտելիքի օրվա կապակցությամբ:

Եկեղեցին խոսքի հապաղում ունեցող երեխաների կողքին է

Սեպտեմբերի 3-ին Արարատյան Հայրապետական թեմի ՀԱԹ Ս. Երրորդություն եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Ձենոն քահանա Բարսեղյանի օրհնությամբ տեղի ունեցավ «ՄՄՄ - Սովորեցրու ինձ ավելին» ուսուցման և զարգացման կենտրոնի բացման արարողությունը:

Տեր հայրն աղոթքով և օրհնության խոսքով ողջունեց ներկաներին և տնօրինեքի կարգ կատարեց:

«ՄՄՄ» կենտրոնն ունի հստակ նպատակ՝ իրականացնել վերականգնողական աշխատանքներ՝ կիրառելով տարբեր մեթոդներ, որպեսզի խոսքի հապաղում ունեցող երեխաներն աստիճանաբար սովորեն հասկանալ շրջակա միջավայրը և վերարտադրել այն համակարգչային մոդելավորման միջոցով: Բազմաթիվ մեթոդների մեջ մտնում է նաև Ավետարանի սերտողությունը:

Հովհաննես սարկավագ Ներսեսյանը՝ միջազգային մրցույթի դափնեկիր

Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցու հոգևոր սպասավոր և Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի մենակատար Հովհաննես սարկավագ Ներսեսյանը Պավել Լիսիցյանի անվան վոկալիստների 4-րդ միջազգային մրցույթում արժանացավ 2-րդ կարգի դափնեկրի կոչմանը: Մրցույթին մասնակցել էին 48 երգիչներ 12 երկրներից՝ Հայաստան, Ուկրաինա, Ուզբեկստան, Գերմանիա, Նիդեռլանդներ, Իտալիա, Չինաստան, Մոնղոլիա և այլն: Մրցույթն անցկացվեց սեպտեմբերի 15-18-ը՝ Հյուսիսային Օսեթիայում: Փառատոնի ժյուրիի նախագահն էր Ռուսաստանի և Ուկրաինայի ժողովրդական արտիստ Լարիսա Գերգիևան: Նա նաև փառատոնի հիմնադիրն ու տնօրենն է:

Օծվեցին Արարատ քաղաքի կառուցվող եկեղեցու խաչը և զանգերը

Սեպտեմբերի 16-ին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի ձեռամբ օծվեցին Արարատ քաղաքում նոր կառուցվող եկեղեցու զանգակատան խաչը և զանգերը:

Արարատում Սրբազան հորը աղուհացով դիմավորեցին եկեղեցու բարերար Արթուր Խաչատրյանը, Արարատի փոխմարզպետ Ի. Շադյանը, Արարատի փոխքաղաքապետ Խ. Մնացականյանը, բազմաթիվ հյուրեր:

Նույն օրը Նավասարդ Սրբազանը մեկնեց նաև Արարատ համայնքի Ս. Հակոբ եկեղեցի: Այցելության նպատակը եկեղեցու վերանորոգված մկրտության ավազանն օծելն էր: 19-րդ դարի այս եկեղեցու ավազանը նորոգման կարիք ուներ: Նոր ավազանը պատրաստված է մեկ ամբողջական քարից:

Օծման արարողությունը ներկա էին մկրտության ավազանի բարերար Նարեկ Ավետիսյանը, Արարատի համայնքապետ Կարեն Ղազարյանը, Արարատի N զորամասի հրամանատար գնդապետ Կ. Սերոբյանը և բազմաթիվ հավատացյալներ:

Ս. Գևորգ զորավարի տոնը մեծ շուքով նշվեց Արարատյան Հայրապետական թեմում

Սեպտեմբերի 24-ին Հայ եկեղեցին նշեց Ս. Գևորգ զորավարի, Ադոկտոսի և Ռոմանոս երգեցողի տոնը: Այդ առթիվ Ս. Պատարագ մատուցվեց նրա անունը կրող եկեղեցիներում: Արարատյան Հայրապետական թեմում գործում է Ս. Գևորգի անունը կրող չորս եկեղեցի՝ Նորագավիթում, Մասիսում, Մարմարաշենում ու Կանաչուտում: Թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի օրհնությամբ այդ համայնքներում կազմակերպվել էին նաև տոնախմբություններ:

- Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի արտոնմամբ Մարմարաշենի Ս. Գևորգ եկեղեցի բերվեցին սրբի մասունքները՝ ի երկրպագություն հավատավոր ժողովրդի: Ճանապարհին մասունքները հավատացյալների խոնարհմանը դրվեցին նաև Նորագավիթի ու Մասիսի Ս. Գևորգ եկեղեցիներում:

- Նորագավիթի Ս. Գևորգ եկեղեցում Ս. Պատարագից առաջ եկեղեց բերվեց Տիրամոր Ոսկեկող Ավետարանը, որը հավատավորների խոնարհմանը մնաց մինչև երեկոյան ժամերգության ավարտը: Հընթացս Ս. Պատարագի հոգևոր հովիվ Տ. Վարդան քահանա Գափոյանի նախագահությամբ օրհնվեցին նաև Նորագավթի հայտնի դեղձի առաջին պտուղները, ապա բաշխվեցին այցելուներին:

- Մասիսի Ս. Գևորգ եկեղեցում հավարտ Ս. Պատարագի մատուցվեց սիրո ճաշ և կազմակերպվեց տոնական միջոցառում: Եկեղեցում բակում բացվեց «Հաղթանակ» խորագրով լուսանկարների մրցույթ-ցուցահանդեսը: Հաղթողները պարգևատրվեցին: Ս. Գևորգի տոնի առթիվ մասիսցի չորս ընտանիք ստացավ դրամական օգնություն, որը տրամադրել էր Կարապետյան

ընտանիքը:

- Կանաչուտի Ս. Գևորգ եկեղեցու բակում գյուղի դպրոցի երեխաների մասնակցությամբ տեղի ունեցավ համերգ, ներկաներին մատուցվեց սիրո ճաշ:

Բերքից լավագույնը՝ զինվորին

Սեպտեմբերի 26-ին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի օրհնությամբ իրականացվեց «Բերքից լավագույնը՝ զինվորներին» ծրագիրը: Առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցու հոգևոր հովիգվ Տ. Պետրոս ավագ քահանա Մալյանի, Արտաշատի Ս. Հովհաննես Ավետարանիչ եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Թաթուլ քահանա Գասպարյանի և Վեդու Ս. Աստվածածին եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Հովակիմ քահանա Հարությունյանի գլխավորությամբ թեմի երիտասարդները ՀՀ ՋՈՒ N զորամաս հասցրեցին Արարատի մարզի հա-

մայնքների բնակիչների կողմից հավաքված բերքը՝ միրգն ու բանջարեղենը: Ծրագրի նախապատրաստական աշխատանքներում մեծ ներդրում է ունեցել նաև Մրգավանի Ս. Հակոբ եկեղեցու համայնքը՝ հոգևոր հովիվ Տ. Երվանդ քահանա Բաբայանի գլխավորությամբ:

Զինվորների հետ հանդիպումից ու զրույցից հետո հոգևորականներն ու երիտասարդները բարձրացան նաև դիրքեր, քահանաներն օրհնեցին զինվորներին ու նրանց հետ միասին աղոթեցին մեր Հայրենիքի խաղաղության ու անսասանության համար:

«Ծաղկազարդ» համախումբը մասնակցեց «100+1» համերգին

Սեպտեմբերի 28-ին Արարատյան Հայրապետական թեմի «Ծաղկազարդ» համախումբը Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը մասնակցեց ՀՀ սփյուռքի նախարարության «Իմ Հայաստան» համահայկական փառատոնի շրջանակում «100+1» խորագրով ամփոփիչ համերգին:

Համերգի ընթացքում հնչեցին Կոմիտասի, Սայաթ-Նովայի, Առնո Բաբաջանյանի, Էդուարդ Միրզոյանի, Մակար Եկմալյանի ստեղծագործությունները:

Ելույթ ունեցան նաև քանոնահարուհի, ՀՀ ժողովրդական արտիստ Հասմիկ Լեյլոյանը, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ կոմպոզիտոր Անահիտ Շահզադեյանը և այլք:

Նավասարդ Սրբազանը հանդիպեց «ամենախելացիին», ով մեկնելու է Երուսաղեմ

Սեպտեմբերի 28-ին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանն ընդունեց «Ամենախելացին» նախագծի աշխատակազմի անդամներին ու երրորդ եթերաշրջանի հաղթող Տիգրան Պետրոսյանին:

Սրբազան հայրը շնորհավորեց Տիգրանին հաղթանակի առիթով՝ կարևորելով գիտելիքի նկատմամբ սերն ու գիտելիքով հաջողությունների հասնելու ձգտումը:

«Արմենիա» հեռուստաընկերության «Ամենախելացին» նախագծի մասնակիցների համար Արարատյան Հայրապետական թեմը սահմանել է մրցանակ՝ «Կրոն» անվանակարգում ամենակտիվ մասնակցի համար: Մրցանակն ուխտագնացության հնարավորություն է դեպի Հայոց Երուսաղեմ:

Դարբնիկում կատարվեց եկեղեցու հիմնարկեք

Սեպտեմբերի 30-ին Արարատյան Հայրապետական թեմի Դարբնիկ համայնքում Արմավիրի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Սիոն եպիսկոպոս Ադամյանի ձեռամբ օծվեցին նոր կառուցվող եկեղեցու հիմնաքարերը, և կատարվեց հիմնարկեքի արարողություն: Սրբազան հորն ուղեկցում էին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցու խորհրդակատար Տ. Շահե քահանա Հայրապետյանն ու Երևանի Ս. Հովհաննես եկեղեցու խորհրդակատար Տ. Պարթև քահանա Մուրադյանը:

Համայնքի անդամները՝ Նորաբացի Ս. Աստվածածին եկեղեցու ու Դարբնիկի հոգևոր հովիվ Տ. Մարտիրոս ավագ քահանա Ավետիսյանի, Աժ պատգամավոր Մուրադ Մուրադյանի, Մասիսի նորընտիր քաղաքապետ Դավիթ Համբարձումյանի և համայնքի ղեկավար Դավիթ Գզիրյանի գլխավորությամբ Սրբազան հորը դիմավորեցին աղուհացով:

Համայնքում հիմնարկեքի արարողության համար ընտրել էին «Հավատքով համախմբված Դարբնիկ» խորագիրը:

Արարողությունը սկսվեց Տերունական աղոթքով: Սրբազան հայրը սրբալույս Մյուռոնով օծեց նախապես ջրով ու գինով լվացված հիմնաքարերը: Եկեղեցու բարերարներն ու համայնքի անդամները 16 քարերը տեղադրեցին եկեղեցու 16 սյուների հիմքերում:

Եկեղեցին կառուցվում է համայնքի անդամների ջանքերով: Գյուղի երիտասարդների նախաձեռնությանը միացել են բարերարներ, արտերկրում ապրող համագյուղացիներ ու համախոհներ:

Եկեղեցու ճարտարապետը Հակոբ Բաբախանյանն է:

Աջակցություն նահատակ զինվորների ընտանիքներին

Հոկտեմբերի 5-ին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդարանում տեղի ունեցավ հանդիպում և դրամաբաշխություն արցախյան վերջին քառօրյա պատերազմում զոհված զինվորների ընտանիքների անդամներին:

Հանդիպումն Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի և Հայոց բանակի հոգևոր առաջնորդության առաջնորդ Գերաշնորհ Տ. Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանի հանդիսապետությամբ սկսվեց Տերունական աղոթքով:

Հանդիպման առիթը Կանադայի հայոց թեմի փոխառաջնորդ, Ս. Երրորդություն եկեղեցու հոգևոր հովիվ արժանապատիվ Տ. Զարեհ ավագ քահանա Զարգարյանի նախաձեռնությունն էր, ով Հայաստան էր եկել հայրենանվեր մի առաքելությամբ: Տեր հայրը որոշել է իր ծննդյան 50-ամյակի առթիվ նվեր ստացած ամբողջ գումարը նվիրաբերել հանուն Հայրենիքի զոհված զինվորների ընտանիքներին:

Նավասարդ Սրբազանն իր երախտիքն ու խոնարհումը բերեց որդեկորույս ծնողներին: Մխիթարության ու երախտիքի խոսքեր ասաց նաև Վրթանես Սրբազանը:

Հայաստան կատարած այցելության ընթացքում Տ. Զարեհ ավագ քահանա Զարգարյանն արդեն այցելել է Արցախ, հանդիպել ու իր աջակցությունն է ցուցաբերել նաև արցախցի զինվորների ընտանիքներին:

«Հայ Եկեղեցին և լրատվամիջոցները» թեմայով եռամսյա սեմինար լրագրողների համար

Հոկտեմբերի 6-ին մեկնարկեց Արարատյան Հայրապետական թեմի տեղեկատվական բաժնի կազմակերպած «Հայ Եկեղեցին և լրատվամիջոցները» խորագրով սեմինարը:

Եռամսյա սեմինարն իրականացվեց ԵՊՀ Ժուռնալիստիկայի ֆակուլտետի հետ համագործակցության շրջանակներում: Նպատակն էր օգնել ապագա լրագրողներին ծանոթանալ Հայ Եկեղեցու առանձնահատկություններին, հոգևոր-եկեղեցական եզրերին, որոնք շատ հաճախ լրատվության մեջ սխալ են մեկնաբանվում:

Դասախոսությունները վարեցին հոգևորականներ, գիտնականներ և լրագրողներ: Սեմինարի ընթացքում մասնակիցներին ներկայացվեցին Հայ եկեղեցու կառուցվածքը, առաքելությունը, տոնածիսական համակարգը, ոսկեդարից մինչ խորհրդային շրջան ընկած ժամանակահատվածի վերլուծությունը, անկախությունից հետո եկեղեցու առջև ծառացած խնդիրներն ու դրանց լուծումները, բիոէթիկային վերաբերող հարցեր և այլն:

Նավասարդ Սրբազանը երիտասարդների հետ խոսեց Ս. Թարգմանիչների ու Ոսկեդարի մասին

Հոկտեմբերի 7-ին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը հանդիպում ունեցավ թեմի երիտասարդների հետ: Հանդիպումը նախաձեռնել էին թեմի երիտասարդաց միությունների անդամները՝ Տ. Պետրոս ավագ քահանա Մալյանի գլխավորությամբ: Հանդիպման առիթը Ս. Թարգմանչաց տոնն էր:

Հանդիպումը սկսվեց Տերունական աղոթքով: Ապա Նավասարդ Սրբազանը խոսեց 5-րդ դարի իրադարձությունների մասին, որոնք հիմք հանդիսացան Հայոց վերազարթոնքի և հայակերտումի:

Սրբազան հայրը հատկապես շեշտեց, որ Ս. Մեսրոպ Մաշտոցը միայնակ հաջողության չէր կարող հասնել: Ուշագրավ է, որ ազգապահպանության տեսլականը կարևոր էր նաև օրվա կաթողիկոս Ս. Սահակ Պարթևի համար: Հենց վերջինս էր, որ գրերի անհրաժեշտության հարցը բարձրացրեց Վռամշապուհ արքայի առաջ, ով երկրի գանձարանը դատարկեց հավիտենական գանձին հասնելու համար: Այդ գանձի շնորհիվ մենք շարունակում ենք մնալ հայ, մտածել, գրել ու ստեղծագործել հայերեն, ունենալ ազգային դիմագիծ:

Սրբազան հոր խոսքով՝ պակաս կարևոր չէր նաև Աստվածաշունչը հայացնելու հանգամանքը: «Ճանաչել զիմաստութիւն և զխրատ, իմանալ զբանս հանճարոյ»: Ահա առաջին նախադասությունը, որը թարգմանվեց: Եվ ճիշտ այդ պատգամով Ս. Մեսրոպը ստեղծեց դպրոց, որը տվեց բազում հանճարեղ սերունդներ: «Առ ոտս աշակերտութեան» սկզբունքով՝ Ս. Մաշտոցի աշակերտները սկսեցին ուսուցանել նոր սերունդներին, թարգմանեցին աշխարհի մտավոր գանձարանի արժեքավոր գործերը և խմորելով՝ կերտեցին հայ մարդու ինքնությունը: Եվ իրավամբ Ս. Մաշտոցով սկսված դարաշրջանն անվանում ենք Ոսկեդար:

Զրույցի վերջում մաշտոցյան շարականներով ելույթ ունեցավ Արարատյան Հայրապետական թեմի «Արարատ» երիտասարդաց միության «Նշխարք» վոկալ անսամբլը, որի գեղարվեստական ղեկավարն է Հեղինե Օհանյանը:

Հանդիպման ավարտին Նավասարդ Սրբազանը Պահպանիչ աղոթքով արձակեց երիտասարդներին:

Տ. Նորայրը պարգևատրվեց ոսկե մեդալով

Հոկտեմբերի 8-ին Արարատյան Հայրապետական թեմի Նոր Նորքի Ս. Սարգիս եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Նորայր ավագ քահանա Բաղդասարյանը Երևանի տոնի առթիվ քաղաքապետ Տարոն Մարգարյանի կողմից պարգևատրվեց ոսկե մեդալով:

Երևանի մշակութային, հասարակական, լրատվական ու գիտական ձեռքբերումների ու ակտիվ գործունեության համար Տարոն Մարգարյանը պարգևատրեց գիտության, մշակույթի, արվեստի գործիչների՝ կարևորելով նաև հոգևոր կյանքում Հայ Եկեղեցու ունեցած մեծ դերակատարումը:

Արարատյան Հայրապետական թեմի հոգևորականաց դասն արդեն երկրորդ անգամ է արժանանում Երևանի քաղաքապետի գնահատանքին: Նախորդ տարի ոսկե մեդալով պարգևատրվել է Տ. Շահե քահանա Հայապետյանը:

Ս. Անանիայի աջը բերվեց Ս. Զորավոր Աստվածածին եկեղեցի

Հոկտեմբերի 11-ին Հայ Առաքելական Եկեղեցին նշեց Ս. Անանիայի և ևս հինգ սուրբ առաքյալների հիշատակության օրը: Այս առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի արտոնմամբ Արարատյան Հայրապետական թեմի Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցի տեղափոխվեց սրբի մասունքակիր աջը: Քահանաների գլխավորությամբ, խաչի ու խաչվառների հետ հավատացյալները թափոր էին կազմել՝ սրբի մասունքը խնկով ու շարականների երգեցողությամբ դիմավորելու համար:

Եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Գրիգոր քահանա Գրիգորյանը մասունքակիր աջը նախ իջեցրեց Ս. Անանիայի մատուռ՝ հայցելով սրբի բարեխոսությունը, ապա՝ եկեղեցում օրհնության կարգ կատարելուց հետո, մասունքակիր աջը դրեց Ս. Խորանին: Մատուցվեց Սուրբ և անմահ Պատարագ:

Նավասարդ Սրբազանը հանձնեց շնորհակալագրեր

Հոկտեմբերի 17-ին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանն ընդունեց թեմի երիտասարդաց միությունների անդամներին՝ թեմի երիտասարդական կառույցների համակարգող արժանապատիվ Տ. Պետրոս ավագ քահանա Մալյանի գլխավորությամբ:

Տեր հայրը Նավասարդ Սրբազանին ներկայացրեց Էրեբունի–Երևան տոնակատարությունների ժամանակ երիտասարդների կատարած կամավորական աշխատանքը՝ նշելով, որ Երևանի քաղաքապետին կից երիտասարդական կառույցների հետ համագործակցությունն ամուր հիմքերի վրա է դրված:

Սրբազան հայրը բարձր գնահատեց երիտասարդների ակտիվությունը, որը դրսևորվում է ոչ միայն հոգևոր, թեմական կյանքում, այլ նաև՝ աշխարհիկ կառույցների ու հատկապես՝ Երևանի քաղաքապետարանի նախաձեռնություններում:

Ապա Սրբազան հայրը երիտասարդներին հանձնեց Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի կողմից տրված շնորհակալագրերը՝մայրաքաղաքի 2798-ամյա տարեդարձին նվիրված «Էրեբունի-Երևան» տոնակատարություններին մասնակցելու և ներդրած ավանդի համար:

Ծառատունկ՝ նվիրված Սուրեն Արամյանի հիշատակին

Հոկտեմբերի 18-ին ԱՀԹ Արտաշատի Ս. Հովհաննես եկեղեցու երիտասարդաց միությունը

խորհրդակատար քահանա Տ. Երվանդ Բաբայանի առաջնորդությամբ կատարեց ծառատունկ՝ նվիրված ապրիլյան քառօրյա պատերազմի ընթացքում զոհված ժամկետային զինծառայող Սուրեն Արամյանի հիշատակին: Երիտասարդները 14 եղևնի տնկեցին զոհված զինվորի տան բակում կառուցված հուշատեղիում:

Դահլիճում լուռ էր, բայց լռություն չկար

Խուլերի աշխարհը լուռ է, իսկ նրանց հասկանալու համար պետք է սովորել լռել: Այդ լռությունն է, որի մեջ խաղաղություն, անկեղծություն ու սեր կա:

Խոսուն լռության լավագույն դասը խուլերը տվեցին լսողներիս հոկտեմբերի 20-ին Երևանի պետական տիկնիկային թատրոնում: Խուլերի միջազգային օրը նշվում է սեպտեմբերի վերջին կիրակին: Արարատյան Հայրապետական թեմի խուլերի համայնքը, թեև ուշացումով, կրկին բեմ բարձրացավ՝ ոչ միայն նշելու խուլերի տոնը, այլև պատմելու այն սիրո ու նվիրումի մասին, որի աղբյուրն իրենց լռությունն է: Բեմ բարձրացան, որ ցույց տան չարի ու բարու և այդ պայքարում՝ բարու հաղթանակը: Բեմ բարձրացան, որ կատակեն, երգեն ու պարեն:

Տոնը սկսվեց լռության մեջ՝ Տերունական աղոթքով: Ողջունելով հանդիսատեսին, Տեր Եսայի քհն. Արթենյանը շնորհակալություն հայտնեց Աստծուն ժեստերի լեզվով խոսելու շնորհին արժանացնելու համար, որ կարողանում է խուլերի հետ լռել՝ լսելու աղմուկի տակ թաքնված գեղեցկությունն ու բարությունը: Իսկ խուլերի հետ աշխատելու, համայնք ձևավորելու առաքելության համար տեր հայրն իր որդիական խոնարհումն ու երախտագիտությունը հայտնեց Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանին, ում տնօրինությամբ ու հանձնարարությամբ տարիներ առաջ նշանակվել է խուլերի հոգևոր հովիվ ու սովորել ժեստերի լեզուն:

Արարատյան Հայրապետական թեմի «Մենք» խուլերի թատրոն–ստուդիայի գեղարվեստական ղեկավար Իննա Հախնազարյանը ներկայացրեց խուլերի ստուդիայի ստեղծման պատմությունն ու ձեռքբերումները: Ամռանը «Մենք» ստուդիան մասնակցեց մնջախաղի միջազգային փառատոնին՝ «Հոսանքին հակառակ» խորագրով ներկայացմամբ: Նրանք իրենց լռության խաղով գրավեցին նոր սրտեր, արժանացան ծափողջույնների ու ոսկե մեդալի:

Հայկական հեքիաթ հրաշագործ Արմենո պապի մասին

Հեքիաթները նման են երազանքներին. դրանք կարող են իրականանալ կամ իրական հիմք ունենալ: Հեքիաթներում և մեր երազանքներում ամեն ինչ կարող է լինել կամ չլինել: Հոկտեմբերի 30-ին Ս. Երրորդություն եկեղեցու դահլիճում հյուրընկալված տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, հեքիաթասաց Արմեն Ճուղուրյանն իր «Արմենո պապը, ով ապրում է Արարատ լեռան գագաթին» գրքույկում պատմում է Արարատ լեռան գագաթին ապրող պապիկի մասին: Հրաշագործ պապը հոգ է տանում աշխարհասփյուռ հայ մանուկներին, պահպանում է նրանց չարից, օգնում ծանր պահերին

և խրատներ տալիս նրանց: Հայկական հեքիաթ և հայի երազանք. լինո՞ւմ է, թե՞ չի լինում:

Այս հարցին փորձեցին պատասխանել Ս. Երրորդություն եկեղեցու կիրակնօրյա դպրոցի սանե-ը, ովքեր կարդացել էին հեղինակի հայրենասիրական և հայագիտական ոգեշնչող պատմվածք-ները և ցանկանում էին անձամբ հանդիպել նրան:

Գրական-երաժշտական ցերեկույթ

Նոյեմբերի 8-ին Հայաստանի գրողների միության դահլիճում տեղի ունեցավ Արարատյան Հայրապետական թեմի Նորք-Մարաշ վարչական շրջանի Ս. Աստվածածին եկեղեցու խորհրդակատար, երգահան ու կոմպոզիտոր Տ. Թովմա քահանա Անդրեասյանի գրական-երաժշտական ցերեկույթը՝ նվիրված Տեր հոր ծննդյան 60-ամյակին: Այդ առթիվ հավաքվել էին նրա ընկերները, գործընկերները:

Տեր հայրը երեկոյի համար առանձնացրել էր այն երգերը, որոնք քիչ են լսվել, ավելի քիչ են ծանոթ հանրությանը: Նա ընթերցեց նաև բանաստեղծություններ, որոնց մի մասն ընդգրկված չէին նրա բանաստեղծությունների հրապարակված վեց գրքերում:

Բաց դաս՝ նվիրված Արարատի Ս. Հակոբ եկեղեցու 150-ամյակին

Նոյեմբերի 17-ին ԱՀԹ Արարատի Ս. Հակոբ եկեղեցում անցկացվեց բաց դաս՝ նվիրված եկեղեցու հիմնադրման 150-ամյակին:

Ողջույնի և օրհնության խոսքով հանդես եկավ եկեղեցու հոգևոր հովիվ Տ Դավիթ քահանա Սահակյանը:

Միջոցառմանը ներկա էին ՊՄՊ Արարատի մարզային ծառայության պետ Ռոման Կարապետյանը, տեղակալ Անահիտ Դալլաքյանը, Արարատ համայնքի թիվ 3 միջնակարգ դպրոցի տնօրեն Բաբկեն Բալայանը, ուսուցիչներ, աշակերտներ, ՏԻՄ ներկայացուցիչներ և այլ պատվավոր հյուրեր:

ՊՄՊ Արարատի մարզային ծառայության պետի տեղակալ Անահիտ Դալլաքյանը ներկայացրեց զեկույց՝ նվիրված Ս. Հակոբ եկեղեցուն, համայնքի պատմությանն ու հուշարձաններին:

Եկեղեցու բակում անցկացված բաց դասն ավարտվեց աշակերտների հայրենասիրական ելույթներով և Տեր հոր օրհնությամբ:

«Երբ մարդ բարիք է գործում, նմանվում է Աստծուն». ՀՕՖ-ի «Բարեկամների խորհուրդ»-ը 10 տարեկան է

Նոյեմբերի 23-ին՝ Երախտագիտության տոնին ընդառաջ, Մոսկվայի տանը կայացավ Հայ օգնության ֆոնդի «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի «Շնորհակալ եմ, որ կաս» միջոցառումը՝ նվիրված ՀՕՖ-ի «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի «Բարեկամների խորհուրդ»-ի 10-ամյակին:

Միջոցառմանը բացման խոսքով և աղոթքով մասնակցեց նաև Արարատյան Հայրապետական թեմի Մասիսի Ս. Գևորգ եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Աշոտ քհն. Սաֆարյանը, ով երկար ժամանակ է, ինչ ամեն շաբաթ այցելում է կենտրոն և հոգևոր աջակցություն ցուցաբերում երեխաներին:

Տեր հայրը ներկաներին փոխանցեց Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տեր Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի հայրական օրհնությունն ու շնորհավորանքը:

Աշնան գույները՝ Նոր Նորքում

Նոյեմբերի 23-ին ԱՀԹ Նոր Նորքի Ս. Սարգիս եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Նորայր ավագ քահանա Բաղդասարյանը մասնակցեց վարչական շրջանի համար 120 մանկապարտեզի աշնանային ուրախ տոնահանդեսին:

Տարվա գունազարդ եղանակին նվիրված միջոցառմանը հյուրընկալվել էին նաև Նոր Նորք վարչական շրջանի ղեկավար Արմեն Ուլիխանյանը, աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի բաժնի աշխատակիցներ, ուսումնական հաստատությունների տնօրեններ և ծնողներ:

Տարբեր ազգերի պարային և երաժշտական կատարումներով երեխաները ներկայացրեցին տարվա ամենագունեղ ու բերքառատ եղանակի առանձնահատկություններն՝ այդ ծաղկաբույլում առանձնակի արժևորելով հայկական աշնան գեղեցկությունն ու հմայքը:

Շախմատ՝ առանց սև ու սպիտակի

Կույր շախմատը բացառիկ հմտություն է, որին տիրապետում են բարձրակարգ և ուժեղ շախմատիստները: Այն պահանջում է մի շարք ունակություններ, մասնավորապես՝ խաղատախտակը պարզորոշ հիշել: Բայց կույր շախմատը և այն շախմատը, որ կույր մարդիկ են խաղում, բոլորվին տարբեր բաներ են: Շատերը զարմանում են, թե ինչպե՞ս կարող է կույր մարդը շախմատ խաղալ:

Նույն տախտակը, նույն խաղաքարերը, նույն կանոները. ոչ մի տարբերություն, միայն պետք է խաղից առաջ փակել աչքերը:

Դեկտեմբերի 2-ին տեսողական խնդիրներ ունեցող անձանց մշակույթի տանը (Արաբկիր) հաշմանդամություն ունեցող մարդկանց միջազգային օրվա առիթով կազմակերպվել էր շախմատի մրցաշար՝ տեսողական և լսողական խնդիրներ ունեցող անձանց համար:

Միջոցառման սպասված հյուրը Արարատյան Հայրապետական թեմի Ս. Սարգիս եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Պետրոս ավագ քահանա Մալյանն էր, ով աղոթքով սկսեց մրցաշարը և ներկաներին փոխանցեց թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի օրհնությունը:

Արդեն երեք տարի է, ինչ Արարատյան թեմը Ս. Աբգար թագավորի տոնի առթիվ թեմի երիտասարդաց միությունների կողմից կազմակերպվող շախմատի ամենամյա փառատոնի շրջանակում համագործակցում է տեսողական խնդիրներ ունեցող անձանց մշակույթի տան հետ:

Ս. Գեղարդի ուխտը հոգևոր նորոգության ճանապարհ

Դեկտեմբերի 3-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին նշեց Հայոց առաջին լուսավորիչներ Ս. Թադեոս և Ս. Բարդուղիմեոս առաքյալների տոնը: Մայր Տաճարում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մատուցվեց Սուրբ Պատարագ: Ս. Պատարագի ընթացքում հանդիսավոր թափորով Մայր Տաճար բերվեց Աստվածամուխ Ս. Գեղարդը, որի սրբությանը հաղորդակցվելու և օրհնությունը ստանալու համար ուխտավորաբար Ս. Էջմիածին էին այցելել բազմաթիվ ուխտավորներ Հայաստանից և այլ երկրներից:

Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի առաջնորդությամբ Մայր Աթոռ էին ժամանել նաև ուխտավորներ՝ թեմի բոլոր համայնքներից:

Սուրբ Պատարագին ներկա էին Հայ Եկեղեցու թեմական առաջնորդներ, Մայր Աթոռում պաշտոնավարող եպիսկոպոսներ, միաբաններ, հայաստանյան թեմերից ժամանած բազում ուխտավորներ, զինվորականներ:

Պատարագի արարողության ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսը Ս. Գեղարդով օրհնեց և արձակեց ներկա ժողովրդին:

Սուրբ Գեղարդն ի տես և ի երկրպագություն հավատացելոց Մայր Տաճարում մնաց մինչև երեկոյան ժամերգության ավարտը:

Հաշմանդամության միջազգային օրվան նվիրված միջոցառումներն Արարատյան Հայրապետական թեմում

Հաշմանդամության միջազգային օրվա առիթով դեկտեմբերի 3-ին՝ Արարատյան Հայրապետական թեմի մի շարք եկեղեցիներում կազմակերպվեցին միջոցառումներ՝ նվիրված հաշմանդամություն ունեցող անձանց: Բացի եկեղեցիներում կազմակերպվող միջոցառումներից, հոգևոր հայրերը այցելություններ կատարեցին տարբեր հաստատություններ:

Ս. Երրորդություն եկեղեցու հոգևոր հովիվ Տեր Պարթև քահանա Մուրադյանի նախաձեռնությամբ Խարբերդի մանկատան սաների համար «Հայաստան» կինոթատրոնում կազմակերպվեց մուլտֆիլմի դիտում:

Արարատի մարզի Կանաչուտ գյուղի Ս. Գևորգ եկեղեցում մարզի 15 գյուղերի 85 հաշմանդամների բաժանվեցին նվերներ և մատաղ:

Արաբկիրի «Արշավիր և Պայծառ Աբրահամյաններ» բարեգործական ճաշարանում կազմակերպվեց տոնական ճաշկերույթ և համերգ, որին աղոթքով և օրհնությամբ մասնակցեց նաև Արաբկիր համայնքի հոգևոր հովիվ Տեր Բաբկեն քահանա Հայրապետյանը:

Նարեկացի արվեստի միությունում տեղի ունեցավ համերգ, որին մասնակցեցին հաշմանդամություն ունեցող երեխաներ Երևանի հատուկ դպրոցներից ու խնամքի կենտրոններից: Համերգը կազմակերպել էր Արարատյան Հայրապետական թեմի Էրեբունի համայնքը՝ Նարեկացի արվեստի միության աջակցությամբ: Համերգային երեկոյին մասնակցեցին Երևանի Լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրի, համար 6 հատուկ դպրոցի, համար 2 հատուկ դպրոցի, Խարբերդի մասնագիտացված մանկատան, Ն. Տիգրանյանի անվան տեսողության խանգարումներ ունեցող երեխաների համար 14 հատուկ դպրոցի, Մարի Իզմիրլյանի անվան մասնագիտացված մանկատան սաները:

Բակային ճամբարներ

Ամառային արձակուրդին երեխաների ազատ ժամանցն արդյունավետ ու հագեցած կազմակերպելու նպատակով հունիսի 1-ից Արարատյան Հայրապետական թեմի մի շարք եկեղեցիներում կազմակերպվեցին ամառային բակային ճամբարներ:

Բակային ճամբարներն ունեն թե՛ մարզական, թե՛ կրթադաստիարակչական նշանակություն: Այստեղ երեխաները սովորում են աղոթքներ, շարականներ, ծանոթանում աստվածաշնչյան հոգևոր պատմություններին: Եկեղեցիների երիտասարդաց միությունների կողմից կազմակերպվում են ինտելեկտուալ և սպորտային խաղեր, երգուպարի ուսուցում:

Եկեղեցուն կից ամառային ճամբարները հնարավորություն են տալիս երեխաներին իրենց արձակուրդները հնարավորինս օգտակար անցկացնել, նոր ընկերներ ձեռք բերել, ուրախ և հագեցած առօրյա ունենալ:

Հոգևոր ուղղվածությամբ բակային ճամբարներ կազմակերպվեցին

- Դավթաշենի Ս. Նահատակաց եկեղեցում
- Բյուրավանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում
- Մասիսի Ս. Թադեոս եկեղեցում
- Նոր Նորքի Ս. Աստվածածին եկեղեցում
- Մարմարաշենի Ս. Գևորգ եկեղեցում
- Արտաշատի Ս. Հովհաննես Ավետարանիչ եկեղեցում

Բացի եկեղեցուն կից կազմակերպվող բակային ճամբարներից, Արգավանդի Ս. Սարգիս եկեղեցու համայնքը Սևանի ափին ճամբարային ծրագիր էր նախատեսել նաև հաշմանդամություն ունեցող 22 երեխայի, կիրակնօրյա դպրոցի սաների, համայնքի անապահով ու բազմազավակ ընտանիքների շուրջ 40 մանուկների համար:

Ճամբարում երեխաները հանգստին ու խաղերին զուգահեռ մասնակցեցին նաև հոգևոր թեմաներով զրույցների: Այս ծրագիրը թեմում իրականացվում է արդեն հինգերորդ անգամ, որին համայնքի անդամների հետ մշտապես մասնակցում են հաշմանդամություն ունեցող երեխաներ Մարի Իզմիրլյանի անվան մանկատնից:

Խաչի քարոզ

Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի օրհնությամբ արդեն մի քանի տարի շարունակ թեմի երիտասարդաց միությունների անդամները միությունների հոգևոր պատասխանատու Տ. Պետրոս ավագ քահանա Մալյանի համակարգմամբ Սուրբ Խաչին նվիրված տոների առիթով իրականացնում են Խաչի քարոզ: Սուրբ Խաչին նվիրված տոները տարվա ընթացքում չորսն են՝ Ս. Խաչի երևման տոն, Խաչվերաց, Վարագ Սուրբ խաչի և Գյուտ խաչի տոն:

Ծրագրի արդյունքում քաղաքային տրանսպորտի միջոցներում աչքուլունքները փոխարինվում

են երիտասարդների նվիրած օրհնված խաչերով:

- Ապրիլի 22-ին Ս. Խաչի երևման տոնի առիթով ծրագիրն իրականացվեց Երևանի Կոմիտաս պողոտայի կանգառներում:
- Սեպտեմբերի 10–ին Խաչվերացի տոնի առթիվ «Խաչի քարոզ» ծրագիրն իրականացվեց Երևանի Գարեգին Նժդեհ փողոցում:
- Հոկտեմբերի 22-ին Խաչի գյուտի տոնի առիթով «Խաչի քարոզ» ծրագիրն իրականացվեց Հալաբյան փողոցում:

Միջինք

Անիրավ տնտեսի կիրակիից հետո, Մեծ Պահքի 24- րդ օրը (2017 թվականին՝ մարտի 22-ը) կոչվում է միջինք: Դա նշանակում է, որ մեծ պահքը հասել է կեսին: «Միջինք» անունը տրվում է Մեծ պասը կիսող օրվան, որը տոնական նշանակություն չունի: Այդ օրն ըստ ժողովրդական ավանդության՝ հայ տանտիկինները թխում են բաղարջ, որի մեջ մետաղադրամ են դնում: Ում բաժին ընկնի այդ դրամը, այդ տարի հաջողություն կունենա:

- Մարտի 2-ին Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ արքեպիսկոպոսի հանդիսապետությամբ առաջնորդարանում երիտասարդական միությունները նշեցին միջինքը՝ պահքի ավանդական հայկական ուտեստների հյուրասիրությամբ, երգուպարով:
- Մարտի 2-ին Արարատյան Հայրապետական թեմի Նորք Մարաշի Ս. Աստվածածին եկեղեցու երիտասարդաց միությունը Տ. Զաքարիա քահանա Ավետիսյանի ու Տ. Թովմա քահանա Անդրեասյանի գլխավորությամբ այցելեց «Մուրացան» համալսարանական հիվանդանոցային համալիր՝ երեխաների հետ միջինքը նշելու:
- Մասիսի Ս. Թադեոս եկեղեցում «Գեղարդ» երիտասարդաց միության անդամները տոնը նշեցին ներկայացմամբ, երգ ու պարով, ազգային խաղերով:
- Արտաշատի Ս. Հովհաննես Ավետարանիչ եկեղեցում տոնը նշվեց միջինքի ավանդական ուտեստների հյուրասիրությամբ:
- Վեդու Ս. Աստվածածին եկեղեցում ժամերգության ավարտից հետո միջինքի օրհնված գաթան եկեղեցու երիտասարդները բաժանեցին հավատացյալներին:
- Արարատի Ս. Հակոբ եկեղեցում տեղի ունենցավ խոկման արարողություն՝ «Միջինք. Մեծ Պահքի կես» թեմայով: Այնուհետև ժողովրդական ծեսով նշեցին միջինքը՝ կտրելով օրվա զարդ համարվող բաղարջ հացը: